

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ուչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Պ Ա Յ Գ Ա Ր Ի

Յ Ե Վ


Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն  
Տ Ա Ս Ը Տ Ա Ր Ի

ԽՅՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1927.





Ի. ՆՈՎԱԿՈՎՆՈՎ



308 (47)

G

Library

338 (47)

# ՊԱՅԲԱՐԻ

Յ Ե Վ

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

## ՏԱՍԸ ՏԱՐԻ

442277  
26171  
17192



11  
СОВЕТСКИЙ СОЮЗ

1947

1947

СОВЕТСКИЙ СОЮЗ

1947

1947

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆԱԽՈՐԵՅԻՆ

Գաղտնիք չե, վոր 1914 թվի իմպերիալիստական պատերազմը համաշխարհային գիշատիչների մի փոքրիկ խումբակի սարքած գործն եր. կապիտալիստական պետությունների մեջ այդ ավազակների ձեռքում ե գտնվում իշխանությունը: Նրանք իրար մեջ են բաժանել ամբողջ աշխարհը: Կապիտալիստական պետություններից ամեն մեկն ունի «իր» գաղութները Ասիայում, Աֆրիկայում, Հարավային Ամերիկայում, Ավստրալիայում: Այդ գաղութների ժողովուրդներին դարձրել են ճորտեր: Ճորտերի աշխատանքը շահագործվում ե չնչին վարձատրությամբ: Նրանց ծաղրում են: Նրանց ծեծում, մտրակում, սպանում. կանանց ու աղջիկներին բռնաբարում են, վաճառում:

Գիշատիչների մի փոքրիկ շայկա տիրացել ե ամբողջ յերկրին, հանքերին, Ֆաբրիկաներին, գործարաններին, նավագնացությանը, յերկաթուղիներին ու բանկերին: Կապիտալիստական ամեն մի յերկիր ունի ավազակ-իմպերալիստների «իր» շայկան: Նրանք անկուշտ են: Այդ շայկաներից ամեն մեկը ձգտում ե գաղութներից իրեն համար ավելի մեծ պատառ ստանալու: Դրա համար ել իմպերիալիստների միջև շարունակ լարված պայքար ե տեղի ունենում գաղութները իրար մեջ բաժանելու, կողոպուտը իրար մեջ բաշխելու համար:

Ուստի և կապիտալիստական ամեն մի պետություն ստեղծում ե իր բանակը և նավատորմիղը, վորպեսզի

պաշտպանի իմպերիալիստ-ավագակները իր խմբակի շահերը: Հենվելով զինված ուժի վրա, ամեն մի այդպիսի պետութուն աշխատում է համաշխարհային թալանից վորչափ կարելի յե մեծ բաժին ձեռք բերել իր կալվածատերերի ու կապիտալիստների համար: Կապիտալիստական պետության դիպլոմատիան—դա մի պայքար է և աճուրդ՝ ավելի մեծ պատառ ձեռք գցելու համար, ճորտերի քանակի, ապրանքներ սաղացնելու, խոնարհ շուկաների համար, ստրկական աշխատանքով ստեղծված եժան հում նյութի համար: Այդ պայքարի ընթացքում տեղի յեն ունենում խմբավորումներ, առևտուր, աճուրդ, վեճեր ու ավագակների իրար դեմ լարած նորանոր դավադրություններ—«միություններ»: Իսկ յերբ կուտակվում են վիճելի շատ հարցեր, պրետենզիաներ, փոխադարձ նախանձ, կրժոտումներ,—այն ժամանակ սկսվում է պատերազմ:

Սկսում են խոսել թնդանոթներն ու պուլեմյոտները: Ավագակները կռվի յեն ուղարկում միլիոնավոր բանվորների ու գյուղացիների, վորոնք դեռ չեն ազատվել կապիտալիստական լծից: Վերջին համաշխարհային պատերազմը շարունակվեց, ընդհանուր առմամբ, չորս և կես տարի: Այդ պատերազմի ընթացքում սպանվեցին տասը միլիոն մարդ, վերազգացվեցին քսանևչորս միլիոն մարդ: Բոլոր ֆրոնտներում ծախսվեց ու փչացվեց մի քանի հարյուր միլիարդ ուրբլի:

Ինչո՞ւմ է կայանում ավագակ - կապիտալիստների ուժը: Ինչի՞ շնորհիվ են նրանք իրենց ձեռքում պահում իշխանութունը միլիոնավոր բանվորների ու գյուղացիների վրա: Այդ կողոպտիչների ուժը նրա մեջ է, վոր ժողովրդական մասսաները դեռևս խավար են ու տգետ: Այդ ավագակներին հաջողվում է հեշտությամբ խաբել ու

վախեցնել, սարսափեցնել: Փողով նրանք գնում են, կաշառում են հողևորականներին, տերտերներին, ուաբբիներին, մոլլաներին, քշյոնձներին (կաթոլիկ քահանաներին) և զանազան միսիոնարներին: Հանուն աստուծո, հանուն կրոնի, աշխատավոր ժողովրդին ներշնչում են, վոր պետք է լինել խոնարհ, պետք է լսել կալվածատիրոջը, պետք է լսել հարուստին, թագավորին:

Գաղութները կողոպտելու և «իր սեփական» բանվորներին ու գյուղացիներին շահագործելու շնորհիվ իմպերիալիստները ահագին հարստություններ են կուտակել: Դրա մի մասը (փոքր մասը) նրանք տալիս-կաշառում են այն գործիչներին, վորոնք ժողովրդական մասսաների վրա ազդեցություն ունեն: Այդպիսով, իմպերիալիստներին հաջողվեց պրոֆմիութենական և սոցիալ-դեմոկրատական շարժման, Ս Ինտերնացիոնալի բյուրոկրատների մեջ ստեղծել դավաճանների և պրովակատորների հեղինակավոր խմբակ. այդպիսիք են—Թոմաս, Բանկուր և Ռենոդել՝ Ֆրանսիայում. Եբերտ, Շեյդեման, Նոսկե՝ Գերմանիայում: Այդ դավաճանները իրենց ազատություն տվին պատերազմի ժամանակ՝ խզելով բանվորների միջազգային յեղբայրական կապերը, և բացարձակապես պաշտպանեցին պատերազմող բուրժուազիային:

Բացի կրոնից, դավաճանությունից և ամեն տեսակի խաբեբայությունից, բուրժուազիան պահում է վարձու պոլիցիա և ժանդարմերիա: Ազատության և արդարության ձգտելու համար աշխատավորության արած ամեն մի փորձը ճնշվում է կոպիտ ուժով: Բանտեր, տաժանակիր աշխատանքի վայրեր, կախաղաններ, գնդակահարություններ,— ահա թե ինչով են ավազակներն ու թալանչիները պատասխանում բանվորներին ու գյուղացիներին, յերբ սրանք հաց, հող և ազատություն են պահանջում:

Ցարական Ռուսաստանն ևս մասնակցեց արյունոտ

սպանդանոցին: Ռուս կալվածատերերն ու կապիտալիստներն ևս ցանկացան մասնակից լինել ընդհանուր թալանին: Նրանց կամքը կատարեցին ցարը և ցարական չինովնիկները: Բայց զառամած Ռոմանովները անընդունակ դռնվեցին կապիտալիստական հաղթական պատերազմ վարելու համար: Ցարը և իր ծառաները միանգամայն անպետք դուրս յեկան. հարբեցողներ, շվայտներ, անմիտ, անկամ, — նրանք իրենց դեմ հանեցին ազգաբնակչությադ, բոլոր դասակարգերը:

Փետրվարյան հեղափոխությունը սրբեց ցարական ինքնավարությունը այնպես դյուրությամբ, ինչպես սրբում են սարդի վոստայնը: Բայց ինքնակալ ցարի անկումից հետո ծառացավ ամենակարևոր հարցը. — ո՞վ պետք է վերցնեն իշխանությունը այդ մեծ յերկրում: Հեղափոխությունը կատարեցին Պետրոգրադի (այժմ՝ Լենինգրադի) բանվորներն ու զինվորները: Նրանք կազմեցին Բանվորների և Չինվորների Սորհուրդներ: Այդպիսի խորհուրդներ կազմվեցին Ռուսաստանի բոլոր քաղաքներում: Ֆրոնտում և թիկունքում Սորհուրդների ղեկավարությամբ բոլոր զորամասերում կազմվեցին զինվորական զանազան կոմիտեներ:

Ֆիզիքական ուժալ իշխանությունը գտնվում էր բանվորների ու զինվորների (այսինքն՝ զինվորական շինելիներ հազած գյուղացիների) ձեռքին: Շնորհիվ բանվորների և գյուղացիների միության, դյուրությամբ գրավվեցին ցարական պալատները, բանտարկվեցին ցարական մինիստրները, հենց ինքը ցարը և իր ընտանիքը հակողության տակ առնվեցին: Շնորհիվ բանվորների և գյուղացիների միության, ամբողջ Ֆրոնտը միացավ Պետրոգրադի խորհրդին, իսկ գեներալ Իվանովի՝ հեղափոխության դեմ դուրս յեկնելու փորձը բնաջինջ արվեց երկու-յերեք օրում:

Պետք էր իշխանությունը հանձնել Սորհուրդների  
 ձեռքը: Սակայն կալվածատերերն ու կապիտալիստները  
 խորամանկ գտնվեցին և իշխանությունը Սորհրդի ձեռքից  
 կորզեցին: Վորո՞նք էյին հեղափոխության իսկական խըն-  
 դիրները: Լենինը այդ խնդիրները դեռևս մինչև Փետր-  
 վարը նշել էր պարզ և վորոշ, իսկ այնուհետև նա Բոյլ-  
 շեիկյան կուսակցության պահանջները կրկնեց Փետրվա-  
 րից հետո: Այն է՝ 1) Պետք էր անմիջապես սկսել բա-  
 նակցություններ զինադադարի և հաշտության մասին: Բանվորներին և գյուղացիներին հարկավոր չեյին ավա-  
 զակային պատերազմներ: Բանվորներն ու գյուղացիները  
 թույլ չեն տալ, վոր իրենց ստրկացնեն, վոր իրենց թա-  
 լանեն: Բանվորներն ու գյուղացիները կարող են հերո-  
 սաբար կռվել հեղափոխության համար, սոցիալիզմի հա-  
 մար, բայց նրանք վոշ մի կաթիլ արյուն չեն զոհաբերի  
 հողուտ իրենց թշնամի կալվածատերերի ու կապիտա-  
 լիստների: 2) Պետք է գյուղացիներին հող տալ, դա խլե-  
 լով կալվածատերերից, ցարից, վանքերից ու յեկեղեցիներ-  
 րից: Այն բոլոր հողերը, կալվածքը, ինվենտարը, վոր  
 դարավոր ստրկության ընթացքում կալվածատերերը խլել  
 են գյուղացիներից, պետք է վերադարձվեն աշխատավո-  
 րությանը առանց վրկանքի: 3) Պետք է սահմանել բան-  
 վորական հսկողություն ֆաբրիկաների, գործարանների,  
 բանկերի, տրանսպորտի վրա: Պետք է կապիտալիստներին  
 զրկել ավազակային եկամուտների աղբյուրներից: 4) Պետք  
 է ազատագրել բոլոր ճնշված ազգություններին: Շատ  
 ազգություններ, վորոնց նվաճել է ինքնակալությունն ու  
 միացրել Ռուսաստանին, գտնվում էյին սարսափելի ճընշ-  
 ման տակ, աղքատության ճիրաններում, տգիտության  
 խավարում: Պետք է իսկույն և յեթ նրանց տալ ինքնո-  
 րոշման լայն ազատություն: 5) Պետք է իշխանությունը  
 հանձնել Սորհուրդներին: Բանվորների և գյուղացիների

միութեանը պետք է պատկանի ամբողջ իշխանութիւնը: Նրանք են, վոր արտադրում են այն ամենը, ինչ անհրաժեշտ է կյանքի համար: Նրանք էլ պետք է կյանքը կառավարեն: 6) Պետք է միանալ ուրիշ յերկրների և ժողովուրդների հեղափոխական բանվորների ու գյուղացիների հետ: Պետք է ստեղծել բանվորների իսկական, հեղափոխական ամուր շաղկապված խմբերնացիոնալ և միջազգային պրոլետարիատի ու գաղութներէ աշխատավորութեան ընդհանուր ուժերով վոչնչացնել կապիտալիստական բռնութեան ու թալանի կազմակերպութիւնը: Ավագակութեան, կաշառումի, մասսայական սպանութիւնների, դավաճանութեան և բռնութեան արյունոտ տաճարի ավերակների վրա մենք պետք է ընդհանուր ուժերով կառուցենք աշխատավորների յեղբայրական սոցիալիստական միութիւնը:

Այսպես է լենինի և նրա բոլշևիկյան կուսակցութեան ծրագիրը: Բայց մենշևիկներին ու բուրժուազիային հաջողվեց իրենց կողմը գրավել եսերներին և մենշևիկներին: Այդ կուսակցութիւնները առաջ պայքարում էին ցարիզմի դեմ: Խոսքով նրանք ևս իրենց կոչում էին սոցիալիստներ, բայց գործով — գուրս եկավ վոր խաբեբաներ ու դավաճաններ են:

Ցարիզմի որոք մենշևիկներին ու եսերներին ևս, ինչպես և բոլշևիկներին, նստեցնում էին բանտերը, գազանոցներն հետապնդում: Դրա շնորհիվ նրանք ևս վայելում էին մասսաների համակրանքն ու վստահութիւնը: Նրանք ևս խոսքով ճառում էին ազատութիւն համար, հաշտութեան համար, հողի և սոցիալիզմի համար: Դրա շնորհիվ նրանք ձեռք էին բերել ազդեցութիւն և աջակցութիւն էին վայելում: Վոչ բոլոր աշխատավոր մասսաների համար եր պարզ այն ճշմարտութիւնը, վոր հավատալ կարելի չէ

միայն բանավոր դասակարգի ավանդար-  
դին: Այն ժամանակ դեռևս հեղափոխական փորձը շատ  
քիչ էր:

Այդ հանգամանքը ոգտագործեցին բուրժուազիան և  
կալվածատերերը: Մենշևիկները և եսերները ոգնությամբ  
կազմվեց Միլյուկովի, Գուշկովի, կնյազ Լյովի, միլիոներ  
Տերեշչենկոյի, շառլատան կերենսկու, նենգ դավաճան մեն-  
շևիկ Ծերեթելու, շաղակրատ եսեր Չերնովի և ուրիշների  
բուրժուական-կալվածատիրական կառավարությունը:

Մենշևիկները և եսերները ժողովրդին խոստանում  
էին և՛ հաշտություն, և՛ հող, և՛ հաց, և՛ սոցիալիզմ. բայց  
վորպեսզի այդ բոլոր խոստումները իրագործվեն, նրանք  
իշխանությունը հանձնեցին վոչ թե խորհուրդներին, վոչ  
թե բանվորներին ու գյուղացիներին, այլ թալանչի կալ-  
վածատերերին ու բանկիրներին: Կուրորեն՝ զենք տվին  
նրանց ձեռքը: Կարծես թե կալվածատերերը իրենք կամո-  
վին իրենց կալվածքները կտային գյուղացիներին, իսկ  
բանկիրներն իրենց դրամարկղները բաց կանեյին, — վեր-  
ցրու, ով ինչքան ուզում է:

Եսերները ու մենշևիկները ամենանենգ խաբեբայու-  
թյունը կայանում է նրանում, վոր հեղափոխությունը  
կատարեց ժողովուրդը, իսկ նրանք իշխանությունը հանձ-  
նեցին ժողովրդի թշնամիներին: Դավաճանությունը բոլոր  
հանցագործությունների ծնողն է: Եսեր-մենշևիկները ցած  
եյին գլորվում՝ կատարելով հանցագործություն հանցա-  
գործության յետևից:

Սոստանալով հաշտություն, նրանք ֆրոնտում հար-  
ձակում էին կազմակերպում գերմանացիների վրա: Ձին-  
վորները զայրանում էին: Գնդերը հրաժարվում էին  
կովի դուրս գալ: Ձինվորները մասսաներով թողնում էին  
ֆրոնտը: Կերենսկին մահվան սլառիժ սահմանեց այն հե-  
ղափոխական զինվորների նկատմամբ, վորոնք պայքարում

Եյին հաշտութեան համար, անմիտ, արյունոտ պատերազմը դադարեցնելու համար:

Ժողովրդին հող խոստանալով, նրանք, կալվածատերերին պաշտպանելու համար, հրապարակեցին հատուկ որենք. կերակրում եյին խոստումներով, հորդորում եյին սպասել մինչև հիմնադիր ժողովի գումարումը: Գյուղացիներին առաջարկում եյին սպասել այն հիմնադիր ժողովի վորոշումներին, վոր պետք է գումարեր կալվածատեր կնյազ Լյվովը... Գյուղացիների համբերութեանը հատավ: Նրանք սկսեցին կալվածատերերի հողերը բռնագրավել իրենց ուժերով: Եսեր-մենշևիկներն ու կապետները գյուղացիների դեմ ուղարկեցին պատժիչ վաշտեր:

Ազգերին ազատութեան խոստանալով, նրանք կռվում եյին Ֆինլանդիայի, Ուկրայինայի, Վրաստանի և ուրիշ ժողովուրդների դեմ, վորոնք փորձում եյին կազմել իրենց ազգային ինքնավարութեանները:

Բանվորներին սոցիալիզմ խոստանալով, նրանք սկսեցին հալածել բոյլշևիկների պրոլետարական կուսակցութեանը, փակեցին «Պրավդա» թերթը, բանտարկեցին հեղափոխական բանվորներին, հետապնդում եյին Լենինին, վորին ցանկանում եյին սպանել: Պրոլետարիատի առաջնորդ Լենինը ստիպված յեղավ անցնել պոլսոյլ աշխատանքի:

Բանվորները զայրացան, նրանք այդ դավաճանութեանը պատասխանեցին Խորհուրդների վերընտրութեաններով, ուր մեծամասնութեանն անցավ բոյլշևիկների կողմը: Բոյլշևիկների կողմն անցան զինվորները, մատրոսները, գյուղացիները: Աշխատավորութեանը փորձով համոզվեց, վոր միայն բոյլշևիկներն են, վոր իր ոք պայքարում են աշխատավորութեան ազատութեան համար:

Հոկտեմբերի նախորեյին ստեղծվեց դասակարգային ուժերի հետևալ դասավորումն. մի կողմում եյին կալվածատերերը, կապիտալիստները, ցարական զենքաւորները,

ավագակները, սպեկուլյանտներն ու իրենց ազդեցությունը  
կորցրած եսեր-մենշեկները. մյուս կողմում—բանվոր-  
ները, գյուղացիները, զինվորները, մատրոսները, ճնշված  
ազգությունների աշխատավորությունը: Հոկտեմբերյան  
հեղափոխությունը, Լենինի և բոլշևիկյան կուսակցու-  
թյան տաղանդավոր ղեկավարութեամբ, փառավոր հաշվե-  
հարդար կատարեց: Հոկտեմբերյան հեղափոխությունը  
վոչնչացրեց ավագակների իշխանությունը, ստեղծեց բան-  
վորա-գյուղացիական իշխանությունը, հարթեց ճամպան՝  
սոցիալիզմի շինարարութեան և համաշխարհային հեղափո-  
խութեան հաղթանակի համար:



## ՊԱՅՔԱՐԻ ՏԱՍԸ ՏԱՐԻ

Սպեկուլյանսների ավագակոչքունները: Պետոքյան խայ-  
խայումը: Բուրժուազիայի դավաճանակոչքունը: Գավադո-  
քուններ: Արսասահմանցիները, կադեսները, Եսեր-մեկ-  
շեվիկները ավերում են յերկիրը: Հոկտեմբերը փրկում է  
բանվորներին ու գյուղացիներին ներքին ու միջազգային  
սրկոչքունից:

Հոկտեմբերի նախորդակին ժողովրդի ճնշող մեծա-  
մասնությունը—բանվորները՝ քաղաքներում, գյուղացի-  
ները՝ գյուղերում և զինվորները՝ թե թիկունքում և թե  
Ֆրոնտում—հրաժարվում ենին յենթարկել կերենսկու-  
բուրժուական մինիստրությանը: Բուրժուազիան զգում  
էր իր դրության խախուտ լինելը: Նա սլատրաստում էր  
դավադրություն դավադրության յետևից: Նա գաղտնա-  
բար համաձայնության յեկավ թե Անտանտայի և թե գեր-  
մանական յունկերների հետ՝ միայն թե կարողանա ժողո-  
վրդական հուզված մասսաները մի կերպ խեղդելու կամ  
հանգստացնելու: Հակահեղափոխությունը ծրագրել էր  
Պետրոգրադից հեղափոխական գարնիզոնը դուրս հանելու,  
վոր համագոր կլիներ՝ գերմանացիներին հանձնելու ու  
թալանի յենթարկել տալու և՛ Պետրոգրադը, և՛ կրոնշտադտը,  
և ամբողջ Մերձբալթիքը:

Այդ դիվային ծրագիրը պատրաստում էր Գլխավոր  
Շտաբը՝ կերենսկու ղեկավարությամբ: Յեթե դա հաջողվեր՝

1) Երբ ծրագրերը յերկիրը ամբողջովին կքայքայեր, կկործա-  
 ներ: Նախկին իմպերիայի ամբողջ մասերից, ինչպես են՝  
 Ուկրաինան, Կովկասը, Ղրիմը, Սիբիրը և այլն, ուղղակի  
 կզրկվեյինք, և դրանցից ամեն մեկը կսկսեր փրկություն  
 փորոնել առանձին-առանձին: Այդպիսի քայքայման եյին  
 ձգտում մեր՝ թող թույլ տրվի ասելու՝ դաշնակիցների (Ան-  
 տանտայի) դիպլոմատիական ներկայացուցիչները: Նրանք,  
 մանավանդ անգլիական հյուպատոս Բյուկենին, արդեն  
 սկսում եյին ցնծալ՝ թե ահա շուտով կհաջողվի Ռուսաս-  
 տանը գաղութ դարձնել, թալանչիներից յուրաքանչյուրի  
 համար Ռուսաստանից բավական յուղալի պատառ սլոկե-  
 լով: Նրանք փողով ոգնում եյին կերենսկու կառավարու-  
 թյանը և ռուսական ամբողջ սև-հարյուրականներին, միա-  
 ժամանակ չնչին փշրանքներ տալով նաև աջ եսերներին  
 ու մենչևիկներին: Յիլինդրավոր ջենտլմենները ձգտում  
 եյին, փորպեսզի՝ 1) Ռուսաստանը շարունակի պատերազ-  
 մել ու իր թնդանոթային մսով շարունակի իրենց աջակ-  
 ցել Գերմանիայի դեմ, 2) փորպեսզի Ռուսաստանը այդ  
 պատերազմում արյունաքամ լինի, տկարանա ու կորցնի  
 իր ներքին կարելիություններն ու այդպիսով լիովին քայ-  
 քայվի:

Հենց այդ միջոցին սպեկուլյանտներն ու թալանչի-  
 ներն ել իրենց գործն եյին կատարում: Վառելանյութը  
 հետզհետե պակասում եր. ֆաբրիկաներն ու գործարան-  
 ները մեծ ընդհատումներով եյին աշխատում, այն ել բա-  
 ցառապես ֆրոնտի կարիքների համար: Իսկ սպառողական  
 ապրանքները (թե ֆաբրիկային և թե տնտեսական) ժամե-  
 ժամ հալվում եյին: Տրանսպորտը լիովին քայքայված  
 եր՝ զբաղված լինելով զինվորական ամեն տեսակի տեղա-  
 փոխություններ կատարելով, ինչպես նաև ֆրոնտից զին-  
 վորների մասսաների տարերային փախուստով: Բոլոր կար-  
 գի վազոնները, դրանց թվում և ապրանքային տեսլուշ-

կաները, — և վոչ միայն վագոնները, այլ նաև բուֆեր-  
ները, վագոնների կտուրները բռնված եյին գորշ շինելներ  
հագած մարդկանցով: Վրա տվեց մի չեղած սով: Դրանից  
ոգտվեցին սպեկուլյանտները՝ վորպեսզի ժողովրդական  
այդ դժբախտությունից շահեն: Ապրանքները թագցվում  
եյին, գները բարձրացվում, իսկ ուրբուլ արժեքն ընկնում  
եր: Ցարական փողերի (Ռոմանովների փողերի) հետ միա-  
ժամանակ լույս ընծայվեցին այսպես ասած «կերենկի-  
ները» և դումայի փողերը, և դրանք բոլորը միատեսակ  
գործիք եյին սպեկուլյանտների ձեռքերում՝ սովի մատ-  
նած բնակչությանը խաբելու համար: Շնորհիվ փողի ար-  
ժեքի անկման, տպարանները չեյին հասցնում հար-  
կավոր չափով փողեր պատրաստելու: Գործի դրվեցին  
տպագրական բոլոր միջոցները (եւ չենք հաշվում կեղծ  
փողեր տպագրողներին, վորոնք նույնպես բավական գու-  
մարներ եյին շուկա դուրս բերում): Բայց այդ բոլորը  
չե: Ստիպված յեղան պատվեր տալ Ամերիկային, վորտե-  
ղից՝ Վլադիվոստոկի վրայով՝ մեզ մոտ եյին փոխադրվում  
ամբողջ նավերով բեռնավորված թղթադրամներ՝ Ռոմա-  
նովների հինգ ուրբլիանոցներ և այլն: Ամերիկան արդեն  
փաստորեն իր ձեռքն եր վերցրել հսկողությունը ուսա-  
կան ֆինանսների վրա, դրա փոխարեն կերենսկուն չըն-  
չին փոխառություն տալով:

Մինչհոկտեմբերյան Ռուսաստանը, յեթե չունենար  
կովի ընդունակ յգրկաթյա դիսցիպլինայով գողված հե-  
ղափոխական դասակարգ, վորին դեկավարում եր նրա  
ավանգարդ բոյլշևիկյան կուսակցությունը՝ անհողողող  
կամքի տեր ու տաղանդավոր լենինի գլխավորությամբ, —  
Ռուսաստանը կդառնար մի գաղութ: Չանազան ազգի հար-  
յուր հիսուն միլիոն բանվորներ ու գյուղացիներ, դրանց  
թվում նաև ուսականը, կընկնեյին ճորտության ճիրան-  
ները: Նրանց վզին կդնեյին պատերազմական և մինչպատե-


քաղմական պարտքերի ծանր լուծը, հսկայական տուրքեր՝ հողուտ կալվածատերերի, հողուտ բուրժուա-առևտրականների, ֆաբրիկանոնների, բանկիրների, ինչպես նաև հողուտ համաշխարհային իմպերիալիստ-թալանիչների: Ռուսաստանին սպառնում էր լինել յերկրորդ Հնդկաստան, կամ ավելի վատթար՝ վիճակի մեջ՝ ընկնել: Ահա այն հեռանկարը, ահա այն «վաղվան ուրը», վոր սպասում էր դավաճան կերենսկու Ռուսաստանին:

Հոկտեմբերյան հեղաշրջումը վերջ տվեց բազմամիլիոն յերկրի փլզումին, քայքայումին. միաժամանակ նա սկիզբ դրեց նրա աշխատավոր դասակարգերի փոխադարձ սերտ կապին՝ միանգամայն նոր մարտական հեղափոխական-սոցիալիստական հիմունքներով: Հոկտեմբերյան հեղափոխությունը միայն ազգային հեղափոխություն չէ: Նա հանդիսանում է համաշխարհային հեղափոխության համար յելակետ: Նրա բախտը սերտ կապված է բոլոր յերկրների բանվորների բանվորական շարժման հետ, դադութային և կիսադադութային ստրուկների ազատագրական շարժման հետ: Բայց նա դրա հետ միասին մի հարվածով սրբեց նաև ազգային դավաճանության, ստորության և ճորտության նախատինքը, վոր կախված էր մեր վերածնվող հեղափոխական յերկրի վրա, շնորհիվ կապիտալիստների, նրանց լակեյների և ամեն տեսակի կերենսկիների ազահության ու վաճառվող հատկության: Մենք այս գրքույկի վերջում ամփոփ կներկայացնենք Հոկտեմբերի նվաճումների արդյունքները առաջին տասնամյակում. իսկ այստեղ վերհիշենք, թե ինչպիսի ժառանգություն ստացավ Հոկտեմբերը, և թե ինչ ամոթալի ու ստորացուցիչ վիճակի մեջ էր գտնվում Ռուսաստանը, յերբ հոկտեմբերի 25-ի (հին տոմարով) գիշերը բանվոր դասակարգը յերկրի իշխանությունը իր ձեռքը վերցրեց:

Հեղաշրջում: Լեւինի ցուցմունքներ:

Չեւականորեն՝ ճակատագրական կոնֆլիկտը, վոր ծագեց, մի կողմից՝ Պետրոգրադի բանվորների ու զինվորների պատգամավորների բոյլշևիկյան նոր խորհրդի, և մյուս կողմից՝ կերենսկու կառավարութեան միջև—հետեւանք եր Պետրոգրադի գարնիզոնին ֆրոնտ դուրս բերելու հրամանին: Վոր կերենսկու կառավարութեանը ցանկանում եր ազատվել Պետրոգրադի հեղափոխական գարնիզոնից,—այդ մասին հայտնի եր դեռ շատ առաջ: Բոյլշևիկյան կուսակցութեան ստեղծած Ռազմա-հեղափոխական կոմիտեն ամենասերտ կապեր եր ստեղծել զորանոցների հետ, նախագգուշացնելով զինվորներին, վոր նրանց շուտով կցանկանան հեռացնել Պետրոգրադից և բացատրելով նրանց, թե ինչու կերենսկուն անհրաժեշտ ե նրանցից ազատվել: Ռազմա-հեղափոխական կոմիտեն ամեն մի զորամասում ուներ իր եմիսարը և ուշադիր հետևում եր բոլոր փոփոխութեաններին: Այն միջոցին, յերբ հակահեղափոխութեան շտաբը պատրաստվում եր սլաշտպանող ուժերից զրկել Պետրոգրադը և քաղաքն իմպերատոր Վիլհելմի արյունարբու յունկերներին հանձնել,—այդ միջոցին հեղափոխութեան շտաբը պատրաստվում եր իշխանութեանը բռնագրավել: Համաձայն Լենինի՝ պողպուլիայից տրված ցուցմունքների, դեպի Պետրոգրադ շարժվեցին Բալթիքի ռազմանավերը, կրոնշտադտի մատրոսները: Փարբիկաներից ու գործարաններից ընտրվեցին կարմիր-զվարդիականների լավագույն մասերը, ինչպես նաև զորանոցներից՝ զինվորների հուսալի մասերը: Յեւ 1917 թ. հոկտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը կազմակերպված ու ամուր գողված հեղափոխական պրոլետարիատը, չքավոր գյուղացիութեան հետ դաշնադիր, Չմեռային Պալատի վրա պրոլետարական դիկտատուրայի կարմիր դրոշակը պարզեց: Համաշխարհային այդ գիշերը

ՀՀԷՅՀ 22777



ծագեց լույսի ճառագայթը, լուսավորելով ամբողջ մարդկութիւնը: Յերեկվա ստրուկը ասպատամբեց, հաղթեց: Նա իր ձեռքն առավ իշխանութիւնը, սպառազինվելով ու թըշնամուն զինաթափ անելով, նա բացարձակ կռիվ հայտարարեց և՛ իր հայրենի, և՛ համաշխարհային բուրժուազիային:

Կերենսկու անկումը, Չմեռային Պալատի դրամումը բոյլընկնելի կողմից, Կերենսկու փախուստը, նրա մինիստրներին ձերբակալելը և այլն տևեց ընդամենը մի քանի ժամ և դրա համար համեմատաբար քիչ ջանք դործ դրվեց: Շաղակրատներն ու դավաճանները կորցրին մասսաների աչքում իրենց վստահութիւնը: Ինչպես Փետրվարին չգտնվեց մեկը, վոր լուրջ կերպով դուրս գար Ռոմանովների տունը պաշտպանելու, այնպես ել Հոկտեմբերին չգտնվեց մեկը, վոր պաշտպաներ Կերենսկուն: Յեթե հակահեղափոխութեանը չաջակցեյին Անտանտայի յերկրները, յեթե վերջիններս նրան չոգնեյին վողով, գենքով և ինտերվենցիայով, — մեզ մոտ քաղաքացիական պատերազմը կհասցվեր մինիմումի:

*Դեկրետ հողի մասին: Բանվորների յեւ զյուզացիների դաշինք:*

Հեղաշրջման հետևալ ուրը, բանվորներին և զինվորներին պատգամավորներին և համագումարը միացավ գյուղացիական համագումարին և հրապարակեց դեկրետ հողի մասին: Հայտարարվեց՝ վոր թե կալվածատերերին, թե յեկեղեցիներին ու վանքերին պատկանող ամբողջ հողը, ինվենտարը, կալվածքներն ու ագարակները, բոլոր շենքերը խլվում են դրանց սեփականատերերից և հանձնվում գյուղացիութեան: Այդպիսով, շատ պարզ ու հասարակ կերպով վերջ դրվեց բազմադարյան անարդարութեանը: Առանց մի կոպեկ փրկանքի վերադարձվեց գյուղացիներին

այն, ինչ նրանցից թալանված եր եղել հնում և ինչի համար արյուն եյին թափել բոլոր գյուղացիական ապստամբությունները Ռուսաստանում:

Յուրաքանչյուր գյուղացու համար պետք է պարզ լիներ, վոր նոր բոյլշևիկյան իշխանությունը բանվորագյուղացիական է: Յերևի քիչ չեյին այնպիսի գյուղացիներ, վորոնք կասկածում եյին, թե արդյո՞ք այս իշխանությունը կայուն կլինի և թե արդյո՞ք կարող կլինի որենքը կյանքում իրագործել: Բայց չեր կարող լինել և վոչ մի գյուղացի, բացի կուլակներից և հարուստներից, վոր ցանկանար քար գցել նոր իշխանության վրա, ոգնել կերենսակուն բոյլշևիկների դեմ: Գյուղացին մի՞թե կարող է ինքն իր թշնամին լինել: Չե՞ վոր ուրիշ վորևե կառավարություն, բացի բոյլշևիկյանից, բացի խորհրդայինից, հողը կխլի և կավաճատերերին կվերադարձնի:

Հողի մասին դեկրետն ընդունվեց հենց իրենց գյուղացիների կամքի համաձայն: Խորհուրդների համագումարին ներկայացվեցին 242 վայրերից գյուղացիական նակազներ՝ Ռուսաստանի զանազան ծայրերից: Դեկրետը շատ կարճ է. դա կազմված է ընդամենը չորս կետերից և հողը հանձնում է աշխատավոր գյուղացիությանը: Ահա թե ինչպես լենինը բացատրեց այդ որենքի եյությունը. — «Գլխավորն այն է, վոր գյուղացիությունը լիովին համոզվեց, վոր գյուղում այլևս կավաճատերեր չկան, վոր իրենք գյուղացիներն են վճռում բոլոր հարցերը, իրենք գյուղացիներն են կառուցում իրենց կյանքը»:

*Դեկրետ հաշտարյան մասին: Բանվորների, գյուղացիների յեւ զիևվորների պայքարը ինպերիալիստական պատերազմի դեմ: Կոյ միջազգային պրոլետարիատին:*

Հենց նույն որն ընդունվեց դեկրետ հաշտության մասին: Այդ դեկրետի առաջին կետում ասված է — «Հոկ-

տեմբերի 25-ի հեղափոխութեամբ ստեղծված Բանվորա-  
Քյուղացիական Կառավարութիւնը, վոր հենվում է Բան-  
վորա - Քյուղացիական Պատգամավորների Խորհրդի վրա,  
առաջարկում է բոլոր ժողովուրդներն և նրանց կառավա-  
րութիւններին անհապաղ սկսել բանակցութիւններ ար-  
դարացի դեմոկրատական հաշտութեան մասին»:

Այնուհետև դեկրետում բացատրվում է, թե բանվոր-  
ները և գյուղացիները ինչպիսի հաշտութիւն են արդա-  
րացի համարում: Դեկրետում հայտարարում է, վոր վե-  
րացվում է գաղտնի դիպլոմատիան: Կառավարութիւնը  
պարտավորվում է հրապարակել բոլոր գաղտնի պայմա-  
նագրերը, վորոնք կնքված են հոգուտ կալվածատերերի-  
կապիտալիստների: Կառավարութիւնը առաջարկում է  
պատերազմող յերկրների բոլոր կառավարութիւններին և  
ժողովուրդներին անհապաղ կնքել զինադադար յերեք ամիս  
ժամկետով: Դեկրետի վերջում կոչ է արված առանձնա-  
պես Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի գիտակից բան-  
վորներին: Բանվորների, գյուղացիների և զինվորների հա-  
մառուսական համագումարը հիշեցնում է Արևմտյան Յեվ-  
րոպայի բանվորներին այն հերոսական ժամանակը, յերբ  
նրանք կարողանում էին կռվել վորպես իսկական հեղա-  
փոխականներ: Դեկրետը նրանց կոչ է անում հեղափոխա-  
կան ապստամբութեան և մեզ աջակցելու՝ հաշտութեան  
գործը հաջողութեամբ պսակելու համար: Իսկական դեմո-  
կրատական և արդարացի հաշտութիւնը—աշխատավորնե-  
րին և բնակչութեան շահագործվող մասսաներին նույնպես  
տանում է դեպի ազատագրումն ամեն տեսակի ստրկու-  
թիւնից ու շահագործումից: Ահա ինչ ասաց Լենինը հաշ-  
տութեան այդ դեկրետի առթիւ. — «Կառավարութիւն-  
ները և բուրժուազիան ամեն ջանք գործ կդնեն, վոր-  
պեսզի միանան ու արյունախեղդ անեն բանվորական և  
գյուղացիական հեղափոխութիւնը... Բայց պատերազմի

յերեք տարիները մասսաներին բավական բան սովորեցրին... Բանվորական շարժումը հաղթող կհանդիսանա ու ճանապարհ կհարթի հաշտութեան ու սոցիալիզմի համար»:

Հեղափոխութեան մեծ առաջնորդը ճիշտ էր նախատեսել: Մենք այդ կտեսնենք ստորև:

Բանվորների յեւ աշխատատեղի վերակառուցման ցնծությունը: Մասնավորապէս հեղափոխական ինֆլուպործները յայտնում են ինչ յեւ բոլորովին կուսակցության ղեկավարութեամբ:

Պետրոգրադում — ֆաբրիկաներում, գործարաններում, գործանոցներում և գյուղացիութեան ներկայացուցիչների (վորոնք քաղաք էին յեկել) միջև տիրում էր ուրախ հուզմունք: Բանվորներն իսկույն զգացին, վոր իշխանութեանը գտնվում է պրոլետարական բոլշևիկյան կուսակցութեան յերկաթյա ձեռքերում: Լենինի հենց առաջին ճառում Սորհուրդների համագումարին հայտարարվեց. «Մենք իսկական բանվորական հսկողութեան ենք սահմանել արտադրութեան վրա: Այժմ մենք սովորել ենք աշխատել համերաշխ: Այդ մասին վկայում է մեր կատարած հեղափոխութեանը: Մենք ունենք մասսայական կազմակերպութեան այն ուժը, վորն ամեն ինչ կհաղթի և պրոլետարիատին կհասցնի մինչև համաշխարհային հեղափոխութեան: Ռուսաստանում մենք պետք է անմիջապէս զբաղվենք պրոլետարական սոցիալիստական պետութեան կառուցումով: Կեցցե՛ համաշխարհային սոցիալիստական հեղափոխութեանը»:

Բանվորների առաջ էր կանգնած անվախ առաջնորդը, զլուխը բարձր բռնած, հավատարիմ ու անյերկբայ: Յերբ Լենինի հետ ենք — հաղթանակը ասպահովված է. ահա այն

խորը զգացմունքը, վոր տիրել էր բանվորական մասսաներին, ինչպես նաև զինվորներին ու գյուղացիներին:

Պետրոգրադում Սմոլնին, ուր ժողովի յեր հավաքված աշխարհիս առաջին բանվորա-գյուղացիական հանրապետության ժողկոմխորհը, բոլոր հեղափոխականների համար կենտրոն դարձավ: Ով վոր ընդունակ էր իր կյանքը տալու սոցիալիզմի գործի համար, բանվորների ու գյուղացիների համար, նա դիմում էր Սմոլնի՝ կարգադրություններ ստանալու, ցուցմունքներ ստանալու: Սմոլնին դարձավ հեղափոխության եներգիայի յեռացող կաթսա, վորից շարժիչ ուժեր էյին տարածվում ամեն կողմեր: Իսկ հեղափոխական գործերը—անթիվ, անհամար էյին...

Պետք էր մայրաքաղաքը ապահովել սլարենով: Պետք էր ապահովել ռազմամթերքի անընդհատ արտադրությունը՝ հակահեղափոխության հարձակման հանդեպ զինվելու համար: Պետք էր բռնագրավել կառավարական բոլոր կենտրոնական հիմնարկությունները և սրանց տիրանալ ու կառավարել: Պետք էր գորանոցներում ապահովել կարգը և այնտեղից դուրս վճռտել բույն դրած եսերներին, մենշևիկներին: Պետք էր խիստ սլայքար մղել սպեկուլյացիայի դեմ, սաբոտաժի ու կաշառակերության դեմ: Մի խոսքով, սլետք էր հսկայական յերկրի մայրաքաղաքին տեր դառնալ և կառավարել: Բայց այդ քիչ էր: Հաղթանակը միմիայն մայրաքաղաքում — վոչ մի արդյունք չէր տա: Վորսլեսզի կիրառվեր հաշտության այն քաղաքականությունը, վոր նշել էր հեղափոխությունը, սլետք էր լիովին տիրանալ Ֆրոնտին, ինչպես նաև գլխավոր հրամանատարի շտաբին: Վորսլեսզի գործադրվեր հողի վերաբերյալ որենքը, սլետք էր բոյլշևիկյան ուժին ընթացք տալ ամբողջ յերկրում—յուրաքանչյուր գավառում, յուրաքանչյուր գյուղում:

Պաշտածատերերի, կապիտալիստների, շինովնիկների, եստեր-  
ների յեւ մեկնշեւիկների սարսաժն ու հակահեղափոխա-  
կան ընդդիմադրութիւնը: Աեսրոգրադի քանկորները քունա-  
գրաւում են պեսական հիւսնարկութիւնները յեւ դրանց  
սիրանում:

Իշխանութիւնը վերցնելն այնքան դժվար չէ, վոր-  
քան — այդ պահպանելը, իսկ ամենագլխավորը — բոլորին  
ստիպել դրան յենթարկվելու: Մինչդեռ բոյլշեիկների դեմ,  
բանվորների, գյուղացիների և զինվորների դեմ միացել  
եյին ազնւականները, կալվածատերերը, կապիտալիստները,  
սրանց եսեր-մենշեիկյան լակեյներն ու սարսափած ծա-  
ռայակամ դասերը: Չինովնիկները հրաժարվում եյին կա-  
տարել նոր իշխանութիւն կարգադրութիւնները, նրանք  
սովոր եյին լսել բարիններին, աղաներին, վախենում եյին  
սրանց ամենակարող ուժից: Բայց կատարել «խռովարար»  
ժողովրդի, բանվորների և գյուղացիների կամքը, — մունդիր-  
ներ հագած այդ պարոնները չեյին ցանկանում: Չինով-  
նիկութիւն այդպիսի անմիտ, ամբարտաւան վերաբեր-  
մունքը դեպի բանվոր դասակարգը, սկզբում ոգնեց հա-  
կահեղափոխութիւնը՝ մեզ սաբոտաժ հայտարարելու: Կազ-  
մվեց «Հասարակական Փրկութիւն Կոմիտե», վորի մեջ  
համախմբվեցին Փետրվարի բոլոր սովերները, սկսած Պու-  
րիշկեիչից և վերջացրած Չերնովով, — բոլորը միացան՝ հան-  
դեպ բանվորների և գյուղացիների: Հայտարարվեց սաբո-  
տաժ, այսինքն՝ հայտարարվեց, վոր պետական հիմնարկու-  
թիւններ ի բոլոր ծառայողները չպետք է ներկայանան ծա-  
ռայութիւն՝ բոյլշեիկյան կոմիսարներին մոտ, իսկ ոտճիկ-  
ներն այդ ժամանակամիջոցի համար նրանց կվճարի հիշ-  
յալ կոմիտեն:

Չինովնիկութիւն դեմ պայքար մղելուց բացի, կային  
և ուրիշ՝ ավելի կարևոր խնդիրներ: Մարտական գլխավոր

կադրերը պետք էր դուրս բերել Կերենսկու դեմ, վոր փորձում էր, գեներալ Կրասնովի կողակալին գնդի գլխավորութեամբ, հարձակվել հեղափոխական Պետրոգրադի վրա:

Մյուս կողմից՝ պետք էր ամբողջ ուժերը լարել՝ ձեռք գցելու համար գլխավոր հրամանատարութեան շտաբը, բանակի հրամանատարական գործը բոյլշևիկներին յենթարկել և կապ հաստատել ամբողջ սլովինցիայի հետ:

Կերենսկին՝ ցարական գեներալ Վրասնովի հետ դաշնակցած՝ դուրս է գալիս հեղափոխության դեմ: Կերենսկու փախուսք:

Հեղաշրջումի գիշերը Կերենսկուն հաջողվեց փախչել: Նա փախավ, վորպեսզի իր շուրջը համախմբի ժամանակավոր կառավարութեանը հավատարիմ զորամասերը և դրանց շարժի Խորհրդային Իշխանութեան դեմ: Յեւ ո՞ւմ գտավ: Հոկտեմբերյան հեղափոխութեան մեջ ամենանշանակալիցն այն փաստն է, վոր եսերմենշևիկյան դեմոկրատիայի սլաշտսլանութեան համար, ընդդեմ բանվորների, գյուղացիների և բոյլշևիկյան կուսակցութեան, միայն մեկ ուժ գտնվեց. դա կողակների գունդն էր՝ սևհարյուրակալին գեներալ Կրասնովի գլխավորութեամբ: Բացի այդ գնդից, ուրիշ վոչ մի զորամաս չցանկացավ կռվել Խորհրդային Իշխանութեան դեմ: Ի պատիվ շարքային կողակների պետք էր ասել, վոր դրանք ևս շուտով հրաժարվեցին հարձակվել Պետրոգրադի վրա: Միայն յերկու որ սրմյանց վրա կրակեցին Պետրոգրադն ու Յարսկոյե Սելոն. յերկու որից հետո սկսվեցին բանակցութեանները կռվող «կողմերի» միջև: Բոյլշևիկյան սլարլամենտյորները — բանվորներն ու մատրոսները — ներկայացան կողակներին և նրանց պատ-

մեցին ամբողջ ճշմարտությունը հեղափոխության նպատակներին մասին: Նրանք կողակներին ասացին, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը վճռել ե ամբողջ Իշխանությունը հանձնել Խորհուրդներին, ամբողջ հողը՝ գյուղացիներին, հաշտություն կնքել և խաղաղ ապրուստ տալ ժողովրդին, կալվածատերերին-կապիտալիստներին վճռել և բանվորներին տեր դարձնել Ֆաբրիկաներին ու գործարաններին: Մինչև վերջ լսելով բոլշևիկյան այդ ճշմարտությունը և դա իրանց մեջ քննելով, կողակները հրատարակեցին շարունակել կռիվը ընդդեմ բոլշևիկներին: Նրանք վճռեցին բանտարկել կերենսկուն և հանձնել Խորհրդային Իշխանության ձեռքը: Բայց կերենսկուն գտնել արդեն հնարավոր չեղավ: Կողակների խորհրդակցությունների միջոցին կերենսկին գաղտնաբար փախել եր ավտոմոբիլով: Դա—կերենսկու վերջին փախուստն եր: Ահա այդպիսի խայտառակ վախճան ունեցավ պատահամբ, բախտի բերմամբ հրապարակ նետված այդ վախկոտ ցուցամուրը, վոր իրեն յերկրորդ Նապալիոն եր յերևակայում:

Պայքար հաշտության համար: Գլխավոր հրամանատարի շքաբի դիմադրությունը: Ժողկոմիտրիի նախագահ Լեևիևը հետացնում ե գլխավոր հրամանատար Գուխունիևին: Նշանակվում ե նոր գլխավոր հրամանատար:

Բայց Խորհրդային Իշխանությունը չեր կարող հանդիստ լինել այդ հաղթանակից հետո: Պետք եր անհապաղ կնքել հաշտություն, ժողովրդին խաղաղ ապրուստ տալ: Վորովհետև դաշնակիցները (Անտանտան) Խորհուրդների Համագումարի արած՝ ընդհանուր զինադադարի և հաշտության բանակցությունների վերաբերյալ առաջարկին չպատասխանեցին, ապա և ժողկոմիտրիը առաջարկեց զբլխավոր հրամանատարին՝ գեներալ Դուխոնինին՝ անմիջա-

պես բանակցել գերմանական հրամանատարութեան հետ հաշտութիուն կնքելու համար: Սակայն գեներալ Դուխոնինը հրաժարվեց ժողկոմխորհի պահանջը կատարել: Ի պատասխան այդպիսի հակահեղափոխական հանդգնութեան, Լենինը անմիջապես հեռացրեց գեներալ Դուխոնինին և նրա տեղը կարգեց բոյլշևիկ պրապորշչիկ Կուիլենկոյին:

Կոչ եւ արվում զինվորների մասսաներին յեղբայրանալու յեւ զինադասարի համար անմիջակաւորեն բանակցութիւններ սկսելու:

Միաժամանակ, ժողովրդական կոմիսարների Խորհուրդը ռադիոյով դիմեց հենց զինվորների մասսաներին՝ նրանց՝ կոչ անելով հաշտութեան գործը իրենց ձեռքը վերցնելու: Բոյլշևիկյան կուսակցութիւնը մասսաների կուսակցութիւնն է: Նա արտայայտում է մասսաների կամքը: Նա հենվում է մասսաների զիտակցութեան, ակտիվութեան և ինքնագործնելութեան վրա: Նրա ամենաաւիայլուն հաղթանակները—հենց իրենց՝ աշխատավորների հաղթանակներն են:

Կոչը ռադիոյով դիմում էր բոլոր զորամասերի կոմիտեներին, հեղափոխական բանակի բոլոր զինվորներին և հեղափոխական նավատորմի թուր մատրոսներին: Այդ կոչը վորոտի պես տարածվեց հսկայական ֆրոնտում և ուրախացրեց հաշտութեան համար անկեղծ պայքարողների սրտերը: Կոչը ստորագրել էին «Ժողկոմխորհի Նախագահ Վ. Ուլիանով (Լենին) և Ռազմ-ժողկոմ ու Գլխավոր Հրամանատար Կուիլենկո»:

Սկսվեց նոր շրջան: Միջազգային պատերազմը փոխվեց քաղաքացիական պատերազմի, ինչպես նախատեսել էր Լենինը: Հեղափոխութեան այդ համարձակ քայլի դեմ, վոր ուզում էր անմիջապես հաշտութիւն կնքել, միջազ-

գային իմպերիալիզմը մոբիլիզացիայի յենթարկեց իր բո-  
լոր ուժերը: Անդլիայի և Ֆրանսիայի, Գերմանիայի, Ամե-  
րիկայի և ուրիշ յերկրների արյունարբու կապիտալիստ-  
ները համերաշխ միացան, միակերպ ընդդիմադրություն  
ցույց տվին բոյլշևիկյան հաշտությանը: Ավազակները սո-  
վոր եյին հաշտությունը կնքել «բարձրում», զանազան  
գեներալների միջև, և այն ել այն պայմանով, յերբ սլարտ-  
վող կողմը սլատշած կերպով կվճարի հաշտության համար:  
Զինվորների մասսային նրանք սովոր եյին նայել, վորպես  
հոտի (նախիր) վրա, վորպես թնդանոթային մսի վրա:  
Պատմության մեջ առաջին անգամն եր, վոր նրանց հետ  
խոսում եյին ըմբոստացած և հեղափոխականորեն կազմա-  
կերպված մասսայի լեզվով:

«Հաշտությունը չի կարող կնքվել միայն բարձրում,—  
ասաց Լենինը,—հաշտությունը պետք ե կնքել ցածրում:  
Մենք մազաչափ անգամ չենք հավատում գերմանական  
գեներալիտետին, բայց մենք հավատում ենք գերմանա-  
կան ժողովրդին: Մինչև վոր զինվորը ակտիվ մասնակցու-  
թյուն չունենա գլխավոր հրամանատարների կնքած հաշտու-  
թյան գործում, այդ հաշտությունը չի կարող կայուն լինել»:

Ահա այսպես ե խոսում հեղափոխության լեզուն, մի  
հեղափոխություն, վոր կոչված ե կազմակերպելու տասնյակ  
միլիոնավոր ժողովրդին՝ պատմական մեծ գործքերի համար:

Համաշխարհային պատերազմը վերջացնել պրոլետարական  
հաշտոթյամբ—այդ կարող եր ակնել միայն համաշխարհա-  
յին հեղափոխոթյունը: Հողը պատրաստ եր: Հեղափոխու-  
թյան այդ հաշտոթյան գործին խանգարեց Յերկրորդ  
Ինտերնացիոնալի կուսակցությունների դավանանքոթյունը:

Հաշտության բանակցությունները հաջողությամբ վա-  
րելու համար անհրաժեշտ եյին երկու հանգամանք. 1) Ռու-

սաստանում իշխանության գլուխ պետք է անցնեն այն դասակարգը, վորը իսկապես անկեղծորեն և մինչև վերջ ցանկանում է խաղաղ ապրել իր հարևանների հետ, վորն անկեղծորեն և միշտ հակառակ է ավազակային պատերազմների: Այդ առաջին պայմանը ամբողջովին իրագործված էր: Ռուսաստանի պրոլետարիատը և նրա բոլշևիկյան կուսակցությունը իրենց պարտքը կատարել էին, բայց այդ մեկ հանգամանքը քիչ էր: 2) Հարկավոր էր, վոր գոնե Յեվրոպայում ևս, վորպես մեզ հետ պատերազմող յերկրներում (Գերմանիա, Ավստրիա), ինչպես նաև «դաշնակիցների» յերկրներում (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա), բանվոր դասակարգը դուրս գար բուրժուազիայի դեմ ու հրամայողաբար և ուլտիմատիվ կերպով սահանջեր հաշտություն:

Հոկտեմբերյան հեղափոխությունը սկիզբ դրավ մեծ գործի: Պրոլետարիատի իշխանությունը հաստատելով մեկ յերկրում, նա կոչով դիմեց ուրիշ ժողովուրդներին: Բոլշևիկները արդյոք իրավացի՞ էին յենթադրելու, վոր իրենց կոչը արձագանք կգտնի: Անպայման իրավացի էին: Գերմանիայում և Ավստրիայում սպառվել էին պարենավորման բոլոր միջոցները, ժողովուրդը սովի էր մատնված. բանվորները՝ գործարաններում, նույնիսկ այնպիսի գործարաններում, ուր ռազմամթերք էին պատրաստում, սընվելու համար հարկավոր պարեն չէին ստանում: Դազդահների մոտ հաճախակի էին դառնում քաղցից ուշագնացության դեպքերը: Բանակը և նավատորմիդը հոգնած ու ծայրաստիճան հյուժված էին: Հաճախակի էին դառնում անհնազանդության դեպքերը նույնիսկ պողպատյա դիսցիպլինա ունեցող գերմանական բանակում: Պատահում էին ուղղակի ասլատամբության դեպքեր, դրանց թվում նաև ասլատամբություն գերմանական նավատորմիդում: Սկսվեցին գործադուլային հուզմունքներ Գերմանիայում ու Ավս-

տրիայում և զինված ընդհարումներ՝ բանվորների ու վոստիկանական ախրաննիկների միջև: Այս բոլոր փաստերը բոյլընկյան կուսակցութեան իրավունք էին տալիս նկատի ունենալու և պնդելու, վոր Արևմտյան - Յեվրոպական հեղափոխութեանը շատ հեռու չէ: Ֆրանսիայում դրութեանը նույնպես լավ չէր: Այնտեղ ժողովուրդը արյունաքամ էր լինում: Տերրիտորիայի բավական մեծ մասը ավերվեց ու անապատ դարձավ: Թե իր և թե Բելգիայի անոթեան փախստականների հսկայական մասսան պահանջում էր խնամք ու սնունդ: Ֆրոնտի գիծը անցնում էր, կարելի չէ ասել, յերկրի սրտի վրայով: Համարյա թե չկար մի ընտանիք, վորից մեկն ու մեկը սպանված չլիներ: Յերկրի տնտեսութեանն ու ֆինանսները բոլորովին քայքայված էին: Անգլիայի դրութեանն ևս փայլուն չէր: Նրա նավատորմիդը մեծ կորուստներ ունեցավ, մանավանդ ստորջրյա նավատորմիդի գործնեյութեան շնորհիվ: Լոնդոնը յենթարկվեց ողային ումբակոծութեան: Անգլիան ստիպված յեղավ իր պատմութեան մեջ առաջին անգամ կազմակերպել ցամաքային բազմամիլիոն մշտական բանակ: Ցամաքում և նավատորմիդում կրած մեծ կորուստները, ինչպես նաև ընդհանուր ֆինանսական քայքայումը խորը դժգոհութեան առաջ բերին լայն մասսաներում:

Կասկած չկա, վոր յեթե գերման-ավստրիական պրոլետարիատը մեզ հետևեր ու իր նոյեմբերը\*) սարքեր վոչ թե 1918 թվին, այլ 1917-ին, մեր Հոկտեմբերից անմիջապես հետո, — համաշխարհային հեղափոխութեանը վորոտի պես կպայթեր յեվրոպական նաև ուրիշ յերկրներում ու դեմոկրատական հաշտութեան գործը կապահովվեր: Բայց գլխավորապես ո՞վ խանգարեց համաշխարհային հեղափո-

\*) Ինչպես հայտնի չէ, գերմանական հեղափոխութեանը տեղի ունեցավ նոյեմբերին, բայց ուսականից մեկ տարի հետո, այն է՝ 1918 թ. նոյեմբերին: Այդ հեղափոխութեան նկարագրութեանը մենք դեռ կվերադառնանք:

խոսթյան ուժերի ծավալմանը: Բոլոր փաստաթղթերը, հոկտեմբերից հետո համաշխարհային ամբողջ պատմութիւնը, ցույց են տալիս, վոր համաշխարհային հեղափոխութիւն գլխավոր խանգարողները հանդիսացան սոցիալ-դեմոկրատները: Ամենալավ որինակը հանդիսանում է Գերմանիան, ուր բանվոր դասակարգը ավելի լավ է կազմակերպւած: Տասնյակ տարիների ընթացքում Գերմանիայի բանվոր դասակարգը կազմակերպւում ու դաստիարակւում էր գերմանական յերբեմնի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի շարքերում: Բանվորները սովորել էին յենթարկւել այդ կուսակցութիւն կոչերին ու կարգադրութիւններին: Այդ կուսակցութիւն ազդեցութիւն տակ էին գտնւում բանվորների թե պրոֆեսիոնալ և թե կոոպերատիւ կազմակերպութիւնները, վորոնք միլիոնավոր անդամներ ունեյին: Բայց բուրժուազիան կարողացավ իր կողմը գրավել սոցիալ-դեմոկրատիայի ազդեցիկ գործիչներին, ինչպես նաև պրոֆամիութենական բյուրոկրատիային, գաղութային իր թալանից սրանց բաժին հանելով: Սոցիալ-դեմոկրատիայի և պրոֆամիութիւնների ահա այդ ազդեցիկ գործիչները, կաշառւելով, համաշխարհային պատերազմ հայտարարելու մոմենտին դավաճանեցին բանվոր դասակարգին և միացան բուրժուազիային՝ ընդդէմ բանվոր դասակարգի և ընդդէմ ժողովրդի: Ահա այդ դավաճանները իրենց ստոր գործը շարունակեցին պատերազմի ամբողջ ընթացքում՝ ոգնելով Վիլհելմ թագավորին ու բուրժուազիային, ամեն կերպ աջակցելով սրանց հեղինակութիւնը բարձր պահել մասսաների վրա: Հենց նույն այդ մարդիկն էին, վոր նենգորեն դավաճանեցին ամենակրիտիքական ըոպելյին, յերբ Գերմանիայի ու Ավստրիայի բանվորները բնազդորեն համախմբւել էին ուսական հեղափոխութիւն շուրջը, վորպեսզի դա պաշտպանեն Բրեստի հաշտութիւն բանակցութիւնների միջոցին:

Բրեսի հաշտության բանակցությունների սկիզբը: Պերման-  
նիայի յեւ Ավստրիայի հեղափոխականներէն սրամաղրված  
բանվորները մեր կողմն էյին: Մեր դեմ էյին—նուսական  
յեւ արսասահմանյան կաշվածատերերն ու կապիտալիստ-  
ները, ինչպես նալեւ դաւաճան ու պրոպագանդա տար-  
ները, մեկնելիկները յեւ գերմանական սոցիալ-դեմոկրա-  
տիայի ազդեցիկ գործիչները:

Պերմանական հրամանատարական թագավորական  
կազմը ստիպված յեղավ մեզ հետ սկսել բանակցություն-  
ներ հաշտության մասին: Ուղիղն ասած, այդ հրամանա-  
տարությունը ավելի շուտ կուզենար շարունակել հարձա-  
կումը դեպի Ռուսաստանի խորքը, քան բոյլընկների հետ  
միասին նստել մեկ սեղանի շուրջը և խոսակցել միջազ-  
գային հաշտության սկզբունքների մասին: Բայց մեր հե-  
ղափոխական զինվորների մասսաների անմիջական առն-  
չությունը գերմանական զինվորների մասսաների հետ վա-  
րակ եր մտցրել գերմանական ահուպները և բավականա-  
չափ նպաստել եր յունկերական դիսցիպլինայի քայքայ-  
մանը գերմանական բանակի շարքերում: Այդ պայմաննե-  
րում, մեզ վրա հարձակվել՝ առանց զինադադարի փորձ  
անելու, գերմանական հրամանատարության կողմից մեծ  
ուսկ կլիներ: Նա Գուխոնինից ավելի խելացի գտնվեց:  
Բանակցություններն սկսվեցին և բանակցությունների վայր  
նշանակվեց Բրեստ քաղաքը, ուր և մեկնեց Խորհրդային  
կառավարության պատգամավորությունը: Հանգամանքները  
բանակցություններ վարելու համար չափազանց ծանր էյին:  
«Իաշնակիցները» մեզ չէյին պաշտպանում: Նրանք հրա-  
ժարվում էյին հաշտության քաղաքականությունից: Այդ-  
պիսով մենք մեն-մենակ էյինք կանգնած կենտրոնական Պե-  
տությունների հանդեպ: Մյուս կողմից՝ հենց մեր հայրենի  
բուրժուազիան, մեր հայրենի կալվածատերերը, մեր հայ-



գլխավոր կոմիտեյի մեջ, վորպես անդամներ՝ դավադրական նպատակներով: Նրանց նպատակն էր՝ այդ կոմիտեն պայթեցնել ներսից: Գտնվելով կոմիտեյում, նրանք միաժամանակ կապ հաստատեցին Վիլհելմի հետ, Բադենի պրինց Մաքսի հետ, ախրանկայի հետ, գեներալ Հինդենբուրգի հետ: Նրանք բանվորներին համոզում էին իսկույն և յեթ դուրս չգալ, նրանց խոստանալով ավելի համապատասխան վայրկյան ընտրել յեկույթի համար: Նրանք համոզում ու խարում էին, հայտարարելով, վորպես թե, ըստ իրենց ունեցած տեղեկությունների, բանակցությունները Բրեստում ընթանում են բարեհաջող: Նրանք ախրանկայի ձեռքն էին տալիս ավելի հեղափոխական բանվորներին: Նրանք, վերջապես, ախրանկայի ձեռքը տվին բանվորների մասսայական վճռական ժողովը, վորը և շրջապատվեց զինված յունկերներով: Բանվորներին ուժով ցրեցին. շատերը վիրավորվեցին ու բանտարկվեցին: Ահա գերմանական սոցիալ-դեմոկրատիայի այն ստոր, դավաճանական քայքայիչ դերը հեղափոխության ամենադժվար ընթացքին: Այդ ամոթալի դավաճանությունը յերբեք չի մոռանա բանվոր դասակարգը:

Յերբ հասնի համաշխարհային հոկտեմբերի ընթացք, այդ ստոր դավաճանները պիտի կանգնեն գերմանական և համաշխարհային պրոլետարիատի դատաստանի առաջ: Նրանք այդ զգում են և, ինչպես գիշերային մարդասպանը վախում է արևածագից, այդպես և Յերկրորդ Ինտերնացիոնալի դավաճանները վախենում են համաշխարհային հոկտեմբերի մերձեցումից: Բայց դա կալայթի: Այդ պայթյունն անխուսափելի յե: Բուրժուազիան այդ լավ է նախատեսում՝ ամեն կերպ արյունախեղղ անելով ազգային ըմբոստություններն արթնացող Արևելքում, ամեն կերպ արյունախեղղ անելով պրոլետարական-հեղափոխական շարժումներն Արևմուտքում:

Պայի՛ս ուժի՛ ու դավաճանութեան ազդեցութեան սակ խոր-  
հրդային Իշխանութունը ստիպված էր ստորագրել Բրեստի  
ժամեր հաշտութունը: Բայց այդ հաշտութունը հանդիսա-  
նում է Լեհիևի մի զարմանալի մանյովր: Գաղարի միջո-  
ցով — դեպի Հոկտեմբերյան հաղթանակ: Ոպոզիցիայի  
սխառը յեւլ լեհիևյան սակսիկայի ուղիղ շինելը:

Վերոհիշյալ պատճառների և առանձնապես գերմա-  
նական սոցիալ-դեմոկրատիայի դավաճանութեան հետևան-  
քով, Բրեստի բանակցությունները վերջացան նրանով, վոր  
հաշտությունը կնքվեց մեզ համար չափազանց ստորացու-  
ցիչ ու ծանր պայմաններով: Մեզ ստիպեցին զիջել մեր  
տերրիտորիայի հսկայական մասը (Ֆինլանդիա, Ուկրա-  
յինա և այլն), վոր յենթարկվեց գերմանական ոկկուպա-  
ցիայի: Մեզ ստիպեցին վճարել հսկայական կոնտրիբուցիա:  
Բայց Խորհրդային պատգամավորությունը Բրեստում բա-  
նակցությունները ձգձգում էր ինչքան կարող էր, վոր-  
պեսզի, նախ՝ ժամանակ շահե, և յերկրորդ՝ վորպեսզի իր  
հեղափոխական յելույթներով ու հայտարարություններով  
դիմե գերմանական պրոլետարիատի ու գերմանական զին-  
վորների մասսաների հեղափոխական գիտակցութեանը: Գեր-  
մանական գեներալները զգում էին Հոկտեմբերյան հեղա-  
փոխութեան ազդեցությունը գերմանական մասպանների  
վրա: Յերկյուղ կրելով վոր վարակը ե՛լ ավելի կտարածվի,  
նրանք կոպտորեն ընդհատեցին բանակցությունները, նեն-  
գորեն խախտեցին զինադադարը և հարձակում սկսեցին  
Պսկովի ու Պետրոգրադի վրա: Դրությունը կրիտիքական  
դարձավ: Հին ցարական բանակը քայքայված էր, զինվոր-  
ները թողնում էին Ֆրոնտը, վայր ձգում գեները: Միայն  
շտապով կազմած բանվորական կարմիր գվարդիականների  
վաշտերով կռվելը գերմանական կանոնավոր բանակի դեմ  
անմտություն կլիներ: Այդ կնշանակեր — գերմանական իմ-

պերիալիստ թալանչիների ձեռքը հանձնել Հոկտեմբերի բա-  
լոր նվաճումները: Միանգամայն պարզ էր, վոր հեղափո-  
խությունը պետք է ժամանակ շահեր՝ դադար ստանալու  
համար, իր շարքերը կազմակերպելու, նոր և ավելի բարդ  
կռվին ուժեր հավաքելու համար: Միանգամայն պարզ է,  
վոր այդ նպատակի համար անհրաժեշտ էր ժամանակա-  
վորապես համաձայնել հաշտության թեկուզ ամենածանր  
պայմաններին:

Սակայն այդ պարզ միտքը իսկույն չըմբռնեցին ամենքը:

Բրեստի հաշտության դեմ էլին պայքարում ձախ ես-  
երները,—այդ ֆրազյորները, վորոնք պահանջում էին,  
վոր դատարկ ձեռքերով կռվենք գերմանական արտիլե-  
րիայի դեմ: Նույնիսկ բոյլշևիկների շրջանում առաջ յեկավ  
ոպոզիցիա Բրեստի հաշտության դեմ: Այդ ոպոզիցիան,  
իհարկե, իրեն ձախ անվանեց: Նա նույնպես, ինչպես և  
ձախ եսերները, պահանջեց հրաժարվել Բրեստի պայմա-  
նագրից և հեղափոխական պատերազմ հայտարարել գեր-  
մանական իմպերիալիզմին: Լենինի ստրատեգիական մեծ  
խելքը ամեն ջանք գործ դրեց, վորպեսզի համոզե կուսակ-  
ցությանը և յետ կասեցնե նրան ձախ ֆրազներից ու ան-  
միտ գործերից: Լենինի շնորհիվ էր, վոր Հոկտեմբերյան  
հեղափոխությունը ձեռք բերեց այն դադարը, վորը և հա-  
ջողությամբ ոգտագործվեց:

Ի՞նչով է բացատրվում ոպոզիցիայի սխալը, 1) Առա-  
ջին՝ նրանով, վոր ոպոզիցիան տարվեց ներքին ֆրոն-  
տում ունեցած մեր վճռական հաղթանակներով: Մենք հեշ-  
տությամբ և վճռական ջարդ տվինք կերենսկուն՝ Գատչի-  
նայի տակ: Մենք հեշտությամբ և վերջնականապես ջար-  
դեցինք յունկերների յելույթը Մոսկվայում: Յերկու որվա  
ընթացքում մենք կրեմլից վճռեցինք սպիտակներին և  
Մոսկվայում հաստատեցինք ու ամրացրինք Խորհրդային  
իշխանությունը: Այսպիսի վճռական հաջողություններ հե-

դափոխութիւնն ունեցալ նաև մի շարք ուրիշ վայրերում,  
ուր սպիտակները փորձեր եյին անում կազմակերպելու հա-  
կահեղափոխական խռովութիւններ: Յերկրորդ՝ բանվո-  
րական մասսաները համարյա ամբողջովին բոյլշևիկների  
կողմն եյին: Բանվորների շրջանում եսեր-մենշևիկյան ազ-  
դեցութիւնը դերոյի եր հավատարմել: Յերրորդ՝ ամեն  
կողմից լուրեր եյին հասնում, վոր գյուղացիները ապս-  
տամբել են կալվածատերերի դեմ և բռնագրավում են  
կալվածատերերի հողերն ու գույքը: Չորրորդ՝ թիկուն-  
քում և ֆրոնտում զինվորների մասսաների տրամադրու-  
թիւնը ամբողջովին Հոկտեմբերյան հեղաշրջման կողմն եր:  
Բուրժուական կալվածատիրական դասակարգերը ստիպված  
եյին փախուստ տալ: Նրանք այլևս անընդունակ եյին թե-  
կուզ ամենափոքրիկ դիմադրութիւն ցույց տալու յերկ-  
րում: Մեկ խոսքով, յեթե շլիներ արտաքին թշնամին,  
յեթե մեր դեմ շլիներ համաշխարհային իմպերիալիզմը  
(գերմանական ու դաշնակիցների), մեր հաղթանակը կա-  
տարյալ կլիներ: Հոկտեմբերյան հեղաշրջումի ամբողջ առա-  
ջին շրջանը, մինչև Բրեստյան հաշտութիւնը, իրենից ներ-  
կայացնում ե հեղափոխութեան կատարյալ ցնծութիւն:  
Ահա այդ ցնծութիւնն եր, վոր կուրացրել եր ձախ ուղ-  
ղիցիոներների դյուրահավատ միտքը: Նրանք չեյին նկա-  
տում, վոր մենք չնայած շատ ուժեղ եյինք յերկրի ներ-  
սում, սակայն արտաքին թշնամու նկատմամբ այն ժա-  
մանակ դեռևս միանգամայն անուժ եյինք: Նրանք գերա-  
զնահատում եյին գերմանական սլրոլետարիատի հեղափո-  
խական գործնեյութիւնը: Նրանք թերագնահատում եյին  
գերմանական սոցիալ-դեմոկրատիայի քայքայիչ ուժը:  
Նրանք միաժամանակ գերագնահատում եյին նախկին ցա-  
րական բանակի այդ ժամանակ խախտված մարտունակու-  
թիւնը: Լենինը կոչ արեց կուսակցութեանը ուշքի գալու,  
ոեալ ուժերը սլարդ ըմբռնելու: Լենինի ամենամեծ ծա-

ուայտությունն այն է, վոր նա դեռ այն ժամանակ անհրա-  
ժեշտ եր համարում նախկին ցարական բանակը փոխա-  
րինել նոր, թորհրդային կարմիր բանակով:

Պետք եր ժամանակ շահել, վորպեսզի կռվելու ցան-  
կությունը կորցրած, սակայն ներքուստ հեղափոխականո-  
րեն տրամադրված զինվորին հնարավորություն տալ այ-  
ցելելու իր խորհրդային գյուղը, վորպեսզի նրա մեջ ցան-  
կություն առաջ գա կռվելու իր նոր սոցիալիստա-  
կան հայրենիքի համար: Յերբ զինվորը գյուղ վերա-  
դարձավ և տեսավ, վոր կալվածատերին խրկել են, վոր  
հողը խլել են հողուտ ժողովրդի, վոր այսուհետև ամեն  
ինչի տերը հանդիսանում է իր պես չքավորներից ու աշ-  
խատավորներից կազմված թորհուրդը,—նա հասկացավ,  
վոր այժմ նա ունի հայրենիք, ունի սոցիալիստական հայ-  
րենիք, վորը պետք է պաշտպանի:

### Ի՞նչ սվեց Բրեսի հաշտությունը:

Բրեստի հաշտությունը և բրեստյան հաշտության  
հետևանքով մեր ձեռք բերած դադարը հնարավորություն  
տվին, վոր մենք մեզ դեմոքրիլիզացիայի յենթարկելինք,  
տուն վերադարձնելինք ակոպային կյանքում հյուժված  
միլիոնավոր զինվորներին: Այդ դեմոքրիլիզացիայից հեղա-  
փոխությունը յերկու խոշոր բան շահեց: Առաջինը՝ զին-  
վորները, ցրվելով հսկայական յերկրի բոլոր խուլ անկյուն-  
ները, իրենց հետ տարան ու տարածեցին բոլշևիկյան  
պրոպագանդի խոսքը: Նրանք դարձան այն կենդանի  
կապը—մի կողմից՝ կուսակցության և հեղափոխության  
միջև, և մյուս կողմից՝ հարյուր միլիոն ցրված գյուղացիու-  
թյան մեջ,—վոր ուրիշ վո՛չ մի կերպ հնարավոր չեր լինի  
ստեղծել կարճ ժամանակամիջոցում: Հանա՞ք չե՛, միլիոն  
կենդանի վկաներ ակոպաներից յերկրի խորքերը տարան-

տարածեցին այն, թե ինչպես մենշևիկներն ու եսերները խաբեցին բանակը և ժողովրդին, թե ինչպես բոյլշևիկները, Լենինի գլխավորութեամբ, պայքարում եյին և պայքարում են հոգուտ հաշտութեան, հոգուտ բանվորների իրավունքի, հոգուտ այն բանի, վոր հողը պատկանի գյուղացիներին. տարածեցին այն, թե ինչպես պետք է, բոյլշևիկների հետ միացած, վռնտել ու հաղթել կապիտալիստներին ու կալվածատերերին: Ամեն մի զինվոր ի՛ր կերպ, իր մայրենի լեզվով, իր հայրենի ոջախում ազդարարեց մեծ հեղափոխութեան ու նրա խնդիրների մասին:

Այդ — ամենախոշոր նպաստավոր հանգամանք եր: Յերկրորդ նպաստավոր հանգամանքը պակաս կարևոր չեր: Իր գյուղում հանգիստ առնելով ու նոր կյանքին տեր դառնալով, նախկին զինվորը կազդուրվեց, նորից կամք ու ընդունակութեան ձեռք բերեց կռվելու հոգուտ հեղափոխութեան ու այդպիսով հրաշալի նյութ դարձավ կազմակերպվող փառավոր կարմիր բանակի համար: Դեմոքրիլիզացիան անհրաժեշտ եր, վորպեսզի զինվորը նոր վոզևորութեան ստանար ու հեղափոխական-մարտական ընտանիքի արժանավոր անդամ դառնար:

Բրեստի հաշտութեանը նաև հնարավորութեան տվեց Խորհրդային իշխանութեան կենտրոնը Պետերբուրգից հաջողութեամբ փոխադրելու զինվորական տեսակետից ավելի համապատասխան վայր՝ Մոսկվա: Բրեստի դադարը Խորհրդային կառավարութեանն ու կուսակցութեանը ոգտագործեցին՝ տնտեսական և խորհրդային շինարարութեան համար:

Այդ մասին, այսինքն՝ շինարարութեան մասին, մենք կխոսենք հետևյալ գլխում: Իսկ այստեղ անցնենք քաղաքացիական պատերազմի ուրիշ փուլի, վոր սկսվում է Բրեստի հաշտութեանից հետո:

Քաղաքացիական պատերազմը: Յեռագվարդեյականների յեղույթը՝ արժասահմանյան կառավարութունների դեկավարութեամբ, նրանց աջակցութեամբ յեղ արժասահմանյան քանակների անհիշական հովանավորութեամբ: ՍՏՈՂԱԿԻՆԻ ամենակեղծոս դեր է կատարում անգլիական իմպերիալիզմը:

Քաղաքացիական պատերազմի յերկրորդ փուլը բնորոշվում է նրանով, վոր հակահեղափոխութեան ներքին ուժերը անմիջական ոգնութեան են ստանում արտասահմանյան իմպերիալիզմից (գերմանական կամ Անտանտայի այլ յերկրներէ) թե զենքով, թե փողով և այլն: Շնորհիվ այդ ոգնութեան, ինչպես նաև շնորհիվ այն հանգամանքի, վոր Սորհրդային տերիտորիայի զանազան մասերը արտասահմանյան զորքերի կողմից ինտերվենցիայի ու ոկկուպացիայի յենթարկվելով, մենք ողակված էյինք թշնամիներով, — քաղաքացիական պատերազմը ձգձգվեց, ձգձգվեց և կործանարար բնույթ ստացավ: Այդ շրջանը տևում է մի քանի տարի, — մինչև Լեհաստանի դեմ մեր մղած պատերազմի վերջը, վրանգելականներին և արտասահմանցիներին կողմից Ֆինանսավորվող զանազան պարտիզանական խումբերի բանդիտական յելույթներին (Մախնո, Անտոնով և այլն) վերջ տալը: Իսկապես ասած, քաղաքացիական զինված պատերազմի յերկրորդ շրջանի վերջը պետք է ընդունել 1922 թիվը, թեև բելոգվարդեյշիկների բավականաչափ լիկվիդացիայի յեր յենթարկվել արդեն 1921 թ. գարնանը: Այդ յերկար ժամանակաշրջանի ընթացքում կռիվը այնքա՛ն զանազան ուղղութեաններ ու ձևեր ընդունեց, բովանդակութեամբ ու եպիզոդներով այնքա՛ն հարուստ, մասսայական հերոսութեան ու ստեղծագործութեան արտահայտութեաններով լի, վոր այդ ամենը և այդ ամենի մասին անհնարին է պատմել փոքրիկ գրքուկում: Քաղա-

քացիակալն պատերազմի քաղմահատոր պատմութիւնը  
կզրվի տպագրուամ: Այստեղ մենք ընթերցողին համառոտ  
կապումենք Հոկտեմբերյան հեղափոխութեան՝ համաշխար-  
հային կապիտալի հետ ունեցած ամենագլխավոր ընդհա-  
րումների մասին: Տեսնենք, թե արտասահմանյան-խմպե-  
րիալիստական վո՞ր յերկրի կապիտալը և վո՞րտեղ կազմա-  
կերպեց մեր հակահեղափոխութիւնը, վորտե՞ղ և ի՞նչպէս  
մեր կալվածատերերն ու կապիտալիստները, եսերններն ու  
մենշնիկները լակեյական ծառայութիւն եյին մատուցում  
արտասահմանյան արյունարբու թալանչիներին:

Գերմանական իմպերիալիստները, ոգտվելով Բրեստի  
հաշտութիւնից, գրավեցին Ուկրայինան և առաջ շարժվե-  
ցին դեպի Դոն, Կուբան: Մյուս կողմից ել, Անտանտայի  
իմպերիալիստները սկսեցին Արևելքում և Հյուսիսում կազ-  
մակերպել բելոգվարդիական կառավարութիւններ ու բե-  
լոգվարդիական բանակներ՝ Խորհուրդների դեմ կռվելու  
համար:

---

## ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱ- ԼԻԶՄԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Ովքե՞ր և ի՞նչ կերպ ոգնեցին գերմանական իմպե-  
րիալիստներին ու նրանց աջակցութիւնը վայելեցին Ուկ-  
րայինայում ու Ռուսաստանի հարավում բանվորների և  
գյուղացիների դեմ մղվող կռվում:

Ուկրայինայում, դեռ 1917 թվի գարնանը, հեղափո-  
խութեան շնորհիվ ստեղծվեց կենտրոնական Ռադան:  
Վորովհետև բոյլշևիկները աջակցում եյին ազգային ազա-  
տագրական շարժման, ուստի և բոյլշևիկյան կուսակցու-  
թիւնը աջակցեց Ռադայի պայքարին, վոր մղվում եր

Կերենսկու կառավարութեան դեմ՝ հոգուտ ուկրայինական  
ժողովրդի: Բոյլշևիկները տակտիկան միանգամայն արդա-  
րացավ: Յեթե Փետրվարյան հեղափոխութեանը միանգա-  
մայն ընդառաջեր ուկրայինական ժողովրդի որինական պա-  
հանջներին, նա կարող կլիներ կազմակերպել Ուկրայինայի  
հեղափոխական ուժերը՝ համերաշխ պայքարելու համար  
ընդդեմ Ռուսաստանի և Ուկրայինայի կալվածատիրական-  
կապիտալիստական հակահեղափոխութեան: Եսեր-մենշևիկ-  
յան բուրժուական ժամանակավոր կառավարութեան հրա-  
ժարվելը Ուկրայինան ազատագրելուց, Ուկրայինայում  
հող ստեղծեց ազգային շովինիստական Պետլյուրական  
տարրերի զարգացման համար: Ռադան որեցոր ավելի  
յեր աջանում: Բոյլշևիկները Ռադան թողեցին: Բոյլշևիկ-  
ները հետ միասին Ռադայից հեռացան բնակչութեան պրո-  
լետարական և գյուղացիական չքավոր դասակարգերը:  
Գետի ձախ կողմում, կենտրոն ունենալով Խարկովը, կազ-  
մվեց Ուկրայինայի կենտրոնական Գործադիր կոմիտեն,  
վորը արտահայտիչն էր բանվորների և չքավոր գյուղա-  
ցիների, և սկիզբ դրեց Խորհրդային Սոցիալիստական Ուկ-  
րայինայի Հանրապետութեան բանվորա - գյուղացիական  
կառավարութեան: Այդ կառավարութեան գլխավոր հենա-  
կետն էին կազմում, իհարկե, Գոնբասի բանվորները:

Գետի աջ կողմում, կենտրոն ունենալով Կիյևը, գո-  
յություն ունեւր կենտրոնական Ռադան՝ իր մինիստրները  
(Վիննիչենկո, Պետլյուրա) կաբինետով: Կենտրոնական  
Ռադան կազմում էր Ուկրայինայի կուլակային և մանր-  
բուրժուական դասակարգերի սիրտը: Խոշոր բուրժուա-  
զիան և խոշոր կալվածատերերը դեմ էին վոչ միայն  
Ուկր. կենտր. Գործ. կոմիտեյին, այլ և Ռադային, հույս  
ունենալով միապետութեանը վերականգնել:

Շատ բնորոշ է կենտրոնական Ռադայի մեջ մտած  
կուսակցութեանների կազմը. այնտեղ ժողովի էին նրա-

ստում ամենաթուևդ հետադիմական սև-հարյուրակայինները՝  
ուկրայինական սոց.-ֆեդերալիստների անվան տակ, այնտեղ  
կային ուկրայինական ս.-դ. և եսերներ, այդ անուանների տակ  
նրանք պաղրոմներ էյին սարքում և բանվորներին զինա-  
թափ անում: Այնտեղ կային նաև ամեն տեսակի «ազգա-  
յին սոցիալիստական» կուսակցություններ — հրեյական,  
լեհական և այլն: Այնտեղ կային նաև ռուսական մենշևիկ-  
ներ և ռուսական եսերներ: Կային և անկուսակցական  
կուլակներ: Բայց այնտեղ չկար և վոչ մեկ հեղափոխա-  
կան: Այդ Ռադայի անուանից հրատարակվում էյին որեք-  
ներ, վոր վոչ վոք չեր կատարում: Այդ Ռադայի անու-  
անից կազմվում էյին բանակներ, վորի մեջ վոչ վոք լուրջ  
չեր մտնում: Այդ Ռադայի անուանից պատգամավորություն  
ուղարկվեց Բրեստ՝ սեպարատ (անջատ) պայմանագիր  
կնքելու համար: Այդ Ռադայի անուանից հեռագիր տրվեց  
իմպերատոր Վիլհելմին գերմանական գորք ուղարկելու  
Ուկրայինա, ոգնելու համար կուլակներին - հարուստնե-  
րին՝ ընդդեմ բանվորա-գյուղացիական հեղափոխության:  
Թե վորքան չնչին էյին Պետլյուրական բանակի  
ուժերը, այդ յերևում է նրանից, վոր կարմիր-բանակային-  
ները, Ուկր. կենտր. Գործ. կոմիտեյի ղեկավարությամբ  
հեշտությամբ և արագ նրանց ջարդեցին գլխովին: Նրանք  
գրավեցին Դնեպրի ամբողջ աջ ափը և հենց կիյև քաղաքը:  
Ռադան փախավ Բրեստի ուղղությամբ, վորպեսզի թագ-  
նվի իմպերատոր Վիլհելմի թևերի տակ: Ուկրայինայի  
բանվորա-գյուղացիական կառավարությունը տիրում էր  
Դնեպրի թե ձախ և թե աջ ափերին, հողերը բաժանում  
էր գյուղացիներին, ֆաբրիկաները, գործարանները, բան-  
կերը ազգայնացնում, կառուցում և ամրապնդում իր խոր-  
հրդային իշխանությունը մինչև այն րոպեն, յերբ Ռադայի  
հրավիրած գերմանական բանակը յեկավ և տիրեց յեր-  
վրին: Ուկրայինայի ոկկուսացիան գերմանացիներին եժան

չնստեց: Նրանք ստիպված եյին գյուղերն ու քաղաքները մեկ-մեկ վերցնելու: Նրանց դեմ եյին կռւում բանվորներն ու գյուղացիական շքավորությունը: Մյուս կողմից՝ իմպերատոր Վիլհելմի զորքերին խարդախությամբ և դավաճանությամբ ոգնում եյին Պետլյուրայի կողմնակից կուլակները: Ի վարձատրություն կատարված դավաճանության, գերմանացիները սկզբում թույլ տվին, վոր կենտրոնական Ռադան կրկին գումարվի կիյևում: Գերմանացիները գիտեյին, վոր Ռադան լոկ խոսարան ե լինելու, ուստի և թույլ տվին: Յեվ ի՞նչ որենքներ կարող եր հրատարակել Ռադան, յերբ Ուկրայինայում փաստորեն կարգադրություններ եր անում գերմանական գեներալ Եյխզորն, վոր իր տրամադրության տակ ուներ գերման-ավստրիական ռկկուպացիոն բանակը՝ մոտ 300.000 մարդ: Ռադայի կառավարությունը, ինչպես նաև ինքը Ռադան, իրենցից ներկայացնում եյին տիկնիկային թատրոն:

Շուտով գեներալ Եյխզորն համաձայնության յեկավ խոշոր բանկիրների և կալվածատերերի հետ: Կենտրոնական Ռադան արձակվեց և գերմանացիները ուկրայինական «գահի» վրա նստեցրին տիկնիկային ինքնակալ Սկորոպադսկուն, սրան անվանելով Ուկրայինայի հետման: Իմպերատոր Վիլհելմի համար՝ գրաված ու ճնշված յերկիրն ավելի հեշտ եր կառավարելը ուղղակի և անմիջապես իրենից կախված մի սատրապի ոգնությամբ: «Ժողովրդական հանրապետության» «Ժողովրդական կառավարության» հետ փոխանակ դատարկ բաներով զբաղվելու, Վիլհելմը Նիկոլայ 11-ի ծառաներից իրեն համար ընտրեց սատրապ՝ խոշոր կալվածատեր և սե-հարյուրակային, թալանչի, հարբեցող և կաշառակեր Սկորոպադսկուն: Սակայն ժամանակի հովերը պահանջում եյին, վոր «Ժողովրդական ընտրյալի» արտաքին տեսք տրվի նույն իսկ Սկորոպադսկուն: Այդ նպատակով գումարվեց մի համա-

գումար, վորին մասնակցել կարող էին Ուկրաինայի բա-  
ցառապես այն կուլակները, վորոնք վոչ պակաս 40 դես-  
յատինի տեր էին: Յեւ հենց այդ կուլակների համա-  
գումարն էլ Սկորոպադակուն հռչակեց Ուկրաինայի հետ-  
ման: Գերմանացիների ցուցմունքով հետմանը վերականգ-  
նեց խոշոր կալվածատիրական հողատիրությունը, խոշոր  
բանկերը, ֆաբրիկանոններին ու գործարանատերերին վե-  
րադարձրեց գույքերը, ցրեց պրոֆմիությունները և գեր-  
մանական բանակի ոգնությամբ ամեն միջոց ձեռք առավ  
ճնշելու բանվորական և գյուղացիական հուզումները:

Իսկ այդ ժամանակ ի՞նչ էին անում նախկին Ռա-  
դայի «գործիչները»: Նրանք բաց էին արել ազգային  
ակումբ, բանակցություններ էին վարում հետմանի հետ  
և փաստորեն անցել էին նրա մոտ ծառայության: Ահա  
թե ովքեր ոգնեցին գերմանական իմպերիալիզմին խեղ-  
դելու Ուկրաինայի բանվորներին և գյուղացիներին—  
ուկրաինական կալվածատերերը, կապիտալիստները, կու-  
լակները-պետլյուրականները, եսերներն ու մենշևիկները:

Բոյլշևիկներն անցան ընդհատակյա աշխատանքի, նրանց  
հետևեցին բոլոր նրանք, ովքեր ընդունակ էին ըմբռո-  
նելու և իրենց սրտին մոտ ընդունելու մեծ Հոկտեմբերի  
հեղափոխական պատգամները: Կուսակցական մասսաները  
և նույնիսկ նախկին ազգային-սոցիալիստական կուսակ-  
ցությունների ինտելիգենցիայի մի մասը դեպքերի ազ-  
դեցության տակ սկսեցին ձախանալ և բոյլշևիկների կողմն-  
անցնել: Գերմանական ոկկուպանտների դեմ սկսեցին կազ-  
մակերպվել պրոլետարական խմբեր ու գործադուլային  
շարժում: Գերմանական իմպերիալիստները յերկրից դուրս  
էին տանում այն ամենը, ինչ հնարավոր էր: Պատերազ-  
մական խմբերը քանդում էին յերկաթուղային ուելաները,  
կամուրջները, խորտակում էին գնացքներ, և այդպիսով  
խանդարում տրանսպորտին. չքավոր գյուղացիներն էլ

թագնավել եյին անտառներում և հարձակումներ գործում գերմանական վաշտերի վրա, վոր շրջում եյին գյուղերը և հացն ու սլարենը բռնագրավում: Բանվորական գործադուլների հետևանքով կանգ առան այն արտադրությունները, վորոնցով ոկկուսականներն ավելի եյին շահագրգռված:

Գերմանական իմպերիալիզմի և ներքին հակահեղափոխության դեմ ուկրայինական բանվորներն ու չքավոր գյուղացիությունը կռվում եյին բոյլշևիկյան կուսակցության դեկավարությամբ:


Նույնն եր տեղի ունենում Ռուսաստանի նաև ամբողջ հարավում: Դոնի և Կուբանի վրա գերմանական իմպերիալիստների ոգնությամբ կազմակերպվում եր կուլակ կողակությունը՝ գեներալ Կալեդինի և Դենիկինի գլխավորությամբ: Այնտեղ ստեղծվեց նախկին Պետական Դումայի բոլոր կալվածատիրական - կապիտալիստական կուսակցությունների կենտրոնը: Այնտեղ փոխադրվեց և ինքը Ռոձյանկոն, IV Պետական Դումայի նախկին նախագահը: Այս բոլոր կեղծ-ազգասերներն իրենց հրաշալի եյին զգում իմպերատոր Վիլհելմի հովանավորության տակ: Նույնիսկ հռչակավոր Միլյուկովը չեր զգում թե ինքը ի՞նչպես նվիրված ե Անտանտային: Նա յեկավ Կիյև և բանակցեց գեներալ Եյխգորնի հետ: Այդ բանակցությունների շնորհիվ կոնտակտ հաստատվեց հետման Սկորոպակու և Կուբանում գործող հակահեղափոխական գեներալների հետ: Գերմանացիները բարեհաճեցին թույլ տալու, վոր ռուսական և ուկրայինական հակահեղափոխությունները իրենց ուժերը միացնեն՝ գեներալ Եյխգորնի կոնտրոլի տակ: Նույնիսկ թույլ տրվեց Կիյև՝ Սկորոպակու մոտ՝ հյուր գալու այլի թագուհի Մարիա Ֆեոդորովնային և այլ թափթփուկներին:

Գերմանական ինստրուկտորների դեկավարությամբ սկսվեց կազմվել հետմանյան բանակը: Սակայն հետ-

մանի գառակարգային բանակում ընդունվում էյին բա-  
ցառապես գյուղացի-կուլակներ, վորոնք տեր էյին վոչ-  
պակաս 40 դեսյատին հողի: Կազմակերպվեց բուրժուա-  
կան-կուլակային պետություն՝ ճնշելու համար բանվոր-  
ներին և չքավորությանը և միաժամանակ ծառայություն-  
ներ մատուցելու գերմանական իմպերիալիստ-ավազակ-  
ներին:

Այսպես շարունակվեց մինչև գերմանական հեղափո-  
խության սկիզբը՝ 1918 թիվը: Հեղափոխությունը Գեր-  
մանիայում կյանքի կոչեց Բանվորների ու Զինվորների  
Պատգամավորների Խորհուրդների կազմակերպությունը:  
Ուկրայինայում գերմանական ոկկուպացիոն գործերի մեջ  
ևս կազմվեցին Զինվորական Պատգամավորների Խորհուրդ-  
ներ: Գերմանական դեներալիտետը և սպայությունը կոր-  
ցրին իշխանությունը զինվորական մասսաների վրա: Մյուս  
կողմից՝ բոյլշևիկները համար դժվար գործ չեր սերտ կապ  
հաստատել գերմանական զինվորների Խորհուրդների հետ:  
Դրությունը իսկույն հիմնովին փոխվեց: Հետման Սկորո-  
պադսկու գահը խախտվեց: Նրա հետմանական բանակը  
իսկույն հալվեց: Այս դրությունը փորձեցին ոգտագործել  
իրենց ակումբում սատակող՝ գերմանական իմպերիալիզմի  
լակեյները (Պետլյուրա, Վիննիչենկո և ուրիշները): Նրանք  
նորից կենդանացան, կազմեցին դիրեկտորիա, քծնությամբ  
միացան պարտիզանական այն խմբերին, վորոնք տարե-  
րայնորեն համախմբվեցին ու կազմեցին բանակ, դա կո-  
չելով «Ուկրայինական հեղափոխական գործ»: Սակայն Պետ-  
լյուրայի «գահն» ևս հեշտությամբ և շուտով խորտակվեց  
բարձրացող հեղափոխական ալիքի մեջ: Բոյլշևիկյան կու-  
սակցության դեկավարությամբ կազմակերպվեցին կարմիր-  
բանակային գնդեր և յերեք ամսվա ընթացքում ամբողջ  
Ուկրայինան ընկավ Խորհրդային բանվորա-գյուղացիա-  
կան իշխանության ձեռքը:

Շարժումն, բնականաբար ձախ ափից անցնում էր դեպի աջ ափը: 1919 թ. փետրվարի 6-ին Կիյևն ազատվեց և կառավարական բոլոր կենտրոնական հիմնարկությունները գրավվեցին: Ուկրալինայի Կոմունիստական Կուսակցությունը (բոլշևիկներին) իր դրոշակի տակ համախմբեց Ուկրալինայի տերիտորիայի վրա բնակվող թե ուկրալինական ժողովրդի և թե ռուսական, հրեյական և ուրիշ ժողովուրդների բոլոր իրոք հեղափոխական պրոլետարական ելեմենտներին: Գերմանական զինվորները թողին հեռացան, իսկ նրանց զենքերը մեծ մասով մնացին մեզ մոտ ու անցան Կարմիր բանակին: Խորհրդային Իշխանությունը Ուկրալինայում ամրանում էր: Բայց նրան դժվարություններ էին սպառնում Հարավում, ուր շնորհիվ ծովափի, մուտք էր գործել Անտանտայի իմպերիալիզմի ազդեցությունը, վոր յեկել էր փոխարինելու գերմանական իմպերիալիզմին:



## ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՏԱՆՏԱՅԻ ԹԵՎԻ ՏԱԿ

Անտանտան, ի պատասխան Հոկտեմբերյան հեղափոխության այն առաջարկին, վոր պետք է անմիջապես զինադադար և հաշտություն կնքել, — մերժեց ճանաչել բանվորներին և գյուղացիներին կառավարությունը: Ավազակներին առանձնապես «վիրավորել էր» այն հանգամանքը, վոր Արտժողկոմը հրապարակել էր բոլոր գաղտնի պայմանագրերը: Գողերը բռնվել էին հանցագործության տեղում: Խաբելով իրենց ժողովուրդներին, նրանք ասում էին, վոր պատերազմում են քաղաքակրթության համար, դեմոկրատիայի համար և նման գեղեցիկ խոսքեր: Բայց իսկապես, ինչպես յերևաց գաղտնի պայմանագրերից, սլա-

տերազմի նպատակները ծայր աստիճան ավագակային  
եյին: Պայմանագրերում ուղղակի ասված է, թե ումի՛ց  
ինչ չափով պետք է թալանել և ո՛ւմ միջև ու ինչ կերպ  
պետք է բաշխել:

Գիշերային թռչունները ասում էյին սկսվող արևա-  
ծագր: Արտասահմանյան պետութժյունների հյուպատոսները՝  
զինվորական աստաշեն, հետախուզական ու լրտեսական  
կազմակերպութժյունները իսկույն կապ հաստատեցին հա-  
կահեղափոխական կուսակցութժյունների հետ—կադետների,  
մենչևիկների և եսերների հետ: Նրանք Ֆինանսավորում  
ու պաշտպանում էյին սաբոտաժ անող կազմակերպու-  
թժյունները և սկսում էյին սլատրաստել զինված ապստամ-  
բութժյուն: Ամբողջ գժվարութժյունը կայանում էր նրանում,  
վոր Ռուսաստանի ներսում ճնշող մեծամասնութժյունը  
գնում էր բոյլշևիկների յետևից: Միմիայն կալվածատե-  
րերի զավակներից, բանկիրների, ֆաբրիկանտների զավակ-  
ներից, և մի խումբ եսեր-մենչևիկ ինտելիգենտներից բա-  
նակ կազմել չի կարելի: Նման մարդիկ կարող են միայն  
հրամայել, բայց ըստ հարկին կռվել—անընդունակ են:

Պետք էր գտնել մի ուժ, վորից կարելի լիներ կազ-  
մել սպիտակ գվարդիայի կադրեր: Լոգունգները համապա-  
տասխան էյին: Նախ՝ բոյլշևիկների դեմ բաց էյին թողել  
մի սուտ, վորպես թե նրանք ցանկանում էյին յերկիրը  
հանձնել գերմանացիներին: Յերկրորդ—բոյլշևիկները ցրել  
էյին հիմնադիր ժողովը: Մինչդեռ անգլիական և ֆրան-  
սիական հյուպատոսներին անպայման անհրաժեշտ էր,  
վոր Հիմնադիր ժողովը գոյութժյուն ունենար: Նրանց պե՛տք  
էր Միլյուկովների, Չերնովների, Դաների իշխանութժյունը:  
«Կեցցե Հիմնադիր ժողովը», «Կորչեն գերմանական շախոն  
բոյլշևիկները» — այս լոգունգները սակայն վոչ վոքին չմո-  
լորեցրին: Բանվորներն ու գյուղացիները արդեն բավա-  
կանաչափ փորձվել էյին: Գառան մորթով գայլը նրանց

այլևս խաբել չեր կարող: Բայց առանց բանվորների ու  
առանց գյուղացիների նրանք ել վճարտեղից կարող եյին  
զինված ուժեր հավաքել բոյլշևիկների դեմ:

Փնտռեցին ու գտան: Պատերազմի ընթացքում Ռուս-  
սաստանում շատ ուժեղագույններ եյին կուտակվել, մա-  
նավանդ նախկին Ավստրո-Վենգրիայից: Այնտեղ ճնշվում  
եյին սլավոնական ազգությունները — չեխո-սլովակները,  
լեհերը և այլն: Ճնշված ազգությունները վաղուց պայքա-  
րում եյին ազատագրվելու համար: Ուստի և, յերբ պա-  
տերազմը սկսվեց, նրանք չցանկացան կուլել իրենց խորթ  
մոր համար, իրենց ճնշող Ավստրո-Վենգրիայի համար:  
Ճնշված ազգություններին պատկանող զինվորները խրմ-  
բերով եյին անձնատուր լինում, գերի ընկնում: Այդպիսի  
գերիներ մեզ մոտ հավաքված եր մի ամբողջ բանակ:  
Նրանց խոշոր մասը գտնվում եր Ուկրայինայում և Հա-  
րավում:

Յեթե գերմանացիները Ուկրայինան և Հարավը ոկկու-  
սլացիայի յենթարկեյին, չեխո-սլովակ, լեհ ուժեղագույն-  
ներին դավաճանության համար սպառնալու յեր զինվո-  
րական դատարան: Մյուս կողմից, Անտանտայի ազենտ-  
ները նրանց խոստանում եյին, վոր նրանց իրենց տեղերը  
կուղարկեն ու յերաշխավորում եյին ապահովություն:  
Չեխո-սլովակներն և ուրիշները շարժվեցին դեպի Արևելք,  
վորպեսզի Սիբիրի, Ուրալի և Հեռավոր Արևելքի վրայով  
հասնեն «ավետյաց յերկիրը»: Խորհրդային Իշխանու-  
թյունը այդ ուժեղագույններին ամեն կերպ աջակ-  
ցեց, Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները նրանց  
վերաբերվում եյին յեղբայրաբար, սակայն Անտան-  
տայի ներկայացուցիչներին հաջողվեց նրանց դեկավար-  
ներին կաշառել, մասսային վախեցնել ու խաբել նրանց  
զինել Խորհրդային Իշխանության դեմ: Չեխո-սլովակների  
ապստամբությունը, նրանց անցումն հակահեղափոխու-

թյան կողմը, — սկիզբ դրեց արյունահեղ ու տևական քաղաքացիական կռվին:

Կազանը գրավվեց, հանրապետության վոսկու սլաշարի պահեստարանը կողոպտվեց, վերականգնվեց բուրժուական քաղաքային դուման, բուրժուական իշխանությունը: Չեխո-սլովակները հետ միասին շարժվեցին նաև լեհ ու ագմագերիները: Բացի դրանից, Անտանտան դիմեց ել ավելի ամոթալի ու բարբարոսական քայլի: Նա վճռեց դիմել ուղղակի ինտերվենցիայի: Անգլիական նավերը մտան Սպիտակ ծովը, գրավեցին Արխանգելսկ, ուր և իջեցրին իրենց զորքերը: Յապոնացիներն ել իրենց զորքերն ուղարկեցին Սիբիր:

Ահա թե ո՛ւմ ոգնությամբ առաջ յեկան և դիմացան բոլոր ու զանազան տեսակի սպիտակ կառավարությունները: Իսկ այդպիսի կառավարություններ — շատ եյին: Արխանգելսկում — եսեր Չայկովսկու կառավարություններ: Ուֆայում — Հիմնադիր ժողովի կառավարությունը: Մի կառավարություն ևս ստեղծվեց «Գերագույն կառավարիչ» կոչակին կից: Այդ կառավարությունները ծնվում եյին, կործանվում, իրար փոխարինում ու նորից ծնվում: Դրանց ընդհանուր հատկանիշն այն եր, վոր նրանք խրտվիլակներ եյին արտասահմանյան ավազակների ձեռքում: Նրանք անգլիական, ֆրանսիական, յապոնական, ամերիկական կապիտալիստների սոսկ ագենտներն եյին, ինչպես հետման Սկորոսլադսկին և Պետլյուրան՝ գերմանական կապիտալիստների ագենտներն եյին:

Յեվրոպական իմպերիալիստների մոտ բացարձակ ծառայության մտան նաև վրացական մենշևիկներն ու սոցիալիստ ֆեդերալիստները, Ադրբեջանի մուսաֆաթիստները և Հայաստանի դաշնակներն ու նման կուլակային կուսակցություններ: Հենվելով անգլիական նավատորմիղի և անգլիական դեսանտների ոգնության վրա, անգլիական

աղմիրալների ձեռքից փող և զենք ստանալով, նրանք Սոր-  
հուրդների հանրապետություններից անջատվեցին: Իրենց  
հարազատ բանվորներին ու չքավոր գյուղացիներին հրա-  
ցանազարկ անելով, նրանցից հողը խլելով, նրանց կողոպտե-  
լով ու ճնշելով՝ նրանք այդ կերպ հիմնեցին «անկախ պետու-  
թյուններ»՝ անգլիական թագավորական կառավարության  
կոնտրոլի տակ և նրա ցուցմունքներով:

Անգլիացիներին հարկավոր եր ձեռք գցել կովկասի  
նավթային և մարգանեցի հողերը. նրանց հարկավոր եր  
նվաճել նավթարդյունաբերող պրովետարիատը, տեռորի,  
հրացանազարկությունների ու քաղց ստեղծելու միջոցով  
բանվորական եժան ուժ ստանալ: Նույն այդ նպատակի  
համար նրանք պեքտ ե ոգնեյին կալվածատերերին և կա-  
պիտալիստներին: Անգլիացիների արյունոտ գործը սարք-  
վեց Ուրտերնացիոնալի գործիչներ Մերեթելու, Չխեյի-  
ձեյի, Ժորդանիայի և ուրիշների ձեռքերով:

Անգլիացիներն ու ֆրանսիացիները, չհրաժարվելով  
եսերների ու մենշևիկների նման լակեյների մատուցած  
ծառայություններից, միաժամանակ փնտռում եյին իրենց  
համար ավելի՛ ևս հարազատ դահիճներ: Այն միջոցին,  
յերբ Արևելքում կոլչակն եր գործում, այդ միջոցին կու-  
բանի և Դոնի վրա հայտնվեց զեներալ Դենիկինը: Հենց  
նույն Միլյուկովներն ու Ռոձյանկոները, վորոնք դրանից  
մեկ ամիս առաջ ծունկ եյին չոքում իմպերատոր Վիլ-  
հելմի և նրա զեներալ Եյխորնի առաջ, այժմ արդեն սպա-  
սում եյին անգլիական թագավորի զեներալի բնակարանի  
դռների առաջ՝ այցելություն մուրալով: Ավազակներն ու  
դավաճանները շուտո՛վ համաձայնության յեկան: Դենի-  
կինի մոտ կազմվեց շտաբ, կազմվեց կամավոր բանակ,  
վորը և փող ու ռազմամթերք ստացավ արտասահմանյան  
կողոպտիչներից: Մի այն Անգլիան, ինչպե ս  
այժմ արդեն պաշտոնապես հայտարար-

ված է, Կուլչակի ու Դենիկինի վրածախսեց  
ավելի քան մեկ միլիարդ ուսուցիչ:

Ֆրանսիացիները յետ չեյին մնում: Նրանք ևս իրենց  
ուզմանավերն ուղարկում էին Սև ծովի ափերը: Նրանք  
գլխավորապես շատ էին «սիրում» Ղրիմն ու Ողեսսան.  
Ղրիմն ու Ողեսսան նրանց շատ էին «դուր յեկել»: Ավա-  
զակներից ամեն մեկն աշխատում էր իր համար կողո-  
պուտ ձեռք գցել, ամեն մեկն աչք էր տնկել, թե ինչ հա-  
մեղ պատառ խլի հեղափոխական յերկրից:

Իսկ բելոգվարդեյական գեներալներն ու Հիմնադիր  
Ժողովի կուսակցություններն այդ ուղղությամբ ջանք ու  
ճիգ էին գործ դնում, կատարելով դավադրություն դա-  
վադրության յետևից:

Մի ժամանակ բելոգվարդեյականներին հաջողվեց իրենց  
ձեռքը գցել մեր Խորհրդային Միության մեծ մասը: Կուլ-  
չակը հսկայական տերրիտորիա զավթեց Արևելքում: Դե-  
նիկինը Կուբանից առաջ շարժվեց մինչև Տուլայի շրջանը  
և գտնվում էր Մոսկվայից հազիվ 200 վերստի վրա: Ուկրա-  
յինան նա ամբողջապես գրավել էր. գրավված էին նաև  
Կուրսկ, Ույոլ, Վորոնեժ և այլն:

Բելոգվարդեյականները, ուր վոր հայտնվում էին, այն-  
տեղ հրացանազարկ էին անում բոյլշևիկներին և անկու-  
սակցական բանվորներին, այնտեղ ավերվում ու կրակի  
էին մատնվում տասնյակ գյուղեր, հողերը խլվում ու վե-  
րադարձվում էին կալվածատերերին, չքավոր գյուղացի-  
ներին տանջում ու զնդակահարում էին: Բանվորական ու  
գյուղացիական մասսաները արյունոտ փորձերի վրա սովո-  
րում էին քաղաքագլխություն: Այդ փորձն հետևյալն էր  
ասում. յերբ գալիս յեն կարմիրները—իշխանությունը  
հարազատ է, հող և ազատություն կա: Իսկ յերբ գալիս են  
սպիտակները—վերականգնվում է կալվածատերերի ու հա-  
րուստների իշխանությունը, հողը խլվում է և բանվորներն

ու չքավոր գյուղացիութիւնը հետապնդվում ու ներ-  
վում են:

Կյանքի այդպիսի դաժան փորձերը—ամենալավ ազի-  
տացիան եյին: Դրա շնորհիվ Խորհրդային Իշխանութիւնը  
հաջողվեց կազմակերպել կանոնավոր կարմիր բանակ: Դրա  
շնորհիվ, քաջարի կարմիր-բանակայինները առյուծների պես  
հերոսաբար կռւում եյին արտասահմանյան սպառազինման  
դեմ, այերոսականների, գազերի ու տանկաների դեմ: Շնոր-  
հիվ այդ դասերի, սպիտակների թիկունքում կազմվում  
եյին բանվորա-գյուղացիական պարտիզանական խմբեր,  
վորոնք ոգնում եյին կարմիրների հարձակմանը: Շատ մեծ  
դեր կատարեց ճնշված ազգութիւնների աշխատավորու-  
թիւնն ոգնութիւնը:

Հեղափոխութիւնն և հակահեղափոխութիւնն տված դա-  
սերը մի ուրիշ շատ կարևոր հետևանք ել ունեցան. նրանք  
կազմալուծեցին անգլիացիների և ֆրանսիացիների ին-  
տերվենցիոն բանակները: Ոտարյերկրյա զինվորներն ու  
մատրոսները յերբ համոզվում եյին, վոր հեղափոխութիւնը  
պայքարում ե հոգուտ բանվորների ու գյուղացիների,  
նրանք անցնում եյին Խորհրդային Իշխանութիւնն ու բոյլ-  
շևիկյան կուսակցութիւնն կողմը: Այսպես, որինակ, անգ-  
լիացիները ստիպված յեղան թողնելու Արխանգելսկն և ու-  
րիշ գրավված վայրեր, վորովհետև իրենց դեռանտի շար-  
քերում հուզումներ եյին առաջացել: Ֆրանսիական մատ-  
րոսները, ընկեր Մարտիի գլխավորութիւնամբ, կարմիր դրո-  
շակ բարձրացրին Ոդեսսան ողակած զինվորական նավերի  
վրա և պահանջեցին, վոր ֆրանսիական սպառազինված  
նավերը անհապաղ վերադառնան Ֆրանսիա:

Գլխավոր բանակը գլխովին շարդեց կոլչակին ու Դե-  
նիկինին: Արտասահմանցիները արեցին նաև հետևալ փոր-  
ձերը. 1) գեներալ Յուդենիչի գլխավորութիւնամբ կազմվեց  
մի բանակ՝ Պետրոգրադը գրավելու համար: Բայց Պետ-

ըողրադի բանվորներին հերոսական ջանքերով այդ բանակը ջարդվեց ու վոչնչացվեց: 2) Կազմակերպվեց Վրանգելի բանակը, վորը Դենիկինի պարտությունից հետո բռնած եր Դրիմը: Վրանգելի բանակը մեզ զբաղեցրեց մինչև 1920 թվի վերջը: Պատերազմը Լեհաստանի հետ վերջացնելուց հետո, Կարմիր բանակի հերոսները, ընկ. Ֆրունզեյի ղեկավարությամբ, գրավեցին Պերեկոպը և վրանգելցիներին վոչնչացրին: 3) Կազմակերպվեց Պիլսուդսկու հարձակումը: Շնորհիվ այն զինված մեծ ոգնության, վոր ցույց եր տրվում Ֆրանսիայի կողմից, լեհական շլյախտային հաջողվեց վերցնել Կիյևը, բայց Կարմիր բանակը, կատաղի հակահարձակման շնորհիվ, թշնամուն [հարկադրեց փախչել: Թշնամին շարտվեց համարյա մինչև Վարշավա: Փրանսիացիները լեհերին ուղարկեցին վոչ միայն զենք, այլև իրենց հրամանատարական ուժերը՝ զեներալ Վոյզանի գլխավորությամբ: Այդ հնարավորություն տվեց լեհերին կրկին հարձակման դիմելու: Պատերազմը դաժան ու ձգձգվող բնույթ եր կրում, մինչև վոր դա վերջացավ այսպես ասած՝ Ռիգայի հաշտության դաշնագրով:

*Պոմիևներն: Նրա դերը հեղափոխական պատերազմում՝ յեվ քանվորներին ու գյուղացիներին պաշտպանելու խնդրում:*

Մեզ ոգնում եր այն հանգամանքը, վոր Յեվրոպայի պրոլետարիատը, շնորհիվ Կոմիտեերնի աշխատանքի, խանգարում եր Անտանտայի զինամթերքը տեղափոխելուն, կազմակերպում եր «Գործող Կոմիտեներ»՝ «Ձեռքերդ հեռու Խորհրդային Ռուսաստանից» լողունգով: Դեռ մինչև հեղափոխությունը, Լենինը պնդում եր, վոր անհրաժեշտ ե կազմակերպել III ինտերնացիոնալ, Կոմունիստական ինտերնացիոնալ: Այդպիսի ինտերնացիոնալը կվերականգնե համաշխարհային պրոլետարիատի յեղբայրական համերաշ-

խուժյան այն կապերը, վոր խախտված էյին պատերազմի հետևանքով: Այդպիսի ինտերնացիոնալը ինքնագոհությամբ և մինչև վերջ կողնե կապիտալիստական յերկրներում պրոլետարական հեղափոխություններին, ինչպես նաև գաղութային ստրուկների ազգային ազատագրական ապստամբություններին: Հոկտեմբերյան հեղափոխությունը հնարավորություն տվեց ստեղծել այդպիսի ինտերնացիոնալ: Կոմիստերնի առաջին կոնգրեսը գումարովեց Մոսկվայում 1919 թվի մարտի սկզբին:

Ռկկ կկ անունից բաց անելով Կոմիստերնի առաջին կոնգրեսը, Լենինը ասաց—«Մեր համագումարը համաշխարհային պատմական մեծ նշանակություն ունի... չե՞ վոր վո՛չ միայն Ռուսաստանում, այլ և Յեվրոպայի ավելի դարգացած կապիտալիստական յերկրներում, ինչպես որինաև, Գերմանիայում, քաղաքացիական պատերազմը դարձել է փաստ: Բուրժուազիան մեծ յերկյուղ ե կրում պրոլետարիատի հեղափոխական շարժման աճման հանդեպ... Ժողովուրդը գիտակցում ե ներկայումս մղվող կռվի մեծությունն ու նշանակությունը: Անհրաժեշտ ե միայն գտնել այն գործնական ձևը, վորը պրոլետարիատին հնարավորություն կտա իրականացնելու իր տիրապետությունը»: Մատնանշելով, վոր պրոլետարիատի դիկտատուրայի համար այդ ձևը—խորհուրդներն են, Լենինը հայտարարում ե.— «Ժող բուրժուազիան կատաղի, թող նա ե՛լի սպանի հազարավոր բանվորներ, — հաղթանակը մեր կողմն ե, համաշխարհային կոմունիստական հեղափոխության հաղթանակը ասպահովված ե»:

### Վավի արդյունքները:

Ամփոփենք: Ո՞վ եր կռվում հեղափոխության դեմ: — Կալվածատերը, կապիտալիստը, սպիտակ զեներալներն

ու սպայությունը, եսեր-մենշնիկյան ինտելիգենտները, կուլակները, մոլորվածները և կամ զորշ մասսայից սարսափածները: Ո՞վ եր ոգնում բելոգվարդեյականներին: — Յեվրոպայի կողոպտիչ կասլիտալիստները, ոգնում եյին փողով, գենքով, բլոկադայով, ինտերվենցիայով, ստով ու խարդախությամբ: Ո՞ւմն եյին ծառայում բելոգվարդեյականները, նրանք ինչի՞ եյին ձգտում: — Նրանք ծառայում եյին ոտարյերկրացի դահիճներին ու իրենց հայրենի կողոպտիչներին: Նրանք ձգտում եյին բաժան-բաժան անելու հեղափոխական ու ազատագրված յերկիրը և քայքայելու ու ստրկացնելու բանվորա - գյուղացիական մասսաները:

Ո՞վ եր կուլում հեղափոխության համար: — Բանվորներն ու չքավոր գյուղացիությունը: Ո՞վ եր ոգնում կարմիրներին: — Արտասահմանի բանվորները, կոմունիստները, վորոնք կարմիր դրոշակ եյին բարձրացրել ի պաշտպանություն Սորհրդային Ռուսաստանի: Ոգնում եր բոլոր յերկրների ժողովուրդների բանվոր դասակարգի միջազգային համերաշխությունը:

Մեծ Հոկտեմբերի գլխավոր մարտական ուժն եր հանդիսանում, նախ՝ կարմիր Գվարդիան, ապա բանվորա-գյուղացիական քաջարի կարմիր Բանակը, վորի մեջ և ամբողջովին ձուլվեց կարմիր Գվարդիան: Կարմիր Բանակի մեջ դեկավարող դեր եյին կատարում՝ Պետրոգրադի, Մոսկվայի, Իվանովո-Վոզնեսենսկու, Ուրալի, Դոնբասի, Թիֆլիսի, Բագվի և արդյունաբերական այլ կենտրոնների բանվորները: Բանվոր դասակարգն՝ իր մասսայական պատմական ակտիվությամբ, նախաձեռնությամբ, մասսայական հերոսությամբ ու ստեղծագործությամբ ձևակերպեց ու զողեց հեղափոխության մարտիկների անհաղթելի կարմիր ուժը: Աշխատանքի այդ փառավոր հերոսական բանակի կազմակերպիչն ու ավանգարդն եր հանդիսանում կոմունիստական

կուսակցութիւնը (բոյլշէկների)՝ մեծագույն հեղափոխական ու դիտնական, մարտիկ և ուսուցիչ Վլադիմիր Իլյէշ Լենինի գլխավորութեամբ:

Լեհաստանի ու Վրանգելի հետ հաշիվները տեսնելուց հետո, Խորհրդային Իշխանութիւնը սկսեց մեկ-մեկ վերջ տալ այն բանդաներին, վորոնք պարտիզանական կռիւներ եյին մղում: Այդ բանդաները, ինչպէս, որինակ՝ Մախնոյի, Անտոնովի, Զելյոնու, Նեչայևի և ուրիշներինը, ոգնութիւն ու հրահանգներ եյին ստանում արտասահմանյան իրենց ղեկավարներից: Յեւրոպական բուրժուազիան այդպիսով մտադիր եր յերկիրն այնպէս քայքայել ու քառս դարձնել, վոր ստիպված լինեյինք անձնատուր լինելու. «բուրժուազիայի բարեսրտութեանը»: Սակայն այդ դաժան ու նենգ խաղն ևս չհաջողվեց:

Բանդիտ-կուլակների դեմ մղվող կռվում մեծ ոգնութիւն ցույց տվին չքավորութեան կոմիտեները գյուղերում: Այդ կոմիտեները իրենցով ուժեղացնելով ու ամրապնդելով յերկրի ներքին պաշտպանութեան համար նշանակված զորքերի շարքերը, դրանով նպաստեցին պարտիզանական-կուլակային շայկաների արագ լիկվիդացիային:

Նեպի կիռառումից հետո, դասակարգերի պայքարը, կուլակների ու մասնավոր սեփականատերերի դեմ մղվող պայքարը միանգամայն նոր ձևեր ընդունեց: Դա հանդիսանում ե պայքարի յերրորդ փուլը: Այս վերջին փուլը զանազանվում ե նրանով, վոր այստեղ տեղի չունի զինված կռիւ: Պայքարը տարվում ե սիստեմատիկ կերպով, բայց խաղաղ եկոնոմիական միջոցներով: Կուլակի վրատուրքեր դնելու միջոցով, չքավորին ոգնութիւն հասցնելու միջոցով, չքավորին կոոպերացման յենթարկելու միջոցով և այլն: Բայց այդ պայքարը արդեն հանդիսանում ե մի մասը նոր սոցիալիստական շինարարութեան, վորի մասին կխոսենք հետևյալ գլխում:

Սորհրդային բանվորներն ու գյուղացիները չեն սահմանափակվում պայքար մղելով միայն Սորհրդային Միության շրջանակներում: Նրանք—ինտերնացիոնալիստներ են: Նրանք հրաշալի գիտակցում են, վոր կռիվը սոցիալիզմի համար, կռիվն ընդդեմ կապիտալի, — համաշխարհային կռիվ է: Ուստի և նրանք ոգնում են, ինչով վոր կարող են, ուրիշ յերկրների բանվորների ու ստրուկների հեղափոխական կռվին: Համ. Կ. Կ. (բ) և Կոմինտերնի դեկավարությամբ նրանք ոգնություն են ցույց տալիս անգլիական հանքափորերի գործադուլին, Չինաստանի ազգային-ազատագրական կռվին, ուրիշ յերկրների բանվորների պայքարին և զանազան գաղութների շարժումներին:

Մենք գիտենք, վոր համաշխարհային կապիտալը—մեր վոխերիմ թշնամին է: Մեզ ատում է մանավանդ Անգլիայի Ֆաշիստական կապիտալիզմը: Մենք նույնպես գիտենք, վոր միջազգային սլրուլետարիատի հաղթանակը, Չինաստանի, Հնդկաստանի և ուրիշ գաղութների հաղթանակը—մեր հաղթանակն է: Ուստի և մենք ամեն կերպ, կանգ չառնելով և վոչ մի զոհողության առաջ, կպաշտպանենք մեր Համ. Կ. Կ. (բ) և Կոմինտերնը:

Ինչպես Լենինն եր ասում՝ «Թող բուրժուազիան կատաղի, թող նա ե՛լի հազարավոր բանվորներ սպանի,— հաղթանակը մեր կողմն է, համաշխարհային կոմունիստական հեղափոխության հաղթանակը ապահովված է»:

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՍԸ ՏԱՐԻ

*Իմպերիալիստական պատերազմը կործանում է: Հեղափոխական կռիվը կազմակերպում ու ստեղծադործում է:*

Հեղափոխական կռիվը իմպերիալիստական պատերազմից տարբերվում է նրանով, վոր իմպերիալիստները, պատերազմելով, ավերում են, կործանում, մինչդեռ հեղափոխականները մի ձեռքով պայքարում են, մյուսով՝ կառուցում, վերականգնում: Իմպերիալիստները պատերազմում են՝ վորպեսզի հպատակեցնեն: Իսկ ժողովրդական մասսաները հպատակեցնել, նրանց հնազանդ ստրուկներ դարձնել հնարավոր է միայն այն դեպքում, յեթե իմպերիալիստներին հաջողվում է հիմնովին ավերել այդ մասսայի բները, քաղաքները, գյուղերը, նրանց զրկել ռիթեանից ու դարձնել անտուն-անտեր սովալլուկ մասսա: Յերբ, որինակ, անգլիացիները ուժակոծում են չինական և այլ քաղաքներ, ավերում են, բնակչությունը զրնդակահարում ու ամենքի վրա սարսափ տարածում,—նրանք իմպերիալիստական պատերազմ են մղում: Նրանք ավերում են, վորպեսզի ստրկացնեն:

Հեղափոխությունը կռվում է, վորպեսզի ազատագրի: Իսկ ժողովրդական մասսաները ազատագրել, նրանց գիտակցությունը, կամքը, ինքնագործնեյությունն ու եներգիան բարձրացնել կարելի յե միայն այն դեպքում, յեթե հեղափոխությանը հաջողվում է ժողովրդ-

դական մասսային ոգնել՝ վերականգնելու ու լայնացնելու  
իր տնտեսությունը, վերականգնելու և լավ հիմքերի վրա-  
դնելու ընթերցարանները, ակումբները, կոոպերատիվները  
և այլ հասարակական կազմակերպությունները: Հոկտեմ-  
բերյան մեծ հեղափոխությունը ցույց տվեց, վոր այնտեղ,  
ուր հայտնվում եր կարմիր բանակը, անմիջապես հավաք-  
վում ու հայտնաբերվում էյին բանվորական ու գյուղա-  
ցիական մասսաների ստեղծագործական ուժերը: Հեղա-  
փոխական հաղթական կռվին զուգընթաց կատարվում եր  
անդադար յեռուն ու շինարար աշխատանք, վորին մասնա-  
կից էյին արվում, վորին ակտիվ կերպով մասնակցում  
էյին տասնյակ միլիոնավոր ընկերներ: Սակայն, ինչպես  
կռվի, նույնպես և շինարարության պայմանները ան-  
նպաստ էյին: Ժամանակավոր անհաջողություն կռվում,  
հուսալքումն կամ պարտություն,— դրանք անխուսափելի-  
որեն խանգարում կամ նույնիսկ քայքայում էյին տնտե-  
սությունը: Բացի բելոգվարդեյականներից, բացի Դենի-  
կինից ու Կոլչակից, բացի ոտարյերկրյա բանակներից,  
վոտքի էյին յելած կալվածատերերն ու կապիտալիստները,  
վորոնք և բոլորը միասին գնդակահարում էյին, կախաղան  
բարձրացնում, գանակոծում գյուղացիներին ու բանվոր-  
ներին և նրանց քաղցի մատնում: Յեվ, ընդհակառակը,  
փառավոր կարմիր բանակի ամեն մի հաջողությունը կամ  
հաղթանակը ցնծություն եր պատճառում բանվորներին  
ու գյուղացիներին և դրա հետևանքով ամրապնդվում էյին  
տնտեսական կարողությունները ու շինարար աշխատանք եր  
կատարվում:

*Հոկտեմբերյան հեղափոխության շինարարության երեխ  
հիմնական շրջանները:*

Շինարարության ձևերը սերտ կերպով կապված են  
հեղափոխական կռվի ձևերին: Առաջինները ձևափոխվում

եյին այն չափով, ինչ չափով վոր դրանք կախված եյին  
յերկրորդների ձևափոխումից: Ընդհանրապես տնտեսական  
շինարարությունը, իսկ դրա հետ միասին ԽՍՀՄ բո-  
լոր այլ և այլ շինարարությունը պետք է բաժանել յերեք  
հիմնական շրջանների: 1) Այն ժամանակամիջոցը, յերբ  
բանվորական կառավարությունը տիրացավ այն բոլոր  
տնտեսական արժեքներին, վորոնք խլվեցին բուրժուա-  
զիայից ու կալվածատերերից: 2) Ռազմական կոմունիզմի  
ժամանակամիջոցը, այսինքն՝ յերբ քաղաքներում ու գյու-  
ղերում կոմունաները կառուցվում եյին քաղաքացիական  
տաք կռվի պուլսմյոտային կրակի տակ, ուստի և կառուց-  
վում եյին մեծ մասամբ ռազմական մեթոդներով ու ռազ-  
մական նպատակների համար: 3) Սաղաղ շինարարության  
ժամանակամիջոցը՝ քաղաքացիական պատերազմը վերջա-  
նալուց հետո: Այդ ժամանակամիջոցը կոչվում է անցո-  
ղական շրջան: Դա տնտեսական շինարարության այնպիսի  
մի շրջան է, վոր կատարվել է և շարունակվում է կա-  
տարվել բանվորների կազմակերպված սոցիալիստական  
արդյունաբերության, գյուղացիների կազմակերպված գյու-  
ղատնտեսական կոոպերացիայի, ինչպես նաև քաղաքային ու  
գյուղական ամեն տեսակի կոոպերացիաների հիման վրա:  
Հետևաբար՝ դա տնտեսավարման մի այնպիսի շրջան է,  
յերբ աշխատավորության լայն մասսաները, իշխանու-  
թյան գլուխ կանգնած պրոլետարիատի ղեկավարությամբ,  
հետզետե, սխտեմատիկ կերպով անցնում են սոցիալիս-  
տական տնտեսության շինարարության ձևերին:

Փորձենք համառոտ նկարագրել, թե այդ յերեք շր-  
ջաններից (յերբ հողերը, ֆաբրիկաները և գործարանները  
խլում են կալվածատերերից և կապիտալիստներից, յերբ  
ռազմական կոմունիզմի կարգեր են ստեղծվում, և վեր-  
ջապես՝ յերբ սահմանվում է նեպլը) յուրաքանչյուրում  
ինչ է արված տնտեսական բնագավառում:

Առաջին շրջան.—հողերի ու Վարրիկաների բռնագրավումն և կարվածատերերից ու կապիտալիստներից: Քաղաքում բանվորները վերցնում են Վարրիկաները, գյուղում — հողը սրվում և գյուղացիներին: Հակահեղափոխական դասակարգերը գրկվում են եկոնոմիական հեղափոխության:

Տնտեսական արժեքներին տիրանալու շրջանում բանվորա-գյուղացիական իշխանության խնդիրը կայանում է նրանում, վոր ժողովրդական տնտեսության ղեկավարությունը հանձնի նոր տիրոջը, այսինքն՝ ժողովրդին: Այդ նպատակով հրապարակվեցին մի շարք դեկրետներ և ձեռք առնվեցին մի շարք գործնական միջոցներ: Հրապարակվեց դեկրետ հողի մասին: Բոլոր հողերը, անտառները, հանքերը և այլն հայտարարվեցին ժողովրդի սեփականություն (ազգայնացվեցին): Յեւ վորպեսզի աշխատավոր ժողովուրդը գործնականապես տիրանար ժողովրդական այդ սեփականությանը, իր ձեռքը վերցնելը և սկսելը դրա մասին հոգալ, վորպես իր սեփականության, — տեղերում ամենուրեք սկսեցին կազմակերպել հողային կոմիտեներ, դրանց մեջ մասնակից անելով չքավոր գյուղացիական մասսաներին: Հրապարակվեց դեկրետ՝ բանկերի ազգայնացման մասին: Կապիտալիզմի ուժը, այդ թունավոր ոձի ամենագլխավոր խայթոցը գտնվում է դրամարկղում և մասնավոր կապիտալիստական բանկերի պահարաններում: Իր ձեռքերում պահելով վոսկյա լծակը, կապիտալիստը կառավարում է աշխարհը՝ իրեն յենթարկելով ու հպատակեցնելով ամենքին, ում հարկավոր է փոխառություն, ֆինանսական աջակցություն: Բանկերը հանդիսանում են տերապետության և ճնշման գլխավոր գործիք: Չի՛ կարելի պայքարել կապիտալիստների ու կապիտալիզմի դեմ՝ նրանց ձեռքերից չխլելով այդ գործիքը: Ահա թե ինչու Հոկտեմբերյան հեղափոխության առաջին դեկրետներից մեկը հան-

դիսանում ե բանկերի ազգայնացման դեկրետը: Բոլոր բանկերի վրա կոմիսարներ կարգվեցին բանվոր-կոմունիստներ, վորոնք կարողացան ամբողջ բանկային կազմակերպությունը համեմատաբար արագ յենթարկել բանվորա-գյուղացիական իշխանության կամքին: Դեկրետ հրապարակվեց Ֆաբրիկաների, գործարանների և շախտանների ազգայնացման մասին: Յեվ վորպեսզի պրոլետարական մասսաները տիրանային այդ հսկայական արտադրական մեքենային, վորպեսզի նրանք նրա մասին հոգային, ինչպես իրենց սեփականության մասին, և ըստ հարկին անցնեյին նրա կառավարման, հեղափոխությունը կյանքի ու գործնեյության կոչեց Ֆաբրիկ-գործարանային կոմիտեներին ու բանվորական մասսաների Ֆաբրիկ-գործարանային կազմակերպությանը:

Մի խոսքով, բանվորների ու գյուղացիների առաջավոր և ավելի գիտակից խմբերը դուրս վոնտեցին հին ճրնչողներին, կեղեքիչներին, կալվածատերերին ու կապիտալիստներին և հեղափոխական ժողովրդի անունից գրավեցին բոլոր կարևոր հրամանատարական տնտեսական դիրքերը:

Շնորհիվ այդ լենինյան տակտիկայի, հեղափոխությունը հաղթող հանդիսացավ, դուրս գալով հետագա բոլոր դժվարություններից: Ժողովրդի թշնամիներից խլվեց տնտեսական հենարանը: Նրանց մնում եր միայն մեկ միջոցի դիմել—փորձել ժողովրդի վրա զինված հարձակում գործելու՝ ոտարյերկրյա գորքերի ոգնությամբ: Բայց վորովհետև ոտարյերկրյա գորքերի մեջ մուտք եր գործել մեր յերկրի հեղափոխական բանվորների ու գյուղացիների հետ համերաշխ գործելու վոգին,—ապա և աշխատավորությանը կրկին հպատակեցնելու ու նրան վերստին կեղեքելու փորձերը վերջիվերջո ապարդյուն անցան: Բանվորներն ու գյուղացիները իրենց ձեռքերում պահեցին և սարսափելի կրակների միջից փրկեցին Հոկտեմբերյան մեծ նվաճումները:

Յերկրորդ շրջան.—Ամեն ինչ լրոնիսի համար, բանավորա-  
գյուղացիական հատրասակի համար: Կուշակից վերցվում  
է ավերցուկը: Կումուն. սոցիալիստական բաշխման կազ-  
մակերպություն:

Սակայն, քաղաքացիական զինված կատաղի ընդհա-  
րումների շրջանում, իհարկե, անկարելի չէր սովորական  
խաղաղ եկոնոմիական քաղաքականություն տանել: Տրանս-  
պորտը զբաղված էր գլխավորապես ռազմական տեղափո-  
խություններով: Փաբրիկաներն ու գործարանները պետք է  
աշխատեյին մեծ մասամբ ֆրոնտի կարիքների համար:  
Բանվորական ձեռքերն ու ձիերը նշանակալից չափով  
վերցրված էյին պատերազմի համար: Հարկավոր առարկա-  
ների արտադրությունը, ինչպես նաև գյուղատնտեսական  
պրոդուկցիան որեցոր կրճատվում էյին: Սվերվում էյին  
փորձնական դաշտերը, որինակելի տնկարանները և այլն:  
Մաշված էյին գյուղատնտեսական մեքենաները և ֆաբ-  
րիկ-գործարանային կահավորությունը: Յեվ այդպես—  
արտադրությունը հետզհետե կրճատվում էր, իսկ ռազմական  
պայմաններն որեցոր նորանոր պահանջներ էյին դնում  
պարենի, սպառագինման և հագուստի:

Այսպիսի արտակարգ բարդ, ու չտեսնված ծանր պայ-  
մաններում, կրակի տարափնների տակ ստիպված էյինք  
կյանքի նոր ձևեր գտնել ու նոր կյանք կառուցել: Ամե-  
նից առաջ պետք էր կուլակներին գյուղում, ինչպես նաև  
քաղաքային բնակչության անաշխատ մասին ամեն կերպ  
նեղել ու սահմանափակել: Այդ դասակարգերն ուղղակի  
անցել էյին ժողովրդի թշնամիների կողմը: Մյուս կողմից՝  
նրանք տեր էյին տնտեսական ու սպառողական հսկայա-  
կան ավելցուկների: Անհրաժեշտ էր այդ ավելցուկները՝  
ինչ գնով ել լիներ՝ նրանցից խլել: Անհրաժեշտ էր սահմա-  
նափակել ու պարենի վորոշ նորմա սահմանել աշխատա-

վորական ամբողջ մասսայի համար: Առանց այդպիսի  
ինքնագոհողության, թիկունքում առանց այդպիսի ինք-  
նասահմանավակման, հաղթանակը ֆրոնտում միանգամայն  
անկարելի կլիներ: Քաղաքի ու գյուղի ամբողջ աշխատա-  
վոր բնակչությունը հայտարարվեց սպառողական կոմունա,  
վորին ժողովրդական պարենավորման կոմիսարիատը մա-  
տակարարում էր պարենային քարտերով: Մատակարար-  
վում էր, իհարկե, չափազանց քիչ չափով: Լիովին ու միան-  
գամայն արգելվեց մասնավոր առևտուրն ու սպեկուլյա-  
ցիան: Հացի և գյուղական տնտեսության ուրիշ պրո-  
դուկտների ավելցուկները մասնատրման կարգով պետք է  
հանձնվեյին ժողովրդական պարենավորման կոմիսարիատի  
ազենտներին: Մեծ մասը գնում էր գորքի մատակարար-  
մանը, իսկ մնացածը բաժանվում էր քաղաքի բանվորնե-  
րին ու կարիքավոր գյուղացիներին: Միաժամանակ պար-  
ժողկոմի որգանները գյուղական կոմունաներին պարե-  
նային քարտերով մատակարարում էին աղ, մանուֆակ-  
տուրա, նավթ և արդյունաբերության այլ պրոդուկտներ:

*Ռազմական կոմունիզմը ոգևեց ֆանդեյու հին սայարասը,  
ջարդեյու կուրակ ու հարուս բշևամուս, հաղթեյու մեր յեվ  
ոսարյերկրյա կարվածասերերին ու բանկիրներին, ստեղ-  
ծեյու փառավոր Վարմիր բանակ, յեվ վոր գշխավորն է՝  
ընդմիշտ ամրասպեդեյու բանվորների ու գյուղացիների  
դաշինի:*

Ռազմական կոմունիզմի շրջանում ի՞նչ արդյունք  
տվեց Խորհրդային տնտեսական շինարարությունը: Նախ,  
նոր սոցիալիստական շենք կառուցելու համար պետք էր  
ամբողջովին քանդել ցարիզմի, կալվածատիրական ու կա-  
պիտալիստական հզորության բոլոր մնացորդները: Պետք  
էր կործանել այդ հինավուրց կեղեքման ապարատը, վոր-

պեսզի դրանից կարելի լիներ վերակառուցել ազատագրու-  
թյան և ժողովրդական կարողության ապարատ: Բայքա-  
յումը նախկին ցարական բանակի, զինվորների հլու հնա-  
զանդությանը վերջ տալը, վոր այսուհետև նրանք խոնար-  
հությամբ չլսեն ժողովրդի թշնամիներին՝ ցարական գե-  
ներալներին, ազնվականներին ու վաճառականներին, —  
ահա այդ կործանիչ աշխատանքը միաժամանակ հնարա-  
վորություն տվեց հնի ավերակների վրա կառուցելու նոր՝  
բանվորա-գյուղացիական բանակ: Մենք հինը կործանե-  
ցինք շնորհիվ այն հանգամանքի, վոր մենք կյանքի ու  
գիտակցության կոչեցինք հասարակության նոր դասա-  
կարգեր: Բայց միլիոնավոր աշխատավորության արթնա-  
ցումը, միևնույն ժամանակ ամենասուվոր հիմքն է հան-  
դիսանում նոր ապագայի արդյունավետ շինարարության  
համար: Մենք ցրեցինք տեղական ինքնավարության հին  
որգանները, քաղաքային ու գեմակի ուսրավաները, ուր  
տոն եյին տալիս կալվածատերերը, բուրժուազիան ու  
նրանց վարձկանները: Բայց դրա հետ միաժամանակ մենք  
սկսեցինք կառուցել ու կառուցեցինք ինքնավարության  
Խորհրդային կազմակերպություն: Այդ կազմակերպության  
մեջ առանք միլիոնավոր քաղաքացիների: Գավառամասային,  
գավառային, նահանգային և հանրապետական համագու-  
մարներին մասնակցում են միլիոնավոր աշխատավոր տղա-  
մարդիկ ու կանայք, վորոնք այսուհետև մասնակից են  
արվում մշտական ակտիվ խորհրդային աշխատանքի՝ գա-  
նազան կոմիսիաներում և ուրիշ կազմակերպություննե-  
րում: Մենք ցրեցինք ֆաբրիկաների ու գործարանների  
կառավարման հին մասնատիրական ապարատները: Բայց  
այդ մենք կարողացանք անել նրա շնորհիվ, վոր արթնա-  
ցրինք ամբողջ մասսան — թե՛ կուսակցական և թե՛ անկու-  
սակցական բանվորների մասսան: Իրանով մենք հիմք  
դրինք ֆաբրիկ-գործարանային ձեռնարկությունների պրո-

լեւտարական որդաններին կառուցմանը: Մենք վանտեցինք  
կալվածատերերին ու նրանց վոհմակը, մենք կուլակից  
վերցրինք ավելցուկը ու թուլացրինք նրա գազանային  
ախորժակը: Մենք այդ կարողացանք անել նրա շնորհիվ,  
վոր դարթեցրինք ու սլալքարի կոչեցինք գյուղի չքավոր  
մասսային, մենք այդ կարողացանք անել շնորհիվ նաև այն  
հանգամանքի, վոր մեզ համակրում ու միաժամանակ ոգ-  
նում էին գյուղի միջակները: Այդ սլալքարի մեջ վտաքի  
կանգնեց և ամրացավ չքավորությունը ու ամրապնդեց  
իր դաշինքը միջակի հետ: Այդ հնարավորությունն ավեց  
նոր տնտեսական քաղաքականություն ընտրելու ու կիրա-  
ռելու, ինչպես նաև նոր տնտեսական կազմակերպություն  
ստեղծելու գյուղում:

Այդ փոփոխությունը, հեղափոխական այդ ցատկուն  
հնից դեպի նորը, իհարկե, աժան չնստեց: Խորհրդային  
հանրապետութեան բանվորներին ու գյուղացիներին թույլ  
չէին տալիս հանգիստ զբաղվելու իրենց կյանքի ու յեր-  
կրի կառուցումով: Մեզ դիմադրելու համար միացան բո-  
լոր կապիտալիստական յերկրների բուրժուական կալվա-  
ծատիրական կողոպտիչները: Բայց մեր ուժը կայանում  
էր նրանում, վոր վո՛չ միայն բանվորները, այլ և գյու-  
ղացիները արդեն սովորել էին հասկանալ, վոր Խորհր-  
դային Իշխանությունից դուրս իրենց համար փրկություն  
չկա: 1920 թվի դեկտեմբերին Խորհուրդների VIII Համա-  
ռուսական Համագումարին Լենինն իր ճառում պատմեց, թե  
գյուղացիները ինչպես են վերաբերվում դեպի հեղափոխու-  
թյունը: Այն ժամանակ սկսված էին բանակցությունները  
Անգլիայի հետ: Անգլիայի պնդածակատ սև-հարյուրակային  
կոնսերվատորները ամեն կերպ հակառակվում էին այդ  
համաձայնութեան կնքման: Նրանք ձգտում էին չափազանց  
շատ կոնցեսիաներ ձեռք բերելու. նրանք ցանկանում  
էին, վոր մենք նրանց տայինք մեր նավթը, վոսկի պա-

բունակող հողերը և այլն: Յեւ ահա Լենինը պատմում է, թե ինչպես Նիժեգորոդսկի նահանգի, Արզամասսկի դա- վառի համագումարին անկուսակցական գյուղացին նակագ եր տալիս Համառուսական Համագումարին մեկնող իրենց ընտրած պատգամավորներին: Նա ասում էր. «Ընկերներ, մենք ձեզ ուղարկում ենք Համառուսական Համագումար և հայտարարում, վոր մենք, գյուղացիներս, պատրաստ ենք ևս յերեք տարի տանելու ցուրտն ու քաղցը, ամեն տեսակ զրկանքներ կրելու, միայն թե մեր Ռուսաստանը կոնցեսիաներով չվաճառեք»: Յեւ Լենինը, վորպես Հոկտեմ- բերյան հեղափոխության առաջնորդ, ասաց. «Յես չափա- զանց ուրախ եմ վողջունելու նման տրամադրությունները, վորոնք շատ և շատ լայն են տարածված»:

Ռազմական կոմունիզմի շրջանի ամենագլխավոր նվա- ճումն այն է, վոր հերոսական կռիվների կրակների մեջ կռվեց ու կոփվեց բանվորների և գյուղացիության բազ- մամիլիոն մասսաների դաշինքը: Դենիկինը, Կոլչակը և բոլոր մյուս բելոգվարդեյականները գյուղացիներին հրով ու սրով սովորեցրին հասկանալ, վոր վերջիններս պետք է համերաշխ ընթանան բանվոր դասակարգի հետ, վոր նրանք ունեն մեկ ընդհանուր թշնամի—կողոպտիչ շահագործողը, վոր նրանք ունեն մեկ ընդհանուր բարեկամ—իրենց հա- րազատ բանվորա-գյուղացիական իշխանությունը:

### Համոզումն յեւ հարկադրանք:

Յերբ անհրաժեշտ էր, ստիպված էյինք դիմելու հար- կադրանքի: Լինում էյին դեպքեր և՛ զորալքության, և՛ սաբոտաժի: Հին ցարական ստրկական շրջանից մենք ժա- ոանգել էյինք սարսափելի տգիտություն ու խավար: Մարդկային թույլ կողմերը չափազանց համառ են լինում: Յեւ ստիպված էյինք լինում գործելու նաև ռազմական

հարկադրանքի մեթոդներով. սակայն մենք հաղթեցինք շնորհիվ այն հանգամանքի, վոր հարկադրական մեթոդների կողքին, մենք ամենից շատ գործադրում եյինք համոզումի մեթոդներ, այդ ձևով եյինք ազդում: Քյուղացիական և բանվորական մասսաների մեծ մասը իրենց փորձով համոզվում եյին հեղափոխական մեծ գործի ճշմարտության և անհրաժեշտության մեջ: Հարցի այս կողմը՝ համոզումի ու հարկադրանքի կապակցությունը՝ մատնանշեց Լենինը իր վերոհիշյալ ճառում, Խորհուրդների VIII Համագումարում:

Լենինը բացատրեց, վոր քաղաքացիական պատերազմը և նրա խնդիրները գյուղացիների ու բանվորների մասսայական հասկացողության համար համեմատաբար պարզ են ու ըմբռնելի: Մասսան առաջ ե շարժվում մեծագույն գոհողությունների գնով, մասսան հայտնաբերում ե պատմության մեջ շտեմնված հերոսություն, վորովհետև նա գիտե ու պարզ հասկանում ե, թե ում դեմ և հանուն ինչի յե կռվում: Այժմ, քաղաքացիական զինված պատերազմից հետո, այն բանից հետո, յերբ մենք ազատվել ենք ոտարյերկրյա զորքերի բլոկադայից ու ինտերվենցիայից, պետք ե անցնել խաղաղ շինարարության: Պետք ե հանգիստ, մտածված և ուշադրությամբ սկսել կառուցել ու վերականգնել յերկրի տնտեսությունը: Պետք ե վերականգնել տրանսպորտը, պետք ե վերականգնել կամուրջներն ու յերկաթուղիները, արհեստային արտադրությունը, գյուղական տնտեսությունը: Ե՛լ ավելին: Պետք ե լայնացնել մեր ընդհանուր տնտեսությունը և լավ հիմքերի վրա դնել: Մենք պետք ե սովորենք արտադրել ավելի, քան մինչև պատերազմը: Առավել ևս: Մենք պետք ե գյուղացու ու բանվորի համար ավելի լավ կյանք ստեղծենք, քան այն կյանքը, վոր նա ուներ ցարի ու պամեշչիկների որով: Մենք պետք ե հսկայական յեռանդուն

աշխատանք ծավալենք: Մենք այդ աշխատանքին ըստ կարելույն պետք է մասնակից անենք բնակչության բոլոր աշխատավոր մասսաներին: Անհրաժեշտ է վոր յուրաքանչյուր աշխատավոր տնտեսական շինարարության գործի մեջ դնե իր ամբողջ կամքը, իր ամբողջ խելքը, կենսական փորձն ու գործնական հնարագիտությունը:

Հետևապես՝ խնդիրը կայանում է նրանում, վոր ուղի մական կոմունիզմից դեպի նոր խաղաղ տնտեսական շինարարության անցնելիս կարողանանք այնպիսի գիծ, գործողության այնպիսի ծրագիր գտնել, վորը հասկանալի լիներ ամեն մի հասարակ գյուղացուն ու բանվորին: Անհրաժեշտ է վոր գյուղացիության չքավոր և միջակ մասաները հասկանան և համոզված լինեն, վոր սոցիալիստական տնտեսությունը մասնավոր տնտեսությունից լավ է: Անհրաժեշտ է վոր նրանք փորձով որեցոր համոզվեն, վոր կոոպերացիան, նրանց տնտեսական ջանքերի միացումը, իրենց ոգուտ է բերում: Իրա համար ել մեր տրտեսավարները, պետական արդյունաբերության ու կոոպերացիայի աշխատավորները պետք է յեռանդով գործեն: Նրանք պետք է ցույց տան, վոր կարող են մասնավոր սեփականատերից ավելի լավ աշխատել և ավելի լավ ու եժան ապրանք արտադրել: Իրենց հաջողություններով նրանք պետք է համոզեն խորհրդային յերկրի նոր տիրոջը — բանվորին ու գյուղացուն, վոր խորհրդային տնտեսությունը մասնավոր տնտեսությունից շատ առավելություններ ունի:

Իհարկե, դեռ այժմ էլ, և դեռ յերկար տարիներ առանց հարկադրանքի գործ կատարել չի լինի: Քանի դեռ գոյություն ունի աշխատանքի դեզերտիր, սպեկուլյանտ և սաբոտաժնիկ, — մինչ այն ժամանակ յերբեմն ստիպված ենք լինում և ստիպված կլինենք բռնություն գործադրել: Բանվորներն ու գյուղացիները հենց դրա հա-

մար ել ստեղծել են Սորհրդային Իշխանություն, վորպես  
զի նա ուժով ստիպի հպատակել աշխատավորության  
կամքին: Սորհրդային Իշխանությունը ուժով պաշտպա-  
նում եւ և պետք եւ պաշտպանի Հոկտեմբերի մեծ նվա-  
ճումները: Բայց ուժը մենք պետք եւ գործադրենք աշխա-  
տավորության թշնամիների դեմ, հեղափոխական որինա-  
կանությունը խանգարող հանցագործների դեմ: Իսկ բա-  
րեկամների հետ—աշխատավորության հետ, չքավոր ու մի-  
ջակ գյուղացիների հետ, մանավանդ այն դեպքերում,  
յերբ նրանք չեն հասկանում Սորհրդային Իշխանության  
քաղաքականությունը,—մենք պետք եւ համբերությամբ  
խոսենք, վոչ թե հարկադրանքի լեզվով, այլ համոզումի  
լեզվով: Այսոր նրանք իրենք տգիտության պատճառով  
յետ են մնացել մեզնից: Իսկ վաղը, համոզվելով այն բա-  
նում, վոր մենք իրավացի յենք, նրանք կընթանան մեզ  
հետ և կոգնեն մեզ՝ ընդհանուր ուժերով կառուցելու աշ-  
խատավորության ազատ թագավորություն:

Նոր *սისტեմական խղիփականություն*: Քյուղացիև ազա-  
կարող եւ շուկա դուրս գալ: Նրա *սისტեմական փորձը* նրան  
կսովորեցնի ընտրություն անել՝ թե վո՞րն եւ իրեն համար  
շահավետ—մասնավոր սպեկուլյա՞նսը, թե՞ իր կոոպերա-  
տիվը: Սոցիալիստական *սისტեմությունը* աշխատավորության  
համար ավելի շահավետ եւ:

Ահա թե Լենինը ինչպես եր մեզ սովորեցնում մոտե-  
նալ աշխատավոր մասսային. «Ընկերաբար, յեղբայրաբար  
բացատրել և համոզել»: Հենց այդ հիման վրա յել կառուց-  
ված եւ Սորհրդային Իշխանության ամբողջ նոր տնտեսա-  
կան քաղաքականությունը:

Ի՞նչ եւ նշանակում—պարենմասնատրումից պարեն-  
հարկին անցնելը: Այդ ամենից առաջ, նշանակում եւ—գյու-

դացուն հնարավորութիւնն եւ տրված, վոր նա ազատ, ինչ-  
պես ուղում եւ վարվի իր հացի, իր պրոդուկտների ավելցուկի  
հետ: Այդ ավելցուկներն, ինչպես ապրանք, նա վաճառում  
եւ ազատ շուկայում փողով: Իսկ ստացած փողով նա կըր-  
կին ազատ շուկայում գնում եւ իր գործածութեան կամ  
իր տնտեսութեան պետքերի համար առարկաներ: Ազատ  
շուկայում գյուղացին հանդիսւում եւ, և դեռ միառժամա-  
նակ կհանդիսի, մասնավոր կապիտալին՝ մի կողմից, և  
պետական ու կոոպերատիւ կապիտալին՝ մյուս կողմից:  
Գյուղացին սուր դիտել դիտեւ և հաշվով ապրող եւ, լավ  
տնտեսարար եւ: Դիտողութիւններն ու փորձի միջոցով նա  
կսովորի ատել մասնավոր առևտրականին և կգերադասի  
ու իր աջակցութիւնը ցույց կտա պետութեանն ու կոոպե-  
րացիային: Չքավոր ու միջակ գյուղացիական մասսաները  
սոցիալիստական շինարարութեան ուղիով կընթանան վոչ  
թե հարկադրանքի, այլ համոզումի ճանապարհով: ԽՍՀՄ  
աշխատավորութեան հարյուրհիսուն միլիոնանոց մասսան,  
կազմակերպված շարքերով, բանվոր դասակարգի ղեկավա-  
րութեամբ, սկզբում դանդաղ, իսկ հետո ավելի ու ավելի  
արագ կընթանա սոցիալիստական պայքարի ու շինարա-  
րութեան ուղիով:

Քննենք, թե ինչպես եւ գյուղացու դրութիւնը՝ նոր  
տնտեսական քաղաքականութեան պայմաններում:

Իրավական փոխառութիւն.— Չունենոր գյուղացին  
տնտեսական տարվա վերջը սովորաբար կարիք եւ զգում  
մի քիչ պարտք վերցնելու՝ մինչև նոր բերքը ստանալը:  
Այդ—սպառողական նպատակների համար եւ: Բացի դրա-  
նից, գյուղացին բազմաթիւ դեպքերում կարիք եւ զգում  
փոխառութեան՝ տնտեսական նպատակների համար սեր-  
մացու, կենդանի և մեռյալ ինվենտար գնելու համար և  
այլն: Յեւ յերբ գյուղացին դիմում եւ մասնավոր անձի,—  
կուլակին, ինչպիսի՞ պայմաններով եւ նա փոխառութիւն

ստանում: Սարսափելի տոկոսներով, ստրկական պայման-  
ներով: Նախ՝ ամսական հաշվում են 5—10—15 տոկոսով,  
յերկրորդ՝ գրավ ե վերցվում հողը, ապագա բերքը. յեր-  
րորդ՝ բացի դրանից՝ պարտապանի վրա ևս մի ուրիշ պար-  
տավորութուն ե դրվում—ոգնել կուլակին խոտը հավա-  
քելու, արտը հնձելու և այլն: Չքավոր կամ նույնիսկ մի-  
ջակ գյուղացին կուլակի ցանցն ընկնում ե այնպես, վոր  
այլևս շատ դժվար ե լինում նրա ճանկերից ազատվելը:  
Ուրիշ բան ե, յերբ չքավոր կամ միջակ գյուղացին փո-  
խառութունը ստանում ե պետութունից կամ իր կոռպե-  
րատիվից: Թե փող ստանալիս, թե ապառիկ մեքենա,  
տրակտոր ստանալիս, նա, ամենից առաջ ստանում ե շըն-  
չին տոկոսներով և յերկրորդ՝ ստանում ե այնպիսի ժամ-  
կետով, վորի ընթացքում պարտքը վճարելը նրա ուժերից  
վեր չե: Ուրիշ վոչ մի պայման, ուրիշ վոչ մի վճար գո-  
յութուն չունի: Գյուղացին փորձով տեսնում ե, վոր կու-  
լակը նրա թշնամին, նրա արյուն ծժողն ե: Գյուղացին  
համոզվում ե, վոր իրեն և իր տնտեսության համար ավելի  
շահավետ ե, յերբ կապիտալը գտնվում ե վոչ թե մասնա-  
վոր մարդկանց, այլ բանվորա-գյուղացիական խորհրդա-  
յին պետության, կամ խորհրդային կոռպերացիայի ձեռ-  
քում:

Արտադրութուն.— Գյուղացին (չքավորը կամ նույնիսկ  
միջակը) տեսնում ե, վոր ինքը յերբ իր տնտեսութունը  
մենակ ե վարում, ուրիշներից անջատ, հասարակութու-  
նից անջատ, ապա չե կարող հուսալ, վոր իր թույլ  
տնտեսութունը արագ և հարկավոր շափով կբարելավվի:  
Տնտեսության տերը մեն-մենակ անկարող ե հողը ան-  
հրաժեշտ միջոցներով պարարտացնել, ագնիվ տեսակի սեր-  
մեր գործադրել, լավագույն յեղանակով հողը հերկել ու  
մշակել, հնացած յեռադաշտյան սիստեմից բազմադաշտ-  
յանին անցնել, ագնվացեղ տավար ունենալ, նոր և

Թանկարժեք մեքենաներ ձեռք բերել, ցանոդ, հնձոդ մեքենաներ, տրակտոր, սեպարատոր՝ կաթնալիս տնտեսութեան համար, մեքենաներ՝ բամբակամշակութեան, կտավատի համար, կարտոֆիլի և ճակընդեղի բերքը ազնվացնել, թուփուհի մշակութեամբ պարապել, այգեգործութեանը ավելի լավ հիմքերի վրա դնել և այլն, փաստատուների դեմ—մորեխի, յերաշտի և այլ թշվառութեանների դեմ կռուիլ և այլն: Ուրիշ բան է, յերբ չքավորներն ու միջակ գյուղացիները միանում են ու կազմում իրենց գյուղատնտեսական ընկերութեանները, կոլլեկտիվ, արտելային և կոոպերատիվ տնտեսութեանները: Ընդհանուր ուժերով, ինչպես նաև իրենց խորհրդային իշխանութեան աջակցութեամբ կարելի յետ գործը ավելի լավ հիմքերի վրա դնել և ավելի շատ արդյունք ստանալ: Կոլլեկտիվ տնտեսութեանը կամ կոոպերատիվը շատ ավելի հեշտութեամբ կարող է փոխառութեան ձեռք բերել տեղական կամ պետական բյուջեյից կամ բանկից: Բանկը խորհրդային է: Բյուջեն կարգադրում են բանավորների ու գյուղացիների խորհուրդները: Ուրեմն և ամեն բան այդ ուղղութեամբ կարվի ամենանպաստավոր պայմաններով գյուղատնտեսական լայն փոխառութեան տալու համար: Կոոպերատիվում ավելի գերադասելի յետ, ավելի հեշտ է ապահովագրել մորեխի, կարկուտի, յերաշտի դեմ և այլն: Գյուղացին՝ այդպիսով, փորձով համոզվում է, վոր տնտեսութեամբ պարապել մեն-մենակ, այդ կնշանակի յետ մնալ, աղքատանալ, տնտեսավարութեան աշխատանքի հին պատենական ձևերն ու մեթոդները շարունակել: Ընդհակառակը, նա տեսնում է, վոր յետ ինքը անդամ է վորեք կոլլեկտիվ կամ կոոպերատիվ տնտեսութեան, նա հնարավորութեան է ստանում իր տնտեսութեանը լայնացնելու և հարստացնելու: Կոոպերատիվի անդամի կամ կոլլեկտիվ տնտեսութեան անդամի տարեկան յեկամուտն

ավելի՛ յե, քան այն գյուղացուներ, վորն իր տնտեսու-  
թյունը մեն-մենակ ե վարում: Ուրեմն վոչ թե հարկա-  
դրելու, այլ միայն համոզելու միջոցով կարելի յե գյու-  
ղացուն սովորեցնել այդ ամենին. միայն համոզվելու մի-  
ջոցով գյուղացին կընթանա իր արտադրությունը կոոպե-  
րացնելու և կոլլեկտիվացնելու ուղիով:

Ապրանխափոխանակութիւն. — Գյուղացին իր պրո-  
դուկցիան տալիս ե կամ մասնավոր առևտրականին,  
կամ կուլակին, և կամ իր կոոպերատիվին ու պետական  
պարենավորող կազմակերպութեանը: Մասնավոր առևտրա-  
կանն, իհարկե, ճարպիկ ե: Նա կաշվից դուրս ե գալիս,  
վորպեսզի ծախողին խաբի: Կոնկուրենցիայի նպատակով  
նա գյուղացուն հաճախ առաջարկում ե շատ ավելի բարձր  
գին, բայց հենց վոր գյուղացին նրա ճանկն ե ընկնում,  
նա իսկույն սկսում ե նրան քերթել՝ վորքան կարող ե —  
կամ սնդում ե, վոր քաշն ե սակաս, կամ հատկությունը  
վատ ե, ուրեմն և գեղջ պետք ե անել, կամ դարայի մեջ  
կխաբի, կամ, ձևանալով վորպես բարեգործ, փոխառու-  
թյուն կտա և ապագայում դրա համար վաշխառուական  
վարձատրություն կվերցնի և կամ յերբեմն գյուղացուն  
կառաջարկի իր ապրանքը փոխանակելու ավագակային  
թանկ գնով: Մասնավոր առևտրականի բոլոր խորաման-  
կությունները թվել չի կարելի: Ի վերջո գյուղացին, վորին  
մասնավոր առևտրականը իբր թե լավ գին եր տված, տուն  
ե վերադառնում դատարկ գրպանով: Իսկ ինչպես ե ցըն-  
ծում այդ մասնավոր առևտրականը, յերբ շուկայում ապ-  
րանք առաջարկող գյուղացիներ շատ են լինում: Այն ժա-  
մանակ նա նրանց կաշին ուղղակի քերթում ե: Ուրիշ բան  
ե — պետական պարենավորողը կամ իր սեփական կոոպե-  
րատիվը: Այնտեղ վոչ մի սպեկուլյացիա թույլատրելի չե:  
Այնտեղ ինքը գյուղացի վաճառողն անձամբ կարող ե  
ստուգել և չափը, և քաշը, և գինը, և այն՝ թե ինչպես

պետք է ընդունեն իր ապրանքը, և այն՝ թե իր ապրանքը հետո ուր է ուղարկվում և ինչ նպատակով: Լինելով կոպերատիվի փայտեր և խորհրդի ընտրող, ամեն մի գյուղացի կամ ինքն անձամբ և կամ լիազորի միջոցով կարող է հավաստիանալ, թե արդյոք իր նկատմամբ ճիշտ է վարվել պետական կամ կոոպերատիվային գնողը: Պատահում են, իհարկե, և՛ անարդարություններ, և՛ հանցագործություններ: Բայց դրանք տեղի յեն ունենում վորպես բացառություններ: Իրենց՝ գյուղացիներից և բանվորներից, նրանց նախաձեռնությունից և ինքնագործնելությունից, նրանց կոնտրոլից ու հսկողությունից է կախված պետական ու կոոպերատիվային ապարատի բարելավումը, այդ ապարատը ծուլերից ու հանցագործներից զերծ պահելը: Մենք գյուղացուն ու բանվորներին ասում ենք. «Լավ հետևիր, ուշադիր տերություն արա, և քո կոոպերատիվում կունենաս ազնիվ գործակատար ու քո պետութայան մեջ՝ ազնիվ ծառայող»:

Գյուղացին իր համար անհրաժեշտ ապրանքը գնում է կամ մասնավոր առևտրականից ու կուլակից, կամ կոոպերատիվից ու պետական խանութից: Գյուղացին հետզհետե համոզվում է, վոր մասնավոր առևտրականը և՛ թանկ է ծախում, և վատ ապրանք է տալիս: Մասնավոր առևտրականը սակայն գիտե թե ինչպես մոտենա գնողին ու նրան մոլորեցնելով՝ խաբի: Մեր կոոպերատիվային և պետական խանութները դեռևս չեն սովորել ինչպես հարկն է լավ վարվելու գնողի հետ, բայց նրանք արդեն սովորել են ավելի աժան ծախելու, քան մասնավոր առևտրականը: Այդ, իհարկե, դեռ քիչ է: Դեռ շատ բան պետք է անել, վորպեսզի սպառողական կամ պետական խանութը սովորի անհրաժեշտ ապրանքը ժամանակին հասցնելու գնողին, և այն ել՝ առանց հերթի, առանց ձգձգումների: Իսկ մեր կոոպերատիվային և պետական խանութների հե-

տազա բարելավումը կախված է հենց մեզանից\*)։ Մենք գյուղացուն և բանվորին ասում ենք. «Լավ հետևիր, տերը դու յես, ակտիվ փայտեր յեղիր, այցելիր ընդհանուր ժողովները, մասնակցիր խանութի կոմիտեաներում, այցելիր վերստուգիչ հանձնաժողովի, վարչության բաց ժողովները, այցելիր պրոֆմիությունների, գյուղխորհրդի ժողովները և այլն, քո ձայնը լսեցրու, հայտնիր քո պահանջների մասին, ոգնիր խորհրդով, ցուցմունքով, ոգնիր գործով և դու կունենաս հրաշալի կուլտուրական կոոպերատիվային պետական խանութ»։ Գյուղացին, այդպիսով, փորձով տեսնում է, վոր մասնավոր առևտրականն ու կուլակը նրան խաբում են ու քերթում։ Նա տեսնում ու համոզվում է, վոր կոոպերատիվային և պետական առևտուրը իր և իր տնտեսության համար ձեռնտու յեն, և վոր հենց իրենից, իր սեփական ակտիվությունից և ուշադիր վերաբերմունքից է կախված կոոպերացիայի և պետական առևտրի հետագա բարելավումը։ Վոչ թե հարկադրանքի, այլ միայն հասկացնելու, համոզելու միջոցով պետք է անգիտակից գյուղացուն և բանվորին ընդհանուր գործի մեջ քաշել և նրանց դարձնել կոոպերատիվ միությունների գիտակից և գործունյա ընկերներ, սոցիալիստական պետության գիտակից քաղաքացիներ։

\*) Վերջերս ամենքն էլ նկատում են, վոր կոոպերատիվում այս կամ այն ապրանքը յերբեմն սլակաս և լինում. ի՞նչ է դրա պատճառը.— ա՛յն, վոր յերբ կոոպերատիվը իր կենտրոնից նոր ապրանք է ստանում այնպիսի քանակությամբ, վոր լիուլի կբավականացներ սպառողների պահանջին, մասնավոր խանութպանը կոոպերատիվի առաջ իսկույն հերթի յե կանգնեցնում իր բարեկամներին, յերեխաներին, թոռներին ու ծոռներին և ապրանքի զգալի մասը հավաքում իր խանութն և վաճառում կրկնակի գնով, իսկ կոոպերատիվում տվյալ ապրանքից միառժամանակ պակասություն է զգացվում՝ մինչև նոր պարտիան ստանալը։ Պետք է խիստ կուլել նաև այդ ձևի սպեկուլիացիայի դեմ։

Նոր սևեռասկան ֆադասկանության հաջողությունները:  
Ծաղկում են արդյունաբերությունը, գյուղական սևեռա-  
բյունը, սրահայտը: Վաշտակում են շերտները: Վառու-  
ցում են սոցիալիզմ: Անում են մասսաների սկսիվորթյունն  
ու կուշտարականությունը: Բանվորների, չֆավոր յեվ միջակ  
գյուղացիների ամրապինդ դաշինքը փոխյացրել է բեռ-  
գվարդեյչիկնային: Վազմված են ազգային հանրապետ-  
թյուններ յեվ ավստրոնոմ շրջաններ: Ոգնում են բոլոր յեր-  
կրների բանվորների պայքարին յեվ բոլոր ձևոված ժողո-  
վուրդների հեղափոխական պայքարին:

Այժմ պատմենք, թեկուզ և շատ համառոտ, այն հրա-  
կայական հաջողությունների մասին, վորոնք լենինյան  
քաղաքականության շնորհիվ ձեռք են բերված մեր տըն-  
տեսական և պետական շինարարության բոլոր բնագա-  
վառներում, մեր Խորհրդային Հանրապետության միջազ-  
գային դրության մեջ, ինչպես և այն պայքարում, վոր  
խորհրդային բանվորներն ու գյուղացիները ամբողջ աշ-  
խարհի բանվորների ու գյուղացիների հետ միասին մղում  
են ավագակ-խմպերիալիստների, կալվածատերերի ու բան-  
կիրների դեմ՝ աշխատավոր մարդկությունը լիովին ազա-  
տագրելու համար, սոցիալիզմի համար:

Փիկանսները.—Նախ պետք է շեշտել այն հանգամանքը,  
վոր բանվորա-գյուղացիական իշխանությանը հաջողվեց  
կայուն դարձնել փողը (չերվոնեց): Ամենքը հիշում են,  
թե ինչպես, դեռ շատ մոտիկ անցյալում, մեր յերկրի Ֆի-  
նասական դրությունը միանգամայն քայքայված էր: Բա-  
ղաքացիական պատերազմի շրջանում յերկրում, նրա գա-  
նազան մասերում շրջանառություն ունեյին և ռոմանով-  
ների թղթադրամները, և՛ կերենկիները, և՛ «դումայական»  
փողերը, և ուկրայինական, և՛ խորհրդային ռուբլիները, և՛  
վրացական, և՛ հայկական, և՛ Ադրբեջանի ու զանազան

վայրերի տեղական թղթադրամները: Պարզ է, վոր թղթադրամների այդպիսի հեղեղատի հետևանքով փողի ուժն ու նշանակութունը հետզհետե ընկնում էր: Սակայն Սորհրդային Իշխանության հաղթանակից հետո՝ անդամ, անկարելի չէր իսկույն վերականգնել դրամանիշի արժեքը: Նախ՝ վոսկու պաշարը նշանակալից չափով նվազած էր: Սրա մի մասը մենք ստիպված էյինք վճարել ըստ Բրեստի պայմանագրի: Մի մասը թալանել էյին չեխո-սլովակների լեզիոններն ու բելոգվարդեյշինան: Մի մասն էլ մենք ստիպված էյինք ուղարկել արտասահման՝ վճարելու համար այնտեղ մեր գնած ամենաանհրաժեշտ ապրանքների առաջին պարտիայի դիմաց, — գյուղատնտեսական մեքենաներ, քարածուխ, պարավոզներ և այլն: Վոսկու պաշարին մեծ հարված հասցրեց 21 և 22 թվի սարսափելի սովը: Այն յերկիրը, վոր սովորաբար կերակրում էր վոչ միայն իրեն, այլև հաց էր վաճառում ուրիշ յերկրների, ստիպված էր, շնորհիվ տարերային թշվառության, արտասահմանից բերել տալ հաց, սերմացու և այլ մթերքներ: Իսկ ընդհանուր քայքայման հետևանքով մենք վոչինչ չունեյինք ծախելու արտասահմանին: Ստիպված էյինք ամենինչի համար վճարել վոսկի փող:

Յերկրորդ. պետության յեկամուտները, վորոնք ասպահովում են ուրբլու արժեքը, այն ժամանակ չափազանց նվազ էյին, բնակչութունը չափազանց աղքատ էր, հյուժված: 1922 թվի աշնանը (սրանից միայն հինգ տարի առաջ) ընկեր Լենինը մեր դրության մասին զեկուցեց Կոմինտերնի IV կոնգրեսին: Այն ժամանակ նա կարող էր հաղարտանալ միայն շատ փոքրիկ հաջողութունով: Նա կոնգրեսին հայտնեց, վոր նեպի առաջին տարվա ընթացքում հաջողվել է տնտեսել և կուտակել քսան միլիոն վոսկի ուրբլի: «Ճիշտ է, — ասում էր Լենինը, — կապիտալը շատ փոքր է, բայց յես կարծում եմ, վոր՝ նշանակալիցն ու

վճռողականը այստեղ հանդիսանում է այն հանգամանքը, վոր մենք հնարավորութիւն ունենք մի քիչ տնտեսելու, և այդ մենք կանենք նաև հետագայում»:

Չպետք է մոռանալ, վոր այդ հաջողութիւնը ձեռք բերվեց՝ ունենալով յեկամտային բյուջե 1.500.000 վոսկի ուրբի, առանց ոտարերկրյա փոխառութիւնների, այն ել՝ սովի տարում: Բանվորների և գյուղացիների միայն ընդհանուր համերաշխ աջակցութիւնը կարող էր նպաստել մեր ժողովրդական տնտեսութիւնը զարգացման ուղիների վրա դնելու: Այժմ յերկրի յեկամտային բյուջեն արդեն ավելի քան 5 միլիարդ ուրբի յե (5.000.000.000): 1926—27 տարվա մուտքի և յելքի ամբողջ բյուջեն կազմում է տասը միլիարդից ավելի: Խորհրդային կառավարութիւն տրամադրութիւն տակ գտնված տնտեսված ու կուտակված կապիտալների ընդհանուր քանակը ավելի քան 4 միլիարդ ուրբի յե: Մեր արտաքին առևտրի մեջ մենք արդեն հասել ենք այն վիճակին, վոր արտասահման ապրանք ավելի շատ ենք ուղարկում, քան այնտեղից ստանում ենք: Այդպիսով վոսկին հոսում է վոչ թե մեր յերկրից արտասահման, այլ արտասահմանից—մեր յերկիրը: 1926—27 տարում արտասահմանից կուտակվող վոսկու քանակը Խորհրդային Իշխանութիւն սահեւտներում կհասնի մոտ 100 միլիոնի:

Ահա՛ թե ինչու մեր խորհրդային շերվոնեցը այնպես կայուն է: Խորհրդային կառավարութիւնը վարում է ապրանքների գների իջեցման քաղաքականութիւն: Բանվորներն ու գյուղացիները համոզվեցին, վոր իրենք կարող են միանգամայն վստահել իրենց սեփական խորհրդային կառավարութիւնը: Նրանք իրենց տնտեսած դրամները պահ են տալիս պետական խնայողական դանձարկղներում: Նրանք սիրով ընդառաջ են գնում պետական ներքին փոխառութիւն: Այդ կերպ նրանք հնարավորութիւն են տա-

լիս Խորհրդային Իշխանությանը լայն կերպով Ֆինանսա-  
վորելու գյուղացիական տնտեսությունը, զարգացնելու  
արդյունաբերությունը և ժողովրդական տնտեսության  
դանազան բաժիններ:

Գյուղական տնտեսությունը. — Խորհրդային Իշխանու-  
թյան հարկային քաղաքականությունը տարվում է այն-  
պես, վորպեսզի չքավոր գյուղացուն կարելի լինի ազա-  
տել գյուղատնտեսական ծանր հարկից, միջակ գյուղա-  
ցուց քիչ վերցնել, իսկ հարկի գլխավոր ծանրությունը  
գցել կուլակի վրա: 1926 — 27 տարում գյուղատնտեսա-  
կան հարկից բոլորովին ազատված են վեց միլիոն ծուխ:

Մյուս կողմից՝ Խորհրդային Իշխանությունը ուղղակի  
սզնություն է ցույց տալիս գյուղատնտեսության չափա-  
վոր և միջակ մասսաներին: Վարկ է բաց թողնվում հո-  
ղաշինարարության համար, իսկ չքավորների համար հո-  
ղաշինարարական աշխատանքների ծախսերի մի մասը պե-  
տությունը իր վրա յե վերցրել: Միայն վերջին յերկու տա-  
րում գյուղացիներին տրված է պետական հողային ֆոն-  
դից մոտ 9 միլիոն դեսյատին: Գյուղացիներին են հանձ-  
ված տեղական նշանակություն ունեցող անտառներ — մոտ  
21 միլիոն դեսյատին: Լայնացրած է սերմնաբուծական  
տնտեսությունների և որինակելի տնկարանների ցանցը:  
Ստեղծված է պետական սերմնային մի մեծ ֆոնդ: Գյու-  
րացված են գյուղին գյուղատնտեսական մեքենաներ մա-  
տակարարելու պայմանները, ճահիճներից ցամաքեցրած  
շրջաններում գյուղական տնտեսություն ստեղծելու համար  
ծախսված է մոտ 70 միլիոն ռուբլի: Գյուղատնտեսական  
վարկի համար բաց է թողնված մոտ 140 միլ. ռուբլի: Բացի  
այդ, կազմված է չքավոր գյուղացիության հատուկ ֆոնդ,  
վորին կենտրոնական կառավարությունը հատկացրել է  
10 միլիոն ռուբլի, իսկ տեղական իշխանությունները այդ  
ֆոնդը մեծացնում են բավական մեծ գումարներով: Գաղ-

Թափանության կարիքների համար բաց է թողնված 27 մի-  
լիոն ուսուցիչ: Կայնացրած է գյուղատնտեսական պրո-  
դուկտների մշակության նոր ձեռնարկությանց ցանցը:  
Վերականգնած են բամբակաբուծությունը, կտավաբուծու-  
թյունը և գյուղատնտեսական ուրիշ տեխնիքական կուլ-  
տուրաների արտադրությունը: Գյուղատնտեսական մե-  
քենաներ այժմ ավելի յեն արտադրվում, քան մինչև պա-  
տերազմը: Շատ առաջ է տարվում դաշտերը տրակտորով  
մշակելու գործը: Ավելացած է հողաշինարարական և ագ-  
րոնոմիական պերսոնալը: Այժմ ավելի շատ թվով գյու-  
ղացիներ են մասնակից արվում հողային որդաններին:  
Առանձնապես կարևոր են այն արտոնությունները,  
վոր արվում են կենդանաբուծությունը զարգացնելու և  
աավարի քանակը ավելացնելու համար: Յեղջյուրյավոր  
անասունների թիվն այժմ արդեն շատ ավելի յե, քան  
պատերազմից առաջ: Յեռանդուն միջոցներ են ձեռք  
առնվել, վոր յերկրում լինեն այնքան ձիեր, վորչափ  
կային պատերազմից առաջ: Հաստատուն է դարձված գա-  
վառական բուջեյի նյութական հիմքը:

Աշխատավորության ինքնագործնեյության և Խորհրդային  
Իշխանության ոգնության հետևանքով գյուղատնտեսու-  
թյան պրոդուկցիան համարյա լիովին հասցված է մինչպա-  
տերազմյան չափին, այսինքն՝ մոտավորապես 10 միլիարդ  
վոսկի ուսուցիչ: Սակայն, շնորհիվ նոր մեքենաների ուժեղ  
գործադրման, շնորհիվ գյուղի ելեքտրիֆիկացիայի (վորի  
վրա արդեն ծախսված է 250 միլիոն ուսուցիչ), շնորհիվ հո-  
ղամշակության բազմադաշտյան սիստեմին անցնելուն և  
ինտենսիվ կուլտուրաների աճման, մեր գյուղական տնտե-  
սությունը մոտակա տարիներում շատ ավելի մեծ չա-  
փերի կհասնի, քան մինչև պատերազմն էր: Մյուս կող-  
մից՝ պետք է հենց այստեղ հիշատակել, վոր մինչև պա-  
տերազմը պրոդուկցիայի հսկայական մասը անցնում էր

կալվածատերերի ու վաշխառուների ձեռքը: Այդ պատճառով ել գյուղացին և նրա ընտանիքը քաղցում եյին նաև լավ բերքի տարիներին: Իսկ այժմ, Խորհրդային Իշխանության որոք, գյուղատնտեսական ամբողջ պրոդուկցիան պատկանում է գյուղացուն: Ահա՛ թե ինչու գյուղացին այժմ ավելի լավ է սնվում, լավ է հագնվում, և առհասարակ ավելի լավ կյանք վարում:

*Արդյունաբերությունը.*—Արդյունաբերության մեջ ամենազգլխավորը — դա ուժի հարցն է, շարժական և մարդկային բանվորական կենդանի ուժի հարցն է: Կապիտալիզմը զարգացել է շոգու ուժի վրա: Սոցիալիզմը կկառուցվի ելեքտրական ուժի վրա: Ապագան ելեքտրականությանն է պատկանում և՛ գյուղատնտեսության մեջ, և՛ արդյունաբերության մեջ:

Մինչև պատերազմը ելեքտրոարդյունաբերությունը մեզ մոտ չափազանց քիչ էր զարգացած: Լենինը առաջ քաշեց ԽՍՀՄ ելեքտրականացման սլանը, ստացավ Խորհուրդների համագումարի խրախուսանքն այդ սլանի վերաբերմամբ, գործի կոչեց այդ աշխատանքի համար լավագույն ընկերներին ու մասնագետներին: Դրա հետևանքով մենք հասանք այն վիճակին, վոր ելեքտրոկայանների մշակումը 1926—27 տարում չորս ու կես անգամ ավելի յե, քան 1923—24 տարում, և համարյա երկուս ու կես անգամ ավելի յե մինչպատերազմյան ժամանակի մշակումից: Մենք կառուցեցինք Վոլխովստրոյ, Զագես, հիմք ենք դրել Ինեպրոստրոյի: Մենք կառուցել ենք ու շարունակում ենք կառուցել շատ ելեքտրոկայաններ, ինչպես և նոր ֆաբրիկաններ վոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում, վոչ միայն կենտրոնում, այլև մեր մեծ Միության հանրապետությունների ու ավտոնոմ շրջանների մեջ: Մեր խընդիրն է—ամենակարճ ժամանակամիջոցում մեր տնտեսությունը բարձրացնել նախապատերազմյան չափից յերկու

անգամ ավելի, բոլոր աշխատավորների կյանքը դարձնել բախտավոր, հարուստ: Իրա համար պետք է, ինչպես մեզ սովորեցրել է Լենինը, գյուղական լծկանից անցնել ելեքտրական մատորին:

Արդյունաբերությունը կարիք ունի վառելիքի, ինչպես ստամոքսը — հացի: Քաղաքացիական պատերազմն ու ինտերվենցիան մեր վառելիքային տնտեսությունը ծայրաստիճան քայքայեցին: Վրացական մենշևիկների շնորհիվ (Ծերեթելի, Չխեյիձե, Ժորդանիա և այլն) անգլիացիները մեզ զրկել էին նավթից: Մեր լավագույն ընկերներին, Բագվի և Գրոզնու պրոլետարիատի ղեկավարներին «անկախ» վրաստանի ախրանկան՝ անգլիական դահիճների հետ դաշնադիր՝ գնդակահարեցին կամ կենդանի-կենդանի ավազների մեջ թաղեցին: Թագավորական-մենշևիկյան հակահեղափոխությունը զրկեց բանվորա-գյուղացիական սոցիալիստական տնտեսությունը կարևորագույն վառելիքային նյութից — նավթից:

Դենիկինի բանդաները ավերել էին Դոնբասի (Դոնի ավազանի) քարածուխի արդյունաբերությունը: Սկզբում ստիպված էինք վառելիքի համար գործադրել բացառապես փայտ, տորֆ և այլն: Սակայն կարճ միջոցում, շնորհիվ բանվորների հերոսական ջանքերի, հաջողվեց վառելիքային տնտեսությունը վերականգնել: Դեռ էլ ավելին: Նավթ և քարածուխ մենք այժմ ավելի՛ յենք արտադրում, քան մինչև պատերազմը:

Առաջին ներմուծումն արտասահմանից 1922 թվին — 18 1/2 միլիոն փուլ քարածուխ էր: Մինչդեռ այժմ մենք արտադրում ենք տարեկան յերկու միլիարդ (2.000.000.000) փուլ քարածուխ: Ինքներս գործադրում ենք և դեռ արտահանում ենք քարածուխ և անտրացիտ — Մերձավոր-Արևելք, Իտալիա և Ֆրանսիա: Նավթ էլ ենք արտահանում մեծ քանակությամբ՝ մեր սեփական կարիքները բավարա-

րելուց հետո: Իսկ այս ամենը արված է միայն 3—4 տարվա ընթացքում:

Բանվորական կենդանի ուժն ևս ավելացել է և այդ բանվորության կյանքը բարելավվել: Աճում է աշխատանքի և՛ քանակը, և՛ վորակը: 1923—1924 տար. խոշոր ձեռնարկություններում արտադրական բանվորներ կային մեկ ու կես միլիոն, իսկ 1926—1927 տար.—յերկու և կես միլիոնից ավելի: Ուրեմն բանվորների թիվը աճել է ավելի քան մեկ միլիոնով: Բանվորի տարեկան միջին աշխատավարձը 1923—1924 տար. հավասար էր 422 ռուբլու, իսկ 1925—1926 տար.—812 ռուբլի յե:

Ինկատի ունենալով այն հանգամանքը, վոր սպառողական ապրանքների գները ընդհանուր առմամբ իջեցված են մոտավորապես 25%, այդ հաշվով, ուրեմն, բանվորի կյանքը 1926—1927 տար., համեմատած 1923—1924 տար. հետ, բարվոքվել է յերկու անգամ:

Իրան սլետք է ավելացնել նաև զանազան ձևի սոցիալական ապահովագրությունները — հանգստի տուն, բժշկումն, նպաստներ հղիության ժամանակ, յերեխայի համար, մանկամսուրներ և այլն: Սոցիալական ապահովագրության համար 1926—1927 տար. ամսական տրվում է մոտ 65.000.000 ռուբլի: Աշխարհումս չկա և վոչ մի յերկիր, ուր բանվորի ու գյուղացու համար կառուցվելին հանգստի տներ, ուր աշխատավորության մասին այդչափ հոգային: ԽՍՀՄ — աշխատավորության իսկական և աշխարհումս դեռևս եզակի հայրենիքն է:

Բանվորներն իրենց հերթին խիստ ավելացրել են արտադրողականությունը: Արտադրության ընդհանուր պրոդուկցիան 1923—1924 տար. հավասար էր մոտ հինգ միլիարդ ռուբլու, իսկ 1926—1927 տար. հավասար է մոտ տասնևմեկ միլիարդ ռուբլու: Գյուղացու և բանվորի համար ամենաանհրաժեշտ, ամենից շատ հարկավոր առար-

կաների արտադրութիւնը ավելացել է համարյա յերեք անգամ: Ավելացել է նաև մեքենաների, գործիքների և այլն արտադրութիւնը: Ընդհանուր առմամբ վերցրած, մենք արդեն անցնում ենք մինչպատերազմյան ժամանակի պրոդուկցիայի շրջանակներից: Հսկայական հաջողութիւններ ենք ունեցել նաև տրանսպորտի վերականգնման գործում:

Սոցիալիզմ. պայտար մասնավոր առեւտրականի յետ կուշակի դեմ.—Այստեղ ևս մենք մեծ հաջողութիւններ ենք ունեցել: Ճանապարհը ցույց էր տվել Լենինը: Մի կողմից, պրոլետարիատի ձեռքում գտնված սոցիալիստական արդյունաբերութիւնը, բանկերը, տրանսպորտի միջոցները, մյուս կողմից—գյուղացիական կոոպերացիոյ տնտեսութիւնը: Շնորհիվ կոոպերացիայի, գյուղը ուժեղանում է, միանում, կազմակերպվում: Չքավոր գյուղացին միանում է միջակ գյուղացու հետ ու ձեռք է մեկնում բանվորին: Սոցիալիստական պետական և կոոպերատիվ տնտեսութիւնները միասին ձգում են նեպմանին ու կուլակին: Փորձը ցույց է տալիս, վոր Լենինի խոսքերը կատարվում են:

1926—1927 տար. մենք արդեն հետևյալ նվաճումներն ենք տեսնում կոոպերացիայի մեջ: Վարկային կոոպերատիվներ կան 10 հազար՝ մոտ 10 միլիոն անդամներով: Տնայնագործական արհեստային կոոպերացիայի մեջ կան մոտ 600 հազար տնայնագործներ, վորոնց պրոդուկցիան հասնում է մոտ 600 հազար միլիոն ռուբլու: Գյուղատնտեսական կոոպերացիան խիստ զարգացել է, կազմելով բազմաթիվ հատուկ կենտրոններ—հացի, կտավատի յուղի, պտուղների, գինու, կարտոֆիլի և այլն և այլն: Գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ կազմակերպված անդամների ընդհանուր քանակն է մոտ 6 միլիոն: Ընդհանուր ապրանքային պրոդուկցիան հավասար է մոտ մեկ միլիարդ ռուբլու: Շրջանառութիւնը ավելի քան յերկու միլիարդ ռուբլի յե: Սպառողական կոոպերացիան միայն

դյուղական վայրերում խանութներ ունի ավելի քան 70 հազար: Փայտեր անդամների ընդհանուր քանակը 12 միլիոնից անցնում է: 1926—1927 տար. շրջանառությունը հասնում է մոտ 10 միլիարդ ուրբու: Վորովհետև յերկրի ընդհանուր ապրանքաշրջանառությունը հավասար է 24 միլիարդ ուրբու, ապա սպառողական կոոպերացիայի շրջանառությունը կազմում է ընդհանուր ապրանքաշրջանառության 40%:

Կառավարության ձեռք առած միջոցների և աշխատավորության ինքնագործնեյության շնորհիվ, կոոպերացիան և պետական առևտուրը խիստ նեղում են մասնավոր առևտրականին: Մասնավոր առևտրականի համար ամենաշահավետը սպտովի առևտուրն է: Բացի այդ, սպտովիկը կազմակերպում է իր հատավաճառը: Բայց մասնավոր առևտրականը սպտովի առևտրով զբաղվելու հնարավորությունից միանգամայն զրկված է — նեղված է ու դուրս շարտված: Սպտովի առևտրի 91% պատկանում է կոոպերացիային և պետառին, իսկ մնացած 9% — մասնավոր առևտրականին, — ուրեմն շրջանառության  $\frac{1}{10}$  մասից ել քիչ: Հատավաճառում մասնավոր առևտրականը 1923—1924 տար. ունեւր համարյա 90%, այժմ նա ունի 35%: Կոոպերացիայի հետագա զարգացումը մասնավոր առևտրականին բոլորովին դուրս կլուծուե նաև հատավաճառի ասպարիզից: Պետք է ասել և այն, վոր արտադրության մեջ կապիտալիստները ունին միայն 5%: Իհարկե, նեպմանն ու կուլակը փրնտում են ամեն մի միջոց, վորպեսզի կեղեքեն ու աշխատավորության հաշվին վոսկի դիզեն: Բայց համառ ու գիտակից սլայքարի և ս մի քանի տարի, և նրանց ընդդիմադրությունը կկոտրվի: Պետք է ամեն ջանք գործ դրվի՝ ամրապնդելու համար և՛ սոցիալիստական արդյունաբերությունը, և՛ կոոպերացիան: Կոմունիստական կուսակցությունը և Յորհրդային Իշխանությունը ինդուստրացման

կուրս են բռնել: Կառուցվելու յեն խոշոր գործարաններ  
և ֆաբրիկաներ: Ավելացվելու յե արտադրությունը: Ան-  
հրաժեշտ ե, վոր մենք ինքներս սովորենք շինել մեզ հա-  
մար անհրաժեշտ մեքենաներ, ելեքտրոկայաններ, գետա-  
լին և ծովային նավեր, պարավոզներ և այլն և այլն: Մյուս  
կողմից՝ անհրաժեշտ ե կոռպերացման յենթարկել և միա-  
ցնել գյուղացիական տնտեսությունները: Պետք ե ոգնել  
կազմակերպելու մեքենաների ընկերություններ, յուղա-  
գործության, գինեգործության, բամբակագործության և  
ուրիշ ընկերություններ: Պետք ե ոգնել վարկով, խորհուր-  
դով, դեկավարություն ցույց տալով: Մեր ուժը—մեր աշ-  
խատանքային ու մարտական ջանքերի միացման և ընդ-  
հանրացման մեջ ե:

Սոցիալիզմի աճման գործում կոռպերատիվը մեծ դեր  
ունի կատարելու:

*Պուշտուրա. հասարակական կազմակերպութեան մասին.*—  
Պետք ե սովորել լինել իսկական սոցիալիստ: Ինքնակալու-  
թյան որոք ժողովրդին թույլ չեյին տալիս սովորելու:  
Տգիտությունն ու խավարը մեզ ժառանգություն են մնա-  
ցած մեր ստրկական անցյալից: Իզուր չեր, վոր Լենինը  
պնդում եր, վոր մենք կարիք ունենք կուլտուրական հե-  
ղափոխության: Մենք պետք ե ավելի փորձառու, ավելի  
խելոք դառնանք, պետք ե գիտություններ սովորենք և  
կուլտուրական հասարակական ունակություններ ձեռք բե-  
րենք: Այլապես դեմոկրատիայի մասին խոսքերը դատարկ  
հնչյուններ են: Ի՞նչ շահ, վոր միլիոնավոր մարդիկ իրա-  
վունք են ստացել ձայն տալու, յեթե նրանք անգրագետ  
են, յեթե նրանք խավար են, յեթե նրանց կարելի յե խա-  
քել, յեթե նրանք չգիտեն ու չեն հասկանում, թե ինչ և  
ինչպես պետք ե անել: Իսկական դեմոկրատիան (վոչ թե  
բուրժուական, կեղծ, այլ պրոլետարական) այն ե, ուր  
աշխատավորության մասսաները սովորում են, ուր նրանք

մասնակից են արվում հասարակական կազմակերպչական ակտիվ աշխատանքին:

Լուստողկումը և Անգրագիտության վերացման Ընկերությունը հսկայական ծառայություններ են մատուցել հեղափոխությանը: Մի քանի վայրերում արդեն փաստորեն մտցված է ընդհանուր ուսուցում: Յերկրի նույնիսկ ամենախուլ անկյուններում անգրագիտության վերացման աշխատանք է տարվում թե տղամարդկանց և թե կանանց շրջանում: Առաջ, մանավանդ գյուղերում, բուրբուլին ուշադրություն չեր դարձվում մանավանդ կանանց գրագիտություն սովորեցնելու գործին: Իսկ կնոջ համար, մոր համար նույնչափ անհրաժեշտ է գրագետ լինել, ինչպես և տղամարդու համար: Յեթե մայրը գրագետ է, ապա նրա դաստիարակած յերեխաները ավելի գիտակից կլինեն: Յեթե կինը գրագետ է, ապա ուրեմն մենք կունենանք գիտակից աշխատավորուհի, գիտակից գեղջկուհի, գիտակից քաղաքացի, գիտակից մարտիկ՝ ընդդեմ կապիտալի: Ահա թե ինչու Սորհրդային Իշխանությունը հավասարապես ուշադրություն առարկա յե դարձրել թե տղամարդկանց և թե կանանց շրջանում անգրագիտությունը վերացնելու խնդիրը:

Աշխատանքը կանանց շրջանում, մանավանդ Արևելքի ավելի յետամնաց, շահագործվող կանանց շրջանում, պատմական հսկայական նշանակություն ունի: Չպետք է մոռանալ, վոր կանայք կազմում են մարդկության կեսը: Նույնչափ կարևոր է և այն աշխատանքը, վոր տարվում է կոմսոմոլի ու պատանի պիոներների շրջանում: Սովորում են և՛ դպրոցից դուրս և՛ դպրոցում—ստորին, միջնակարգ դպրոցում, բանֆակներում, բարձրագույն կրթական հիմնարկություններում: Սովորում, հասունանում ու զարգանում է առաջին մեծ Սորհրդային յերկրի աշխատավոր բնակչությունը, հեղափոխության մարդկության 150 միլիոնանոց բանակը:

Բանավորներն ու գյուղացիները սովորում են վոչ մի-  
 այն լավ ապրելու, կառուցելու, այլև մարտնչելու: Նրանք  
 գիտեն, վոր կապիտալիստ իմպերիալիստները ամեն կող-  
 մից մեզ հետապնդում են և սլատրաստվում են մի որ մեզ  
 վրա հարձակվելու: Դրա համար ել մենք ամենուրեք, տե-  
 դերում և կենտրոնում, կառուցում ենք ամրոցներ—հեղա-  
 փոխութեան հույսը՝ մեր բանավորա-գյուղացիական կարմիր  
 բանակը: Յերկրային բանակների կազմակերպման գործը  
 հաջողութեամբ ե առաջ տարվում: Աշխատավորութեանը  
 սիրով աջակցում ե ՊԱԶԸ-Ավիաքիմի բոլոր նախաձեռնու-  
 թեաներին: Իմպերիալիստներից մեզ ամենից շատ սպառ-  
 նում ե անգլիականը, ամենակատաղի ու ամենաստոր բուր-  
 ժուազիան: Նա ավազակային աշխատանք ե կատարում  
 աշխարհիս բոլոր մասերում: Նա ճնշում ու կեղեքում ե  
 յեզիպտացիներին, թուրքերին, արաբներին, հնդիկներին,  
 մուսուլմաններին, նեգրերին, չինացիներին և այլն: Ուր  
 անգեն մարդիկ են տեսնում, այնտեղ կեղեքիչ-լորդերը  
 հարձակվում են նրանց վրա ու կաշիները քերթում: Բայց  
 Հոկտեմբերյան մեծ հեղափոխութեանը, Արևմուտքի և  
 Արևելքի աշխատավոր ժողովուրդների յեզրայրական Սոր-  
 հրդային Միութեան գոյութեանը, կոմիներնի և տեղա-  
 կան կոմկուսակցութեաների աշխատանքը արթնացնում  
 են նվաճված յերկրների ստրուկներին: Կեղեքիչ-լորդերը  
 դգում են, վոր իրենց դրութեանը խախտվել ե, վոր մո-  
 տենում ե այն որը, յերբ իրենք սլետք ե իրենց ստրուկ-  
 ների դատաստանի առաջ կանգնեն, դրա համար ել նրանք  
 չափազանց կատաղած են ԽՍՀՄ դեմ—բոլոր կեղեքված-  
 ների դեկավարի դեմ: Նրանք առիթ ու հարմար դեպք են  
 փնտռում, վորպեսզի պատերազմ սկսեն բանավորների ու գյու-  
 ղացիների դեմ, վորպեսզի վերադարձնեն կալվածատերերի,  
 կապիտալիստների, իշխանների ու թագավորների տիրա-  
 պետութեանը:

Մեր կարմիր բանակի մարտական ու անհաղթ ուժը պետք է ամեն կերպ պահպանվի ու ամրապնդվի: Ամբողջ աշխատավոր ժողովուրդը պետք է գործով ոգնի մեր Խորհրդային Հանրապետության ինքնապաշտպանությանը:

Բավական կլինի համառոտակի թվել հասարակական այն կազմակերպությունները, վորոնք ընդգրկում են ընկեր բանվորներին ու գյուղացիներին, պայծառացնում են նրանց գիտակցությունը, հարստացնում նրանց փորձը, ամրապնդում նրանց կամքը և այդ ուղղում ոգտակար գործի վրա: Խորհուրդները տեղերում, խորհուրդներին կից ամեն տեսակի կոմիտեաները ընդգրկում են ավելի քան 2—3 միլիոն առաջավոր ընկերների: Պրոֆմիությունները՝ 10 միլիոն անդամներով, ամեն տեսակի կոոպերացիաները՝ 25—30 միլիոն անդամներով, կանանց շարժումը, կոմսոմոլը, պիոներները, ՊԱՋԼ-Սովիաքիմը, անգրագիտության վերացման ընկերությունը, Ֆաբրիկ-գործարանային կոմիտեաները և վերջապես այդ ամբողջ Խորհրդային հասարակայնության գլուխ կանգնած՝ կոմունիստական կուսակցությունը՝ ավելի քան մեկ միլիոն անդամներով: Այդ բոլոր և դրանց նման հասարակական, քաղաքական, տրնտեսական ու կուլտուրական կազմակերպությունները դեպի իրենց են քաշում ամեն մի աշխատավորի ու զարգացնում նրա խելքը, ամրապնդում նրա կամքը: Խորհրդային այդ հասարակայնության մեջ աճում և ուժեղանում է նոր պրոլետարական դեմոկրատիա և նոր պրոլետարական կուլտուրա:

Ազգային հանրապետությունների յեւ Միության շինարարությունը.—Աշխարհումս և վոչ մի յերկրում ազգային հարցը չի կարող վճռվել այնպես պարզ ու հասարակ, ինչպես մեզ մոտ՝ Խորհրդային Միության մեջ: Կապիտալիստական յերկրներում—դիկտատուրան բուրժուազիայի ձեռքումն է: Բուրժուազիան շահագրգռված է նրանում, վոր

զանազան ազգություններ իրար հետ թշնամի լինեն: Նա  
նրանց իրար դեմ ե գրգռում նրա՛ համար, վորպեսզի հնա-  
րավոր լինի ամեն մի ազգությունը առանձին ճնշել ու  
կեղեքել: Տարական Ռուսաստանում կեղեքված ազգու-  
թյունները բնակչության մեծամասնությունն էյին կազ-  
մում: Շատ ազգություններ միանգամայն իրավագուրկ  
էյին, իսկ նրանցից մի քանիսը, ավելի յետամնացները,  
ավելի անկուլտուրականները, ինչպես՝ կիրգիզները, բաշ-  
կիրները, կալմիկներն և այլն գտնվում էյին միանգամայն  
ստրկական վիճակում, կեղեքվում էյին և քաղցից ուղղակի  
մահանում:

Խորհրդային իշխանությունը առաջինը հայտարարեց,  
վոր ամեն մի ազգություն իրավունք ունի ինքնորոշվելու,  
մինչև իսկ միությունից բաժանվելու: Խորհրդային Իշխա-  
նությունը գործով ասլացուցեց, վոր բանվորա-գյուղացիա-  
կան յերկրում չկա և չի կարող լինել ազգային ճնշում:  
Ընդհակառակը, ամեն մի ազգությանը լիովին հնարավոր-  
ություն ե արվում կազմակերպելու իր ավտոնոմ շրջա-  
նը՝ իր ինքնավարությամբ, դպրոցով ու դատարանով, իր  
գրականությամբ և իր հասարակական կազմակերպություն-  
ներով՝ իր մայրենի լեզվով: Յեվ քանի վոր տեղական բյու-  
ջեն չի բավականացնում, կենտրոնական կառավարություն-  
նը ամեն տեսակի ոգնություն ե ցույց տալիս ի հաշիվ  
Միության ընդհանուր յեկամուտների: Ամեն տեղ բարե-  
լավվում ու ամրանում ե աշխատավորության տնտեսու-  
թյունը—թե՛ գյուղատնտեսությունը և թե՛ արդյունաբե-  
րական արտադրությունը: Տարվում են դետինը բարելա-  
վելու և ջրաբաշխական գործի աշխատանքներ: Յետա-  
մնաց շրջանները ելեքտրիֆիկացիայի յեն յենթարկ-  
վում: Այսպես, կառուցվում են Փաբրիկ-գործարանային  
ձեռնարկություններ, հաղորդակցության ճանապարհներ:  
Արթնացվում ու վտարի յե կանգնեցվում գիտակից և

ինքնուրույն կյանքի ու գործնեյության համար ամենա-  
յետամնաց, ամենախավար բնակիչը սարահարթների, տուն-  
դրաների ու տայգաների: Վորսորդները, կիսաթափառա-  
կան խաշնարածները, ձկնորսները, համարյա նախապատ-  
մական ձևով հողը մշակող անգրագետ ու խավար մաս-  
սաները կազմակերպվում են խորհուրդների մեջ, հիմնում  
են կոոպերատիվներ, անգրագիտության վերացման ընկե-  
րություններ և այլն: Ամենախուլ անկյուններում անց է  
կացվում ելեքտրականության ճառագայթը, անթել ռադիո-  
կայծը և Լենինի բոյլշևիկյան կոչը՝ վե՛ր յե՛լնել, սովորել  
կազմակերպվել և միասին, բանվոր դասակարգի ղեկավա-  
րությամբ, կառուցել նոր լուսավոր սոցիալիստական հա-  
սարակայնություն:

Մեր Խորհրդային Միությունը բաղկացած է վեց հիմ-  
նական անկախ հանրապետություններից. 1) Ռուսաստանի  
ՍՖՍՀ՝ 100,5 միլիոն բնակչությամբ, 2) Ուկրայինայի  
ՍՍՀ՝ 28,5 միլիոն բնակչությամբ, 3) Բելոռուսիայի ՍՍՀ՝  
4,9 միլիոն բնակչությամբ, 4) Անդրկովկասի ՍՖՍՀ՝ 5,8  
միլիոն բնակչությամբ, 5) Ուզբեկստանի ՍՍՀ՝ 5,1 մի-  
լիոն բնակչությամբ և 6) Թուրքմենստանի ՍՍՀ՝ 1 մի-  
լիոն բնակչությամբ:

Այնուհետև, ՌՍՖՍՀ-ը, իր հերթին բաժանված է 44  
նահանգների, 4 առանձնացված շրջանների (Ուրալի շրջ-  
ան, Հյուսիսային Կովկաս, Սիբիր, Հեռավոր Արևելք) և  
23 ավտոնոմ ՍՍՀ ու ավտոնոմ շրջանների, այն է՝ Բաշ-  
կիրիայի ավտ. ՍՍՀ, Բուրյատ-մոնղոլական, Դաղստանի,  
Կազակստանի, Կարելիայի, Ղրիմի, Մերձ-Վոլգյան գերմա-  
նացիների, Թաթարների, չուվաշների, յակուտների, վոտ-  
յակների, կալմիկների, դարա-կալպակների, Կիրգիզիայի,  
կոմի-զիրյանների, մարիների, ոյրատների, ադիգեյցիների,  
Ինգուշեթիայի, կարարդա-բալկարական, դարաչայ-չերքեզ-  
ների, հյուսիսային Ոսեթիայի և Չեչենիայի: Վերոհիշյալ

հանրապետութիւններին և շրջաններին, բնակչութեան քանակով ամենափոքրը Ինգուշեթիան է, վորը ունի միայն 69 հազար բնակիչ: Ամենամեծը — Կադակատանն է՝ հինգ միլիոն բնակչով: Յերկրորդ տեղը բռնում է թաթարականը (2.800.000 բնակիչ), յերրորդ տեղը Բաշկիրիան (2.400.000 բնակիչ): Վերոհիշյալ բոլոր ավտոնոմ հանրապետութիւններում ու շրջաններում Խորհրդային ԽՍՀՄ-ի կողմից ազատագրված են ու յեղբայրական աշխատակցութեան կոչված ավելի քան 18 միլիոն աշխատավորներ: Հիշված չորս շրջաններում (Ուրալ, Հյուսիսային Կովկաս, Սիբիր, Հեռավոր Արևելք) ապրում են մոտ 16 միլիոն բնակիչ: Այդպիսով, ՌՍՖՍՀ մյուս 44 նահանգներին ընկնում է մոտ 62 միլիոն բնակիչ, այսինքն՝ Միութեան ազգաբնակչութեան մոտ 45%: Ուկրայինայի ՍՍՀ մեջ առանձնացված ու կազմված է Մոլդավիայի ավտոնոմ ՍՍՀ: Մենք տեսնում ենք, վոր սահմանի այն կողմում՝ Ռուսիայում կեղեքվում ու քայքայվում է Բեսարաբիան, հալածվում ու ճնշվում են բանավորներն ու գյուղացիները, ուկրայինացիներն ու մոլդավացիները, — այստեղ, Խորհրդային Միութեան մեջ, նրանք իրավահավասար ժողովուրդ են և ազատ կառուցում են իրենց կյանքն ու կուլտուրան: Պիլսուդսկու Լեհաստանում հետասնդվում են, բանտերը նետվում ու ընչազուրկ դառնում ուկրայինացի և բելոռուս աշխատավորները: Այստեղ, Ուկրայինայի ՍՍՀ և Բելոռուսիայի ՍՍՀ հանդիսանում են անկախ հանրապետութիւններ, Խորհրդային Միութեան ազատ անդամներ:

Անդրկովկասի ՍՍՀ բաղկացած է հետևյալ ավտոնոմ հանրապետութիւններին. 1) Ադրբեջանի ՍՍՀ, վորի կազմի մեջ են մտնում՝ ա) Նախիջևանի ավտոնոմ ՍՍՀ և բ) Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ ՍՍՀ. 2) Հայաստանի ՍՍՀ. 3) Վրաստանի ՍՍՀ, վորի կազմի մեջ են մտնում՝ ա) Աբխազիայի ՍՍՀ, բ) Աջարստանի ՍՍՀ և գ) Հարավ-Ռսե-

Թիայի ավտոնոմ շրջան: Անհրաժեշտ է հիշատակել, վոր ցարական ժամանակներում կովկասում ազգերի միջև շարունակ տեղի էյին ունենում գժտություններ, ազգերը իրար մինչև իսկ բացարձակ կոտորում էյին (որինակ հայ-թուրքական կոտորածները և այլն): Նույնը կատարվեց նաև անգլիական ինտերվենցիայի ժամանակ, Անգլիկովկասում մենչևիկյան-բելոգվարդեյական բլոկի տիրապետության ժամանակ: Կրժում էյին իրար վրաստանն ու Հայաստանը, վրաստանն ու Ադրբեջանը, միմյանց շարունակ սպառնալով սլատերագմով: Մինչդեռ Սորհրդային Իշխանության որոք, այդ բոլոր ժողովուրդների աշխատավորները յեղբայրաբար աշխատակցում են Հանրապետության ընդհանուր տնտեսական և քաղաքական շինարարության մեջ: Հարկավոր էր միայն վճատել կալվածատերերին, կնյագներին, կուլակներին ու մենչևիկներին, անգլիական բուրժուազիայի ազենտներին,— և վոչ մի սլատճառ չկա ազգային փոխադարձ գժտությունների:

Ուզբեկների ու թուրքմենների հանրապետությունները լավագույն վկա յեն հանդիսանում, թե ինչպես կարող են միմյանց հետ հաշտ ապրել Յեվրոպայի ու Ասիայի աշխատավորները: Սորհրդային շինարարության այդ փորձը լավագույն դաս է հանդիսանում կապիտալիստական յերկրների բանավորների համար, առաջին հերթին Անգլիայի ու Ֆրանսիայի բանավորների համար՝ թե ինչպես կարելի յե և ինչպես պեաք է բարեփոխել պետական փոխհարաբերությունները իրենց յերկրների և Ասիայի, Աֆրիկայի ու աշխարհի ուրիշ մասերի այն զաղութների միջև, վորոնք իմպերիալիստների կողմից դարբերով կեղեքվում են: Բանավորները պետք է իրենց ձեռքը վերցնեն իշխանությունը, գուրս վճատեն շահագործողներին ու ընթանան Սորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ճանապարհով:

## ԽՍՀՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիական պատերազմից հետո, բլոկադան ու ինտերվենցիան վերջանալուց հետո, կապիտալիստական յերկրները ստիպված յեղան կամաց կամաց բանակցություններ սկսել հաղթական Հոկտեմբերյան Հեղափոխության կառավարության հետ: Բուրժուական կառավարությունները միառժամանակ համառ աճուրդ եյին անում: Նրանց հաջողվեց իրենց յերկրներում ձեռնասուն դարձնել Ս Ինտերնացիոնալի սոցիալ-դեմոկրատներին: Ուստի և նրանք մտածում եյին—չի՞ կարելի արդյոք բոյլշևիկներին-կոմունիստներին ևս գրավել ու ծառայության կանչել բուրժուազիայի մոտ: Այսպես եյին կարծում ու այսպես գործում բուրժուազիայի առաջնորդներից ավելի խորամանկները, ինչպես որինակ՝ Լլոյդ Զորջ: Մյուս պընդաճակատ կեղեքիչները շարունակում եյին պնդել, վոր պատերազմը ԽՍՀՄ դեմ շարունակվի: Մյուս կողմից՝ առևտրականներն ու արդյունաբերողները շահագրգռված եյին առևտրական հարաբերություններ սկսելու մեզ հետ: Արտժողկոմը պայքարում եր չափազանց ծանր ու բարդ պայմաններում: Սակայն վերջին հինգ վեց տարում ԽՍՀՄ իրեն համար արժանավոր դրություն նվաճեց միջազգային հարաբերությունների տեսակետից. —բացի Ամերիկայից, բոլոր խոշոր պետությունները ճանաչեցին Խորհրդային կառավարությունը: Թեև Ամերիկան ևս գործնականում մեզ հետ լայն առևտրական հարաբերությունների մեջ է:

Այդ հանգամանքը մեզ հնարավորություն տվեց զարգանելու մեր արտաքին առևտուրը և միառժամանակ ամրացրեց մեր դիրքը՝ պայքարելու հոգուտ հաշտության: Զգտելով հաշտության, դեմ լինելով պատերազմի, մենք սկսեցինք բանակցություններ կապիտալիստական յերկրների հետ և համաձայնության յեկանք այն չափով, ինչ չա-

վոր վոր դա ընդունելի յեր մեզ համար: Բայց միևնույն ժա-  
մանակ մենք զխտեյինք և չեյինք մոռացել, վոր բուրժույը  
մեր թշնամին է, և վոր մեր դաշնակիցը այդ բոլոր կապիտա-  
լիստական յերկրների բանվոր դասակարգն է, մեր դաշնա-  
կիցները—բոլոր ճնշված գաղութների բանվորներն ու գյու-  
ղացիներն են: Մենք զխտեյինք և չեյինք մոռացել, մենք լավ  
զխտենք և չենք մոռանում, վոր Հոկտեմբերյան հեղափո-  
խությունը—միայն սկիզբն է համաշխարհային մեծ հեղա-  
փոխության: Յեւ քանի վոր մեզ դեռ շրջապատում են  
խմբերիալիզմի ավազակները,—մեզ միշտ վտանգ է սպառ-  
նում, միշտ ել կարող են մեզ վրա հարձակվել: Թշնամին  
պատերազմ է ցանկանում: Դրան լավագույն ապացույց է  
հանդիսանում անգլիական ավազակների կազմակերպած  
հարձակումը մեր ներկայացուցչության վրա Պեկինում և  
Լոնդոնում: Ճորտատերերը զորքեր ուղարկեցին Չինաս-  
տան, պատուեցին առևտրական պայմանագիրը ԽՍՀՄ հետ  
և յեռանդով պատրաստում են նոր համաշխարհային սպան-  
դանոց: Գիշատիչների կազմակերպությանը մենք հակա-  
դրում ենք բանվորների, հեղափոխական գյուղացիության  
և Արևելքի աշխատավորության միջազգային միությունը:  
Ահա այդ միության մեջ է մեր ուժը: Թշնամին միշտ ել  
ցանկացել է ու ցանկանում է մեզ ո՛ր առաջ բնաջինջ  
անել, սակայն նա զգում է, վոր գտնվում է հրաբուխի  
վրա—կարող է պատահել վոր ընդմիշտ կուլ գնա՝ յեթե  
ձեռք բարձրացնի բանվորա - գյուղացիական պետության  
վրա: Դրա ամենավերջին ապացույցը՝ Վեննայի փողոցնե-  
րում բանվորական մասսաների զինված արյունահեղ կռիվն  
եր՝ ընդդեմ իրենց Ֆաշիստական կառավարության, վորը  
սակայն Ավստրիայի սոցիալ. դեմոկրատ. մենչևիկների  
ոգնությամբ կարողացավ արյան մեջ խեղդել բանվոր դա-  
սակարգի ապստամբությունը և ժամանակավորապես կըր-  
կին իր դիրքերում մնալ: Բայց այդ դրությունը շատ յերկար

չի տևելու և համաշխ. հեղափոխութեան հաղթանակը վերջ-  
նականապես կամրապնդի Մեծ Հոկտեմբերի նվաճումները:  
Ամբողջ աշխարհի Սորհրդային Սոցիալիստական Հանրա-  
պետութիւնների Միութիւնը, — ահա քաղաքի ու գյուղի աշ-  
խատավորների յեղբայրական աշխատակցութեան միակ ձևը:

### Ա Մ Փ Ո Փ Ո Ի Մ Ն

Հոկտեմբերյան հեղափոխութիւնից անցել է տասը  
տարի. յերբ մի յետադարձ հայացք ենք ձգում դեպի մեր  
անցած ճանապարհը, տեսնում ենք, Վոր ԽՍՀՄ և ամբողջ  
աշխարհի բանվորներն ու գյուղացիներն ունեն մի բան,  
Վորի համար կարելի յե նրանց շնորհավորել, Վորով նրանք  
կարող են հպարտանալ: Յերկրագնդի մեկ վեցերորդ մասը  
նվաճված է: Վոչնչացված են հին, ցարական-Ֆեոդալական  
ուժիմի վերջին ստվերները: Վատնված են կալվածատե-  
րերը, կապիտալիստներն ու նրանց կամակատարները:  
Բելոգվարդեյական հակահեղափոխութիւնը ջարդված է:  
Պարտիզանական խռովարար խմբերին վերջ է տրված:  
Լիկվիդացիայի յեն յենթարկված նաև ոտարյերկրյա իմ-  
պերիալիստների՝ մեր յերկիրը նվաճելու բոլոր փորձերը:  
Նրանց բոլորի ինտերվենցիոն գրոհները յետ են մղված:  
Պատերազմի ու քաղաքացիական կռվի հետևանքով կա-  
տարված ավերումներն ու քայքայումները վերականգնված  
են: Յերկրի արտադրողական ուժերը ծաղկում են: Զար-  
գանում է գյուղական տնտեսութիւնը, արտադրութիւնը,  
տրանսպորտը: Աճում է բյուջեն, ամրապնդվում են ֆի-  
նանսները: Նշանակալից չափով բարելավվում է գյուղա-  
ցու և բանվորի նյութական դրութիւնը: Ծաղկում է  
տնտեսութեան սոցիալիստական շինարարութիւնը — սո-  
ցիալիստական արդյունաբերութիւնը, գյուղատնտեսական,  
տնայնագործական և սպառողական կոոպերացիան, աշխա-  
տավարձի սոցիալիզացիան և կոոպերատիվային ծառայու-

թյունների սոցիալիզացիան: Մասսաների բարեկեցութեան ընդհանուր բարձրացման հետ միասին բարձրանում են նաև նրանց գիտակցությունն ու ակտիվությունը և կազմակերպվածությունը: Տասնյակ միլիոնավոր աշխատավորներ այժմ մասնակցում են յերկրում տարվող կենդանի կազմակերպչական, տնտեսական, քաղաքական և կուլտուրական աշխատանքին: Ամրապնդվում է պրոլետարական պետությունը: Ամրապնդվում է պրոլետարիատի ավանգարդ—կոմունիստական կուսակցությունը, լայնանում են նրա շարքերը: Խորհրդային ԽՍՀ-անությունն այժմ իրենից ներկայացնում է աշխարհում ամենաամուր իշխանությունը: Նա իրեն ուժին վայել միջազգային դիրք ունի:

Սակայն մենք կարո՞ղ ենք հենվել ձեռք բերված արդյունքների վրա և հանգիստ լինել: Վո՛չ: Մենք մեր շարքերից դեռևս լիովին ու վերջնականապես չենք վճռել մասնավոր առևտրականին ու կուլակին: Մեր յերկրում դեռևս կան միլիոնավոր մանր տնտեսություններ: Այդ տնտեսությունները, թեև աշխատանքային են, բայց և այնպես մասնավոր են, կոոպերացված չեն, միացված չեն մեկ ընդհանուր խոշոր սոցիալիստական ծաղկող տրնտեսութեան մեջ: Մենք դեռ շատ տգետ ենք, անգրագետ, խավար: Մենք մեզնից դեռևս չենք թոթափել անցյալի ստրկական ժառանգությունը—կրոնը և մեղանական ու ազգայնական ամեն տեսակի նախապաշարմունքներ: Մեզ մոտ դեռևս ուժեղ է բյուրոկրատիզմը, չափազանց շատ են ձգձգումները: Մենք դեռևս շատ, շատ բան պետք է սովորենք: Մենք շատ-շատ բաներից պետք է հրաժարվենք: Անցյալի ժառանգութեան հետ մեր կապը պետք է վերջնականապես խզենք, վորպեսզի ազատություն տանք ու ճանապարհ բացենք սոցիալիստական նոր կուլտուրային:

Մենք դեռ շատ բան ունենք նվաճելու: Բայց նվաճումներն առանց կուլի ձեռք չեն բերվում: Վորո՞նք են

մեր հետագա պայքարի ուղիները: Ի՞նչպիսի հեռանկարներ ունենք: Այդ հարցի պատասխանը մենք պետք է վորոնենք անցած տասնամյակի դասերում:

Առաջին դասը:—Կարո՞ղ եր արդյոք բանվոր դասակարգը վտարի կանգնել ու հաղթել՝ առանց կուսակցութեան ղեկավարութեան: Մենք մեր հաղթանակների ու գերմանական, վենգրիական և ուրիշ հեղափոխութեանների պարտութեանների փորձից գիտենք, վոր կուսակցութեանը հանդիսանում է հաղթանակի անհրաժեշտ կազմակերպիչը: Այնտեղ, ուր բոլշևիկյան կուսակցութեանը դեռ թույլ է յեղել, վո՛չ բավականաչափ փորձված,—այնտեղ բուրժուազիային և մենշևիկյան դավաճաններին հաջողվել և հարված հասցնել բանվոր դասակարգին ու պարտութեան կրել տալ: Հոկտեմբերը հաղթանակեց հին, կոիմներում կոփված և յերկաթյա դիսցիպլինա ունեցող՝ Լենինյան բոլշևիկյան կուսակցութեան ղեկավարութեամբ:

Յերկրորդ դասը:—Կարո՞ղ եր արդյոք բանվոր դասակարգը հաղթել առանց գյուղացիութեան աջակցութեան, և, ընդհակառակը:—Կարո՞ղ եր արդյոք գյուղացիութեանը ինքը միայն իր ուժերով ազատագրվել կալվածատիրութեան լծից: Վո՛չ, թե մեկը և թե մյուսը—անհնարին կլինեյին: Հոկտեմբերի փորձը ցույց է տալիս, վոր յերբ մենշևիկների, եսերների ու կադետների կուսակցութեաններ,—գյուղացիական ապստամբութեանները ճնշվում էին սլատօիչ եկապեղիցիաներով: Գյուղում կալվածատերերին վոչնչացնելու համար, գյուղացուն հող և ազատութեան տալու համար—անհրաժեշտ եր, վոր քաղաքում բանվոր դասակարգն իշխանութեանն իր ձեռքը վերցնել: Բանվոր դասակարգը կազմակերպեց և՛ իր հաղթանակը և՛ գյուղացիութեան հաղթանակը: Բայց նա այդ կարողացավ անել շնորհիվ այն հանգամանքի, վոր գյուղացիութեանը նրան աջակցեց: Գյուղացիութեանը արձագանք տվեց բանվոր

դասակարգի կոչին: Նա վատահասցավ պրոլետարիատի դե-  
կավարութեանը: Բանվորների դաշինքը աղքատ ու միջակ  
գյուղացիութեան հետ — հաղթանակեց քաղաքացիական պա-  
տերազմում: Նույն այդ դաշինքը և համերաշխ ջանքերը  
հսկայական նվաճումներ կատարեցին սոցիալիստական տրն-  
տեսութեան շինարարութեան ֆրոնտում:

Յերրորդ դասը: — Բայց արդյո՞ք բավական կլինեյին  
միայն մեր սեփական ուժերը՝ հաղթանակ տանելու հա-  
մար: Վոչ, Հոկտեմբերյան հեղափոխութեան սկզբում շատ  
հեշտ կլինեք իմպերիալիստական պետութեաննների ուղ-  
մական յեռանդուն հարձակումներով ապստամբութեանը  
ճնշել: Վերհիշենք, վոր հին ցարական բանակը ֆրոնտից  
փախել էր, իսկ նորը՝ բանվորա-գյուղացիական բանակը  
դեռ ևս կազմված չէր: Իսկ ի՞նչը մեզ փրկեց դժբախ-  
տութեանից: Պարտութեանից մեզ փրկեց միջազգային  
պրոլետարիատի համերաշխութեանը: Հուզումները գերմա-  
նական բանվորների շրջաններում, «Գործողութեան Պոր-  
հուրդների» կազմակերպումը Անգլիայում, հակաինտեր-  
վենցիոն կամսլանիան Ֆրանսիայում, — այս բոլորը նսլա-  
տեցին մեր տերրիտորիայի վրա հանած ոտարյերկըյա բա-  
նակների քայքայմանը: Մեր թշնամիները ստիպված յե-  
ղան յետ կանչել իրենց բանակը և նավատորմիդը: Արև-  
մուտքի կոմունիստական կուսակցութեաննների և պրոլե-  
տարական մասսաների ակտիվ աջակցութեանը մեզ մեծ  
ոգնութեան հասցրեց լեհական շլյախստայի դեմ մղվող պա-  
տերազմի ժամանակ: Մյուս կողմից, շնորհիվ Կոմիստերնի  
և նրա սեկցիանների աշխատանքի, իմպերիալիստական պե-  
տութեանները զաղութային յերկրներում պետք է միառ-  
ժամանակ զբաղվեյին իրենց դիրքերը ամրացնելով: Պայ-  
քարը Մերձավոր Արևելքի ժողովուրդների (Տաճկաստանի,  
արաբների, Պարսկաստանի), սլայքարը Մարրոկոյում, ու-  
ժեղ հուզումները, գործադուլներն ու ապստամբութեան-

ները Հնդկաստանում, ազգային-ազատագրական շարժումները Հարավային Ամերիկայում, Կորեյայում, ապստամբութիւնը Ճապոնում, — այս բոլորը ամպրոպներ են՝ ընդհանուր փոթորկից առաջ: Արեւելքի այս բոլոր շարժումների մեջ, առաջին շարքերումն իր հատուկ տեղն ունի Չինաստանում ծավալվող հսկայական նշանակութիւն ունեցող հեղափոխութիւնը: Պետք է ուղղակի ասել, — հեղափոխութիւնը Չինաստանում, ազգային հեղափոխական շարժումները ուրիշ գաղութներում և բանվոր դասակարգի մասսայական շարժումները իրենց իմպերալիստական կառավարութիւնների դեմ, — ահա ինչն է հանդիսացել ու հանդիսանում է մեր անհրաժեշտ ու ամենահուսալի հենարանը՝ համաշխարհային հեղափոխութեան հաղթանակի համար մղվող սլայքարում:

Մոտենում է յերկու ուժերի նոր խոշոր բաղխումների ժամը. բաղխումներ՝ մի կողմից, համաշխարհային իմպերիալիզմի, և մյուս կողմից՝ Կոմինտերնի դրոշակի տակ կազմակերպված բանվորների ու ճորտերի ուժերի միջև: Շատ նշանակալից են անգլիական կեղեքիչ-կոնսերվատորների քայլերը, նրանց վարքը: Նրանք փաստորեն արդեն պատերազմ են սկսել շինական ժողովրդի դեմ և պատերազմ են պատրաստում ԽՍՀՄ դեմ: Մեր բոլոր ուժերը պետք է նվիրվեն Խորհրդային Իշխանութեան պաշտպանութեանը, բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի զորութեանն ու յերկրի ինքնապաշտպանութեան գործը ապահովելուն: Մեր յերկրի բոլոր ուժերը պետք է համախմբված լինեն, զոդված և՛ կարիքի դեպքում՝ միանգամայն պատրաստ:

Միջազգային պրոլետարիատի և գաղութային աշխատավորութեան հետ սերտ դաշինք կնքած՝ ընդառաջ գնանք նոր վտանգին: Աշխատանքի հաղթանակը կապիտալի վրա, վրձնական ու վերջնական հաղթանակը — անխուսափելի յե: Մեր Հոկտեմբերից — դեպի Համաշխարհային Հոկտեմբեր:

**ԽՈՐՀՐԴ. ՍՈՑ. ՀԱՆ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ  
ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

— Հայկական սեկցիա —

Մասկովա, Նիկոլսկի փող. № 10

**Լ Ո Ւ Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ**


**Գ Ի Ն Ը**

Լենինի ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ	15 կ.
Լենինի ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԺՈՂ. ԼՈՒՍ. ՄԱՍԻՆ. Կազմեց Ն. Կրուսկայա	20 կ.
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒՂԻՆ և ԲԱՆ.-ԳՅՈՒՂ. ԴԱՇԻՆՔԸ, — Ն. Բուխարին	1 ր. 25 կ.
ՀԱՄ. ԿՈՄ. ԿՈՒՍ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, Վ. Վոլոսկի	1 ր. 50 կ.
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ, Ի. Ստալին	50 կ.
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ, Ի. Ստալին (272 էջ)	1 ր. 60 կ.
1905 թ. ՄԵՐ I ԲԱՆ.-ԳՅՈՒՂ. Հեղափոխությունները, Ի. Ֆլերովսկի	70 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, Ն. Ելիզարով	30 կ.
ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍ. XV ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ, — Գ. Ռեկկին	20 կ.
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ 1905-ին, — Ա. Կարինյան	70 կ.
ԻՆՉՊԵՍ ԱՇԽՈՒԺԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԱՑՈՒՄՆԵՐԸ, — Զ. Լավրենսո	30 կ.
«Ի. ՍՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.)	7 կ.
ԿԼԱՐԱ ՑԵՏԿԻՆ (կենսագր.), Զ. Բոյարսկայա	15 կ.
ԽՍՀՄ և ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ, Ա. Արշարունի	30 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ (Կոմս. հմր.), ըստ Վիլհամսկու, պրակ I,	50 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ " " " պրակ II,	50 կ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ " " " պրակ III,	50 կ.
ՊԱՏԵՐԱԶՄ ՉԵՆՔ ՈՒԶՈՒՄ, ԲԱՅՑ ԴԻՄԱԴՐ. ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ	10 կ.
ԻՆՉՈՎ Ե ՈՒԺԵՂ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ	15 կ.
ՄԱՐԴՈՒ և ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ, — Դ. Ազոլ	35 կ.
ԻՆՉՊԵՍ Ե ԱՌԱՋ. և ԶԱՐԳ. ԿՅԱՆՔԸ ՅԵՐԿԻՐԻ ՎՐԱ, Մ. Գրեմյացկի	50 կ.
ԻՆՉՊԵՍ Ե ՍԱՐՔՎԱԾ ՏԻՑԵԶԵՐՔԸ, Ակադեմիկոս Դ. Գրավե	50 կ.
ՎՈՐՈՏ, ԿԱՅԾԱԿ և ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, Մ. Գրեմյացկի	40 կ.
ԱՐԵՎԸ, ՆՐԱ ՎՈՐԴԻՆԵՐԸ և ԹՈՌՆԵՐԸ, — Բ. Սեմեյկին	40 կ.
ՄԱՐԴՈՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԹՇՆԱՄԻՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ.	15 կ.
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, — Վ. Յազվիցկի	15 կ.
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՑԵ ԳՅՈՒՂ. ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹ. ԱՆՑԿԱՑՆԵԼ	20 կ.
ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ և ՍՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ, — Վ. Դմիտրիև	15 կ.
ԳԵՂ ԿԱՆԳՆԻ—ԳԵՐԱՆ ԿԵՆՏՐԻ (կոոպերացիան գյուղում), Լ. Ի.	30 կ.
ԱՍՏՄՈՒ ԿԱՄՔԸ, ԹԵ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, — Ի. Պ.	20 կ.
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹ. ԱՅԲՈՒԲԵՆԸ	30 կ.
ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՐԱՇՏԻ ԺԱՄԱՆԱԿ, — Պ. Վլասով,	40 կ.
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ, — Մ. Լիվինսկի	20 կ.
ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՎԱՆԴ ԿԵՆԴԱՆՈՒՆ, — Ա. Սկոմորոսով	17 կ.
ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	17 կ.
ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԿԱԹՆԱՌԱՏ ԿՈՎ, — Բ. Սկոմորոսով	12 կ.

Թե Ինքնուրույն Գերմ. ՍՏԻՊԵՑ, ՎՈՐ ԿՈՎԸ ՏԱՐԻՆ 2 ԱՆԳԱՄ ԾՆԻ.	15 կ
ԽՈՉԸ ԳՅՈՒՂԱՑՈՒ ԿԵՐԱԿՐՈՂՆ Ե, — ԼԻԽԱՆԻ	18 կ.
ՄՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ, — Գ. Սպեքտակուլ	16 կ.
ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, — Բ. Գինաբուրգ	30 կ.
ԳՅՈՒՂԱՑ. ՊԱՀԱՆՋՆԵՐԸ և ԽՈՐՀՐԴ. ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐՆԵՐԸ	12 կ.
ԳԵՂՋԿՈՒՀԻՆ և ՅԵՐԵՒԱՆԵՐԸ	25 կ.
ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 1 ԱՍՏԻՃ. ԴՊՐՈՑՈՒՄ, Բ. Ժալոբոնկով	65 կ.
ՄԵԹՈԴԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ (ռուսացի ճանաչող համար)	70 կ.
ՊԱՏԱՆԻ ՊԻՆՆԵՐ (ժողովածու)	60 կ.
ՊԻՆՆԵՐ, ՊԱՀՊԱՆԻՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԴ, — ՅԵ. Ռադիս	10 կ.
ՊԻՆՆԵՐ, ՀԵՏԵՎԻՐ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՆ	15 կ.
ԼԻՆԻՆՔ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ, — Ն. Ֆայլիկեր. մաս I,	40 կ.
ԼԻՆԻՆՔ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ „ մաս II,	45 կ.
ՔՈՍ, ԻՆԶՊԵՍ ԿՈՎԵԼ ՆՐԱ ԴԵՄ, — ԲՃ. Նադեժդին	20 կ.
ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, — Վ. Բրոններ	25 կ.
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ և ԴՊՐՈՑԸ	40 կ.
ՄԵՐ ԱՎԱԳ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԸ — ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ	20 կ.
ԹԵ ԻՆԶՊԵՍ ՍԱՔՈՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԴԱՐՁԱՎ — Կրավչենկո	35 կ.
ԿԱՐՄՐԱՄՈՐԹՆԵՐԸ, — Պ. Խլիբնիկով	45 կ.
ՅԵՐԿԻՒ ԽՈՐՔԵՐՈՒՄ, — Ա. Կուպրին	18 կ.
ՔԻՄԻԿՈՍ ԿՈՒՉԿԱՆ, — Պ. Ուլովից	28 կ.
ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅԵՐՈՊՂԱՆՈՎ, — Պ. Ուլովից	22 կ.
ՄՈՐԱԿԻ և ԱՐՋԻ ՄԱՍԻՆ (հեքիաթ) — Դ. Մամին-Սիբիրյակ	15 կ.
ԻՆԶՊ. ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿՆԻԿՆԵՐԸ և ԻՆԶ ԱՐԵՑ ԱՐՃԻՃԵ ԶԻՆՎՈՐԸ	16 կ.
ՄԻՆԻՍՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ, — Ֆր. Ֆոկս	18 կ.
ԱՆՋՆՎԵՐ ՏՂԱՆ, — Եդմանդո Դամիչի	12 կ.
ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ, — Ուլյա	12 կ.
ԹՈՉՈՒՆՆԵՐ (գունատիպ ալբոմ յերեխաների համար)	25 կ.
Հ. ՊԱՐՈՆՅԱՆ (ընտիր յերկեր), պրակ առաջին	40 կ.
» » » » » յերկրորդ	35 կ.
» » » » » յերրորդ	35 կ.
ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂԸ, ՄԱՐԴԸ, — Մաքսիմ Գորկի	15 կ.
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ, — Ա. Սեբաստիանովիչ	45 կ.
ՄՐԻԿԱՀԱՎԸ ՅԵՎ ՈՒՐԻՇ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ, — Մաքսիմ Գորկի	15 կ.
ԱՐՏԱՍՈՎՈՐԸ, — Մաքսիմ Գորկի	40 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐ. ՀԱՄԱՐ

- ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՉՄ (քրիսթոմատիա, 15 մամուլ)
- ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ
- ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՌԳԻՐՔ (15 մամուլ)
- ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ
- ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ (նկարազարդ), 15 գրքույկ.
- ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՌՈՒՍ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐՈՂՆԵՐԻՑ, 15 գրքույկ.
- ՅԵՎ ՈՒՐԻՇ ԳՐՔԵՐ (պահանջեցեք մեր գրացուցակը):





26353

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

[314.]



---

---

И. НОВАКОВСКИЙ

**Десять лет борьбы  
и строительства.**

---

---

На армянском яз.

---

---

Центральное Издательство Народов Союза С. С. Р.  
Москва, Никольская, 10.